



ՎԵՀԱ.ՓՈ.Ո. ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՒՂԵԿՈՐՈՒԹԻՒՆԸ  
Կ. ՊՈԼՍԻՑ—Ռ. ԷջՄԻԱԾԻՆ.

Հ Ա Մ Ա Ռ Ո Տ Ն Կ Ա Ր Ա Գ Ի Ք.

Ա.

Հաստիրակների ժամանումն Կ. Պոլիս եւ մատուցանելը Վեհապետին հայրապետին հայրապետական Խաչ Գաւազանը—Վեհապետին հրաժետի բարոգն ու Ռ. Պատարազը,

Կաթուղիկոսական հրաւիրակներ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Սաթունեան, Տ. Աշոտ եպիսկոպոս Շախեան, Տ. Մեսրոպ և Տ. Բարդէն վարդապետները մայիսի 13-ին Ստամբուլ շոգենաւով հասնում են Կ. Պոլիս և իջևանում Սպլանդիդ ազգային հիւրանոցը։ Մայիսի 18-ին Պերայի և Երոսրդութեան եկեղեցում տեղի է ունենում հանդիսաւոր պատարագ Վեհափառ Հայրապետի ներկայութեամբ։ Պատարագին էր Գարեգին արքեպիսկոպոսը։ Ժողովրդի հոծ բազմութիւնը լցրել էր եկեղեցին։ Վեհափառ Հայրապետի համար պատրաստուած էր ոսկեզօծ գեղեցիկ կաթուղիկէ—ամպհովանի։ Որոշեալ տեղում ժամերգութիւնը ընդմիջելով Վեհափառ Հայրապետը տուածնորդւում է սեղան, որի ժամանակ գալիքներն երգում են «Էջմիածին ի Հօրէ» շարականը։ Ապա Գարեգին արքեպիսկոպոսը դառնալով դէպի ժողովուրդը մի համառօտ տեսութիւն արաւ հայ ազգի ու եկեղեցու կրած տառապանքների մասին, որից յետոյ ոյժ ու կարողութիւն մաղթեց Վեհափառ Հայրապետին, որպէսզի կարողանայ հայ ազգի իզձերը կատարել և պաշտպանել ազգը ու եկեղեցին ներքին ու արտաքին ամեն տեսակ յարձակումներից։ Աւարտելով իր խօսքը Գարեգին արքեպիսկոպոսը յանձնում է Վեհին Ռ. Լուսաւորչի Աթոռի արժանաւոր գահակալին Հայրապետական գաւազանը։ Ապա Աշոտ եպիսկոպոսը մի քանի քարեմաղթութիւններից յետոյ յանձնում է Վեհին Հայրապետական խաչը։

Այս արարողութիւնից յետոյ խօսեց Վեհափառ Հայրապետը պատկերացնելով 1800 տարիներից ի վեր հոյ ազգի կրած տառապանքները:

Այս շնորհաւորութիւնները, առաց նորին Վեհափառութիւնը, — կը պարտաւորեն մեզ որ դիտնանք մեր պարտականութիւնը, Քրիստոնէական կեանքին մէջ Հայ Եկեղեցին բազմաթիւ հալածանքներու կուրծքը տուաւ և ծանր բազմաներու հանգէալ գոնսաւցաւ, առկայն կարողացաւ միտհանել իր գոյութիւնը և ալ, ոյս ամենուն առջև, որոնք կուգան լեզուն լոեցնել և արգելըներ գնել մեր վրայ, պիտի աշխատիմ, որ առկէ ետքն ալ Հայաստանեայց Եկեղեցին կանգուն ըլլայ և զերծ մնայ ամեն հալածանքէ: Այսելքէն, արեմուտքէն, հիւսիսէն և հարաւէն փշող ամեն հովերու ազգեցաւթեան տակ այս ազգը ընկճուեցաւ, կատարուեցաւ, առկայն Եկեղեցին կորով ներշնչեց, և այսօր հոյ ազգն ալ կանգուն մնացած է: Այսօր Հայաստանեայց Եկեղեցին արիւնլուայ վիճակի մը մէջ է, սակայն կը հաւատամ՝ և գուք ալ հաւատացէք, որ պիտի ապրի միշտ Հայ Եկեղեցին: Այսօր հայ ազգը խաչի վրայ պրկուած մարմին մը գարձեր է, սակայն գարձեալ այդ խաչն է, որ պիտի ներշնչէ: Տգիտութիւնը կործանում ըսել է: պէտք է ջանանք որ զարգանանք, միտքերնիս լեցնենք, որովհետեւ մտքի ուսումն է որ կերաչխաւորէ կեանքը, Երբ միտքը բարձրացած և սիրու ազնուացած է, շատ բան կարող ենք ընել: Այսօր կը հրաւիրուիմ Էջմիածնի Մայր Աթոռը իբր Հայրապետ: Ինձի բաժին ինկած պարտականութիւնը կատարելու համար յանդգնութիւն ունեցայ ընդունելու կատարուած ընտրութիւնը, սակայն յոյս ունէի որ Էջմիածնի միաբանութիւնը ձեռնտու պիտի գտնուի ինձ և այս պատճառաւ ընդունեցի: Յուսով եմ, որ թէ միաբանութեան և թէ հայ ազգին հեռուէն կամ մօտէն օգնութեամբը պիտի կարողանամ: Հայ ազգին իղձերը իրագործել, Պիտի ջանամ՝ ամեն պարագայի մէջ վարչական բոլոր դործերուն մէջ արգարութիւնը գործադրել: Անիրաւութիւնը դատապարտած ըլլարուս համար էր, որ աքսորուե-

ցայս սամկային գարձեալ արդարութիւնը պիտի գործադրեմ։  
Աստուած անսասան պահէ Հայ եկեղեցին։

Երբ Նորին Սրբութիւնը վերջացրեց իր խօսքը բարե-  
մազթութիւններով, առաջնորդուեցաւ իր տեղը և բոլոր  
եկեղեցականները կարգով, բատ աւանդութեան, մօտեցան  
ու համբուրեցին Ա. Հայրապետի տջը, Պատարագից յե-  
տոյ հոգեհանգիստ կատարուեցաւ հանգույեալ Հայուապե-  
տի միշտակին, ոսից յետոյ Նորին Սրբութիւնը շատա-  
տուած հոգեորական ու աշխարհական հրաւիրեալներով  
առաջնորդում է Սպլանդիդ հիւրանոցը, ուր տեղի է ունե-  
նում պաշտօնական հացկերոյթը Յաշի ժամանակ Նորին  
վեհափառութիւնը առաջարկում է թագաւոր Կայուեր,  
Սոլժանի և Շահի կենացները, Սամաւենեան արքեպիսկո-  
պոսը առաջարկում է վեհափառ Հայրապետի կենացը։  
ի միջի այլ կենացների գործուր թորգուեանը առաջարկում  
է Ռուսահայերի և թիւրքահայերի կենացը։

---

Հինգշտթի մայիսի 21ին Նորին Սրբութիւնը հանգիւ-  
սաւորապէս շրջապատուած հրաւիրակ ու այլ բարձրաստիւ-  
ճան հոգեորականներով, իջնում է ո. Երրորդութեան եկե-  
ղեցին, ուր մատուցանում է իր հրաժեշտի վերջին պա-  
տարագը։

Պատարագին սպասաւորում էին Գարեգին արքեպիս-  
կոպոս Սամաւենեանը, Մազաքիա եպիսկոպոս Տէրունեանը  
ու չորս վարդապետներ։

Նորին վեհափառութիւնը պատարագի ժամանակ հրա-  
ժեշտի հետեւեալ քարոզն է խօսում, ընաբան վերցնելով,  
«Որ դհոգի Քրիստոսի ոչ ունի, նա չէ նորա» խօսքերը։

«Հաւատացեալին աչքը պէտք է յառած ըլլայ գէպի  
Մեծ Վարդապետին կեանքն, որ երեցաւ աշխարհի վրայ,  
տարաւ յաղթանակը մտքերու վրայ, պահ մը սարսեցան  
Պաղեստինի հոգերը, պահ մը ամենէն ծանր հիւնիգները  
սարսւռ մը զգացին իրենց մարմին մէջ և թօթափեցին  
իրենց ախտը, այս Վարդապետին կեանքն էր, որուն հա-

մար կալինարկէր առաքեալը, կեանք մը ահճնուրացութեան, մարդկային ազգին փրկութեան համար։ Այս կեանքն համակ սէր կը բուրէ։ Ուրեմն, հայոց ժողովաւրդ, մենք այս տաճարին մէջ յանուն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի պէտք է մեր մէջ քրիստոնէական հոգին ամենաբարձր կերպով պահենք։ Քրիստոնէական կեանքի այս յատկութիւնները՝ անճնուրացութիւն, սէր՝ այն նուրբական սանդուխներն են, որով մարդ կը դիմէ դէպի իր նպատակը, իր վախճանը։ Աշխարհի մէջ մարդ նետուած չէ իր կեանքը աննպատակ գործելու, այս կեանքը աստուածահաճոյ պէտք է ըլլայ։ Այդ նպատակը Աստուծոյ՝ մարդուն տուած շնորհին ու մտաւորական կարողութեանց փայլն ու յառաջադիմութիւնն է։ Մեր նպատակին կը ծառայենք այն ատեն, երբ մարդ աշխարհի վրայ կը զգայ բարութիւն ու կը գործէ, կիմանայ արդարութիւն ու կը քարոզէ։ Յիսուս իր կեանքը տուաւ այդ նպատակին, Մեր նպատակին ծառայած կը լանք, երբ ողորմութեան ու բարութեան գործերով ուռացնենք մեր կեանքը, մանաւանդ այն պարագաներու մէջ, ուր ողբ ու կօծի, սովի, չարագործներու աւարին և արիւնաթաթաւ վիճակի մէջ ոգնութիւնն կազազակեն մեզ, մեր կոչումը կատարած պիտի ըլլանք ձեռընտու ըլլալով անոնց, սպեղանի դնելով վէրքերուն. և այս պէս միայն արիւնաքա: սրտեր կենդանութիւն կառնեն։ Մենք ալ մեր փրկութիւնը առաքեալին ըսածին պէս քրիստոնէական կեանքով կրնանք ձեռք բերել Բարձր ապրինք, վսեմ ապրինք։ Թերեւս վերջին անգամն է, որ Թուրքիոյ մէջ քրիստոնէական բեմին վրայ քանի մը խօսք կուղղեմ, հայոց ժողովաւրդ, գիտնանք մեր կոչումը, մեր պարտականութիւնը. այսպէս ընթանանք աշխարհի կեանքի մէջ։

«Մենք պարտինք այնպիսի խոհեմ, շրջահայեաց ապրիլ, որ նոյնիսկ անհետացնենք մեր գոյութեան սպառնացող վտանգները. այս կեանքը կը քարոզեմ Երուսաղէմէն մեկնելէս մինչև այս վայրկեանը. շրջահայեցութիւն, ծայրայեղութիւններէ հեռի, խոհեմ, օրինապահ կեանք։ Կը փափաքիմ որ կեանքի այս եղանակը պահէ ամեն հայ։

Մեր շուրջը շատ ոյժեր շրջապատած են, այդ ոյժերը մեր կեանքին թշնամիներն են, կուզեն այս ցեղին իմացական ոյժը, կարողութիւնը ցամքեցներ։ Հեռաբ մենէ յուսահատութիւնը։ Դարեր կը նային մեր վրայ, և այդ գարերուն մէջ որչափ տառապեցանք, բաւական է լիշել հօթներորդ դարու, Զինդիզ—խանի, Արփասլանի, Լէնքթիմուրի վայրագ հալածանքները, գահիճներ մեր եկեղեցին հիմերը քանդել կուզենն, մեր եկեղեցին հետ մեր կեանքն այլափոխել կուզենն, հայկական անարատ կեանքով մնաց Հայ Շեմը, անարատ կը հասնի մեր ձեռքը, անարատ յանձնենք մեր յաջորդներուն։ Վրէժինդրութիւնը, մոլեռանդութիւնը մեր վրայ շրերենք, ասնվ միայն մեր դոյութիւնը կը նայ երաշխաւորութիւն։ Կը մազթեմ, որ Աստուած անփորձ պահէ ազգը։ Հայաստանեայց եկեղեցին առագաստը ծուէն ծուէն պատառեցաւ, անոր թռչնարանը չի կրնար պարփակել հովը, որպէսզի նաւը յառաջանայ, ջանանք կարկտել այս ծուէններն ու ամրացնել առագաստը։ Յօյս և հաւատք երբ կենդանի են մեր մէջ, պիտի ապրինք։ Աստուած աշխարհի խաղաղութիւն շնորհէ, դարձ կամ բարձ շնորհէ բանապետներուն։ Մնաք բարեաւ, մնաք խաղաղութեամբ։ Կերթամ միևնոյն ազգին քով՝ նուիրական պաշտօն մը կատարելու»։

Բ.

Վեճափառ Հայրապետի հրաժեօք Օսմ. Օգոստ. Սուլթանին. Վեցին մասնակցութիւնը Հայոց ազգ, երեսի, ժողովին. Վեճափառ Կարուղիկոսի մեկնումը Կ. Պոլսից։

Նախ քան Պետերբուրգ մեկնելը նորին Սրբութիւնը ցանկացաւ այցելել Սուլթանին և խնդրել, որ անպակաս անէ իր բարեացակամ հովանին Հայ ազգի վրայից։ Մայիսի 21-ին նորին Սրբութիւնը ուղեկցութեամբ կաթուզիկոսական հրաւիրակներ՝ Գարեգին արքեպիսկոպոսի, Աշոտ եպիսկոպոսի, Մեսրոպ և Բարդէն վարդապետների, կրօնական ժողովի առենապետ՝ Հմայեակ եպիսկոպոս Դիմաքսեանի, ազգային ժողովի առենապետ՝ Մինաս Զերազի, քաղաքական ժողովի առենապետ՝ Ստեփան Գալրա-

յեանի և պատրիարքարանի գործակատար՝ Գամէր Շիրին-  
եանի դիմեց Դոլմա-Բախչէի պալատը և աւագ քարտու-  
ղար Խալիդ Զիա բէյի միջոցաւ խնդրեց ներկայանաւ  
Սուլթան Մուհամմէդ Վ-ին։

Իզմիրլեանի այցելութիւնը պալատ՝ անակնկալ էր։  
Սուլթանը որոշել էր ընդունել Վեհափառ Հայրապետին  
շաբաթ օրը մեծ հանդիսաւորութեամբ։ Բայց որովհետեւ  
նորին Սրբութիւնը այն օրն և եթ պէտք է մէկնէր մայ-  
րաքաղաքից գէպի Պետերբուրգ, խնդրեց Սուլթանի նե-  
րազամութիւնը Խալիդ Զիա բէյ խակոյն հազորդեց Սուլ-  
թանին եղելութիւնը և եկաւ յայտնելու, որ Մուհամմէդ  
Վ-ը պատրաստ է ընդունել ունկնդրութեան ամենայն  
Հայոց Վեհափառ Կաթողիկոսին։ Ապա նորին Սրբութիւնը  
իր հետեւորդներով առաջնորդուեցաւ ընդունելութեան  
սրահը, ուր սպասում էր Սուլթանը ժպտուն ու ստքի վրայ։  
Նորին Վեհափառութիւնը անձամբ կարդաց թուրքե-  
րէն լեզուով հետեւեալ ուղերձը։

### Զերդ Մեծութիւն.

«Թէպէտ և անարժան, ես ընտրուեցի Հայերի կրօնա-  
կան կենտրոնին էջմիածնի կաթուղիկոս ընդհանուր հայ-  
ազգի հաւանութեամբ։ Իմ ընտրութիւնս հաստատուեց  
սահմանուած կանոնների համաձայն, Ստիպուած լինելով  
գնալ Ռուսաստան, էջմիածնին, ուր գտնւում է կաթողի-  
կոսական աթոռը և գահը, ես ինձ երջանիկ եմ համա-  
րում։ Զեր կայսերական Մեծութեան կողմից ընդունուելուս  
համար Սահմանադրական օրէնքի բարձր տրամադրութիւն-  
ները կատարելապէս գործադրուեցին, նոյնպէս և ոյժ  
ստացաւ սահմանադրական րէժիմը օսմանեան կայսրու-  
թեան մէջ։ Եւ ուրեմն մենք հաստատուն յոյս ունինք և  
համոզուած ենք, որ հայկական համայնքի բոլոր օսմա-  
նեան անդամները, որոնք յայտնի են իրանց աւանդական  
հաւատարմութեամբ և անկեղծ բարեկամութեամբ առ  
կայսերական գահը և օսմանեան կառավարութիւնը,  
համաձայն կայսերական ցանկութեան, վստահ իրանց  
կեանքի, պատուի և գոյքի ապահովութեան վրայ, այսու-

Հետեւ կապրեն բարեկեցութեան և երջանկութեան մէջ։

«Մենք շնորհակալութիւն ենք յայտնում Զեր Մեծութեան այն շնորհի համար, որին ապացոյց տռեց նա արագ և հաստատ միջոցներ ձեռք առնելով, խափանելու համար տարածումը հայաբնակ և ուրիշ վայրերում այն նորագոյն ողբերգական դէպքերի, որոնք տեղի ունեցան Ադանայում և Հալէպում, և արգելելու նրանց կրկնութիւնները օսմանեան կայորութեան մէջ։

«Աղջում ենք Աստծուն, որ նա աջողութիւն տայ օսմանեան օրինական կառավարութեան, որ նա պահպանէ Զեր Մեծութեան իմանկազին առողջութիւնը և հաստատուն պահէ կայսերական գոհնը։

Սուլթան Մուհամմէդ V, ինչպէս ուղերձի ընթերցուցումը ընդմիջելով, այնպէս և ընթերցումը վերջացնելուց յետոյ քանիցս ասաց.

— «Մեծապէս գոհ եմ Զեր արտայայտած դդացմունքների համար, կարող էք միանդամայն հաւատացած լինել այդ մասին, որից յետոյ Սուլթանը նստելով հրաւիրեց նստել նորին Վեհափառութեանը և իր հետեւորդներին։

Սուլթանը ասաց հետեւալը.

«Ո՞մ ամենասրտագին ցանկութիւնն է, որ օսմանեան բոլոր ժողովուրդները, առանց կրօնի ու ցեղի խորութեան, ապրեն եղբայրաբար և վայելեն հաւասար եղբայրութիւն։ Ադանայում ու շրջակայքում տեղի ունեցող աղէտները խորապէս վշտացրել են իմ սիրտը։ Այս բանը յայտնի է և իրան՝ Աստծուն, ես խօսել եմ առանձնապէս և մեծ վեղիրի հետ, որպէսզի ձեռք առնուեն բոլոր միջոցները՝ արդելելու համար նմանօրինակ ցաւագին աղէտների կրկը։ Նութիւնը։ Գարձեալ կրկնում եմ, իմ ամենաջերմ ցանկութիւնն է, որ բոլոր օսմանցիներն անխափիր աշխատեն երկրի բարօրութեան ու զարգացման համար, մի սիրտ և մի հոգի։ Անկեղծօրէն եմ առում այս, և պէտք է որ հոգեսր պետերն էլ միևնոյն ոգով յորդորեն իրանց ժողովուրդներին։

Նորին Սրբութիւնը պատասխանեց, որ իրանց նուի-

րական պարտականութիւնն է այդ, որից երբէք չհն թերացել, Այսուհետեւ խորին շնորհակալութիւն յայտնելով վերկացու և բարեմաղթութիւններ կատարեց կայսեր երկարակեցութեան և օմանեան հայլենիքի քաղդաւորութեան համար Սուլթանը, որնոյնպէս վեր էր կացել մաղթանքի ժամանակ, վերջին անգամ՝ իր գոհունակութիւնը յայտնեց Նորին Վեհափառութեանը Հրաժեշտ առնելով Սուլթանից, Նորին Սրբութիւնը անցաւ առաջին քարտուղարի սենեակը, որտեղ մի քանի րոպէ խօսակցելով Խալիդ Զիա բէյի հետ, Նորին Վեհափառութիւնը հրաժեշտ առաւ և իր հետեւորդներով, նոյն հանդիսաւորութեամբ, գիմեց Բ. Դուռը Հիլմի Փաշայի մօտ:

Կաթուղիկոսական թափորը զինուորական պատիւներով ընդունուեցաւ և առաջնորդուեցաւ մինխատր-նախագահի մօտ: Հիլմի Փաշան առանձին յարգանքով ու սիրալիբութեամբ ընդունեց Նորին Սրբութեանը:

Վեհափառ Հայրապետը յայտնեց, որ ընտրուած լինելով համայն հայերի հոգեոր գերագոյն պետ և իր պաշտօնը հաստատուած լինելով Ռուսիոյ Ցարից, եկել է հրաժեշտ տալու:

Մեծ Վէզիրը շնորհաւորելով Նորին Սրբութեան բարձր պաշտօնը, ասաց հետեւալը:

Օսմանեան կառավարութիւնը այն համոզմունքն ունի, որ հայերը սրբնում են իրանց քաղդաւորութիւնը և ըսրգաւաճումը օմանեան երկրի բարօրութեան և զարգացման մէջ ու նրանց միակ նպատակն է առաջադիմել տռետրի, արհեստների և երկրագործութեան ճիւղերում, Նորին Սրբութիւնը պատասխանեց.

«Հայերը շարունակ ձգտել են կեանքի, պատուի, գոյքի ապահովութեան ու միմիայն գորան:—Անկեղծօրէն հաւատացնում եմ Չեղ, աւելացրեց Հիլմի Փաշան, որ այդ մասին մենք կասկած անգամ չունինք: Գալով Ադանայի ցաւալի գէպքերին, ինչպէս պալատում և սենատում յայտարարեցի և այժմ էլ կրկնում եմ, կառավարութիւնը մի կողմից ձեռք է առել հարկաւոր եղած բոլոր միջոց-

ները՝ արդելելու համար նմանօրինակ գեղքերի կրկնութիւնը, միւս կողմից՝ վճռել է պատժել յանցաւորներին օրէնքի ամբողջ խոտութեամբ։ Շուտով կտեսնէք ու կը համոզուեք։

Նորին Սրբութիւնը հրաժեշտ տալսվ, նոյն հանդիսաւորութեամբ հեռացաւ և այցելեց արտաքին գործերի մինիստր Ծիփաթ Փաշային, բայց չը գտնելով նրան իր պաշտօնատանը, ընդունուեց խորհրդական Ազարեան էշ ֆէնտու կողմից։

Մայիսի 28-ին Նորին Սրբութիւնը վերջին անգամ մասնակցեց ազգային երեսփոխանական ժողովի նիստին, որտեղ ի միջի այլոց զեկուցւում էր Երուսաղէմի բողըք-քննիչ յանձնաժողովից քննութեան տեղեկագիրը։ Այդ նիստին, որ գոնիքակ էր, ներկայ էին Հայրապետական հրաւիրակները։

Նիստի վերջում, երբ օրակարգի խնդիրները ստացան իրանց որոշումները, Նորին Սրբութիւնը իրուե հաշուետութիւն՝ ժողովին ներկայացրեց մի նամակ, գրուած Ռուսական գետպան Զինովիեվին, որի մէջը վեհը յայտնում է, որ սրտի անհուն երախտագիտութեամբ պատրաստ է երթալ Պետերլուրգ՝ իր շնորհակալութիւնները մատուցանելու Նորին Կայսերական Մեծութիւն, ամենայն Ռուսաց թագաւոր Կայսր Նիկոլայ Բ.-ին։ Ապա ներկայացրեց ժողովին Սուլթան Մուհամմէտ Վ-ին անձամբ ներկայացրած ուղերձի պատճէնը։

Օրը վերջանալու վրայ էր, վերջին անգամն էր որ վեհափառ Հայրապետը ներկայ էր գտնւում իրուե հոգեորական երեսփոխան, երեսփոխանական ժողովում, որի մէջ երկար ու ձիգ տարիներ անձնուիրաքար աշխատել էր յօդուտ իր տարաքախտ ազգի։

Նորին Սրբութիւնը ասաց, թողնում եմ իմ սիրած պաշտօնը և մեկնում եմ Ա. Էջմիածին աւելի ծանր պարտականութիւններ կատարելու իրու Հայրապետ հաւա-

տարիմ պէտք է մնամ եկեղեցական այն ուխտին, պիտի պահպանեմ եկեղեցին իր անխառն օրբութեան մէջ, միևնոյն ժամանակ ցանկալի եմ համարում ընթացք տալ զանազան բարեկարգութեան հարցերի, որոնք կարող են լուծումն ստանալ միայն ու միայն ազգի կամքով. համագումար ժողովներով:

Խօսքի վերջում՝ Վեհափառ Հայրապետը, իր հրապառակական շնորհակալութիւնը յայտնեց բոլոր ազգերին՝ թիւրքերին, յայներին և հրէաներին, որոնք իր աքսորից վերադառնալիս ցոյցերով և բերկրանքով ու ծափերով ողջունեցին իրան: Շնորհակալութիւն յայտնեց թիւրքահայոց երեսփոխանական ժողովին, որ երկրորդ անգամ բարձրացրեց իրան պատրիարքական աթոռ: Շնորհակալութիւն յայտնեց նաև կաթուղիկոսական ընտրութեան պատգամաւրութեանը, որ պատուեց իրան, ընտրելով ամենայն Հայոց կաթուղիկոս:

Ապա օրհնեց համայն ազգը, օրհնեց երեսփոխանական ժողովի անդամներին և ոյժ ու կարողութիւն մաղթեց նրանց:

Երեսփոխանական ժողովի անդամները հերթով համբուրեցին Վեհ. Հայրապետի սուրբ Աջը, որը տարիներ շարունակ գործել էր յօդուտ իւր բազմակարօտ ազգին:

Նիստը փակուեց. Նորին Սրբութիւնը մեկնեց: Ամենքի գէմքի վերայ տեսնեում էր տիսրութիւն և թալսիծ:

---

Հետեւեալ օրը Մայիսի 23-ին Նորին Սրբութիւնը պէտք է ճանապարհ ընկնէր գէպի Ռուսաստան, Բազմութիւնը առաւտեան ժամի 9-ից սկսած շտապում էր Թօփհանէի առջե, որտեղ սպասում էին արգէն Ռուսաց գեսպանատան շոգեմակոյիը և նաւակները:

Ժամը 10-ի մոտ կառքերի շարքերը ծովափ հասան, Թափորի առջեից գնում էին ձիերի վրայ կարմրազգեստ շաթիրները, յետոյ առանձին կառքով երկու վարդապետները տանումէին Հայրապետական խաչը և գաւաղանը,

ապա դնում էր Նորին Սրբութեան շքակառքը, որին հետեւմ էին անթիւ կառքեր եպիսկոպոսներով, վարդապետներով, քահանաներով և աշխարհականներով . . .

Բազմութիւնը երկարատև ծափերով ողջունում է սիրեցեալ Հօրը, Յուղմունքներով լի բոպէներին . . . շատերը արտասում են . . . Նորին Սրբութիւնը փոքր ժամանակից յետոյ մտաւ Ուուսական շոգեմակոյկը, որը առաջ ոլացաւ, բազմաթիւ մակոյկներ սուրում են նրա ետևից, ժողովրդի զգացմունքները չափ ու սահման չունին, ոմանք բարեմաղթութիւններ են անում, ոմանք ծափահարում են, ոմանք լալիս են . . .

Նորին Սրբութիւնը շոգենաւ բարձրացաւ, ստուար բազմութիւնը չէր ուզում բաժանուել նրանից, որ իրանց համար յոգնել, աշխատել ու տառապել էր:

Շոգենաւը շարժուեց . . . անվերջ կէցցէներով որութընդուռ ծափահարութիւններով ևրթաք բարով, ասաց սրտի խորունկ վշտով տանջուած ժողովուրդը իւր բազմաշարչար գորովագութ Հօրը, Արտասուում էր ժողովուրդը ծովի ափին կանգնած, աչքերը յառած Վեհին . . . Արտասուում էր Վեհը նաւի վրայ . . . և աղօթում: Նորին Սրբութեանը ուղեկցում են՝ Հայրապետական հրաւիրակներ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Սամունեան, Տ. Աշոտ եպիսկոպոս Շախեան, Տ. Մեսրոպ վարդապետ Տէր Մովսիսեան, Տ. Բաբկէն վարդապետ Աղաւելեան, Տ. Գրիգորիս վարդապետ Պալաքեան, Տ. Մեսրոպ վարդապետ Նշանեան և Ազգային ժողովի նախագահ Մինաս Զերազ:

9.

Վեհափառ Հայրապետը Օդեսսայում.

Մայիսի 24-ին կէսօրուայ ժամը 1-ին ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Մատթէոս Ա-ը «Զիխաչ» շոգենաւով մօտեցաւ Ուուսական հողին և Հայրապետը ժամանեց Օդեսսաւ, Նաւահանգստում սպասում էին Վեհ. Կաթողիկոսին Ուուսաստանի բոլոր կողմերից եկած հայ հասարակութեան ներկայացուցիչները և հոգեորականների

պատգամաւորութիւնները, գլուխ ունենալով նոր-նախիշեանի և Բեռարաբիայի թեմի առաջնորդ ներսէս արքեպիսկոպոս Խուդավերդեանին Այսաեղ էին տեղական արմենիուրացիայի ներկայացուցիչները՝ քաղաքապետը, քաղաքապետի օգնականը, շրջանի գորքերի հրամանատարի ներկայացուցիչը, ուսումնարանական շրջանի հոգաբարձուն, Կամեր-իւնկեր իշխան Բ. Ն. Արդութեան երկայնաբազուկ, որոնք և ողջունեցին Վեհափառի գալուստը:

Նաւահանգուտից Վեհափառ Հայրապետը հանդիսաւ որութեամբ ուղեորուեց դէպի Հայոց եկեղեցին, ուր կատարուեց գոհացողական մաղթանը: Ապա Ա. Հայրապետը լսելով ներսէս արքեպիսկոպոսի և տեղական հայ քահանայի ճառերը և պատասխանելով նրանց, օրհնեց ժողովը դիմուն անվերջ կեցցէների ուղեկցութեամբ առաջնորդուեց եկեղեցու երեսփոխան Ա. Աստուածատրեանի տունը, ուր պատրաստուած էր Հայրապետի համար իջևանելու տեղ: Այդուեղ ներսէս արքեպիսկոպոսը ներկայացրեց Վեհին իր թեմի հոգեորականութիւնը ողջոյնի համառուսուածութիւնը նաև Գուրեգին արքեպիսկոպոսը և Մեսրոպ վարդապետը, որոնցից յետոյ նորին Սրբութիւնը գիմեց հոգեորականութեանը և պատգամաւորութիւններին, շնորհակալութիւն յայտնեց նրանց և շեշտեց, որ հոգեորականութիւնը հանգիսանում է աստուածային Ռւսուցչի աւանդած գաղափարների զեկավարը և քարողողը, այդ պատճառով էլ նա իր հօտին պէտք է ներշնչէ հաշտապրել այն երկրի բնակիչների հետ, որը նրանց հայրենիքն է ներկայանում: Հոգեորականութիւնը պէտք է ներշնչէ իր հօտին՝ յարգել երկրի օրէնքները, որոնք նրան պաշտպան կը հանգիսանան, օգնել նրան իր բարդ և պատասխանատու պարտականութիւնների կատարման մէջ և նպաստել երկրի զարգացմանը բռնոր ճիւղերում, նաև ուսման և պրօգրեսուի գործում:

Վեհաջացնելով ընդունելութիւնները նորին Սրբութիւնը ուղարկեց իր ներկայացուցիչներին իր անունից ողջունելու այն վարչական անձանց, որոնք շոգենաւի վրայ գիմաւու

բել էին իրան։ Հետեւեալ օրը բոլոր պաշտօնական հիմնարկութեանց ներկայացուցիչները, ոկտած զինուօրական շըրջանի հրամանատար Կառլբարսից, այցելեցին Նորին Սրբութեանը։ Նոյն օրը երեկոյեան ժամը 6-ին Պ. Ա. Աստուածատրեանի բնակարանում տեղի ունեցաւ ճաշկերպիթ, որին ներկայ էին տեղական հայ գաղութի ներկայացուչները և զանազան քաղաքներից եկած պատգամաւորութիւնները։

Մայիսի 25-ին ցերեկը Թագուհի Կայսրուհի Աղեքսանդրովայի ծննդեան տօնի օրը, Վեհափառ կաթուղիկոսը հայոց եկեղեցում բազմաթիւ ժողովրդի ներկայութեամբ անձամբ գոհացողական մաղթանք կատարեց, որից յետոյ Վեհափիր հեռագիր ուղարկեց Նորին Կայսերական Մեծութեանը և բաղդ ունեցաւ, Կազամին կայարանում, ստանալ Նորին Մեծութիւն Թագաւոր Կայսեր հետեւ պատասխանը։

«Մատթէոս ընտրեալ և հաստատեալ Կաթուղիկոսին Ամենայն Հայոց։

«Թագուհի-Կայսրուհին և ես անկեղծօրէն շնորհակալ ենք Զեր Սրբութեան բարեմաղթութեանց և աղօթքների համար։

ՆիկոլաՅ.

Վեհ. Հայրապետի հեռագիրն էր ըստ այսմ։

«Նորին Կայսերական Մեծութեան Թագաւոր Կայսրին։

«Ոտք գնելով Ռուսաստանի մեծ կայսրութեան սահմանները, անսահման բաղդաւոր եմ արտայայտելու Զերդ Կայսերական Մեծութեանը, իմ հաւատարիմ հպատակութեան զգացմունքները և շնորհաւորելու Զեզ, ամենաողօրմած Թագաւոր, և Թագուհի Կայսրուհուն՝ Նորին Կայսերական Մեծութեան Թագուհու Կայսրուհու ծննդեան օրուայ առիթով, վեր առաքելով Զերմ աղօթքներ Զերդ Կայսերական Մեծութիւնների, Օգոստավիառ Գահաժառանգի և ամբողջ թագաւորական տան բաղդաւորութեան և երկարակեցութեան համար։

Մաքենս ընտեալ եւ հաստատեալ Կաթուղիկոս ամենայն Հայոց։

Տաճարից վերագառնալով իր իջևանատեղին վեհաշվառ Կաթուղիկոսը շարունակեց իր ընդունելութիւնները Մօտենումէր Պետերբուրգ ուղևորուելու ժամանակը։ Վեհը իր Հայրապետական օրհնութիւնը տալսվ բոլոր ներկայ եղանակներին և չնորհակալութիւն յայտնելով Պ. Աստածարեանին ցոյց տուած սիրալիր ընդունելութեան համար, ժամը 11 և կէսին դիմեց գէպի կայտրան շքախմբի ուղեկցութեամբ։

Կայարան էին եկել ողմինիւտրացիայի ներկայացուցիչները։ Օգեստայի հայ զաղութը, եկած պատղամաւորները և հոգեսրականները՝ բարի ճանապարհ մաղթելու նորին Արքութեանը։ Վեհը բարձրացու սալօն վագոն, որի պատուհանից օրհնեց հաւաքուած բազմաթիւ ժողովրդին։ Դիացքը անվեռջ կէցցէների ուղեկցութեամբ շարժուեց գէպի Պետերբուրգ։

Դ.

Վեհափառ Հայրապետի ժամանումն Ա. Պետերբուրգ։

Օգեստայից գէպի Պետերբուրգ Վեհին ուղեկցում էին ներսէս և Գառեգին առքեպիսկոպոսները, Աշոտ եպիսկոպոսը, Մեսրոպ Տէր Մովսիսեան, Բարգէն, Մեսրոպ Նշանեան, Գոհիգորիս Պալաքեան և Արտակ վարդապետները ու Մինաս Զերազ։

Պետերբուրգից եկեղեցական Խորհրդի անդամները նախագահ պրօֆէսոր Վ. Ի. Վարդանեանի և Աւագ քահանայ Տէր Գրիգորեանի առաջնորդութեամբ ընդ առաջել էին Վեհին։ Օգեստայի ճեղլնթաց գնացքը Պ. Բուրգի վարչաւեան կայտրանը հասնելիս՝ արգէն բաց էին արքայական սենեակները։ Նոյն ժամանակամիջոցում սկսեցին ժողովուել կայտրանում հայկական գաղութիւ ընդ ոռաջ եկած անդամները։ Այստեղ էին ի միջի այլոց Պետական Խորհրդի անդամ Պ. Ղուկասեան, Պետական գումայի անդամներ Մ. Աջեմեան և Յ. Սաղաթէլեան, ակադեմիկ պրօֆէսոր Մարր, որը բարձրագոյն նշանակուած էր լճարգման, գնդապետ Առևլժան-Շահ և բազմաթիւ ժողովուրդ։

Մայիսի 27-ին առաւօտեան ժամը 9 և 55 րոպէին վեհափառ Հայրապետը ողջամբ հասաւ Պետերբուրգ, Երբ գնացքը մօտեցաւ կայարանին, գիմաւորողները կանգնեցին հանդիսաւոր սենեակների մօւտքի երկու կողմերում՝ ձահապարհը դէպի սենեակները ծածկուած էր գորգերով։

Եկեղեցական Խորհրդի անդամները և հայ գաղութի ներկայացացիները մտան սոլոն-վագոն, որը գնացքի մայումն էր։

Աղջիկ ժամի 10-ին Նորին Արբութիւնը գուրս եկաւ գագանից։ Երա առջեից գնում էին կորմրագեստ շամփիրները արծաթագլուխ գաւազանները ձեռքներին, նրանց յետից երկու վարդապետներ կաթողիկոսական իշխանութեան նշաններով։ Ապա գնում էր Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսը շրջապատռուած հոգիօրականութեամբ և Եկեղեցական Խորհրդի անդամներով։ Տաղմաթիւ հայ ժողովուրդը տեսնելով Վեհ Հայրապետին, ողջունում էր նրան «կեցցէ Խղմիրլեան» բացականչութիւններով։

Վեհափառ Հայրապետը մտաւ արքայական սենեակները Այդաեղ պրօֆէսոր Վ. Ի. Վարդանեանը ողջունեց Նորին Արբութեանը Եկեղեցական Խորհրդի կողմից, Պետերբուրգի հայ գաղութի կողմից ողջունեց Վեհին իսկական պետական խորհրդական պ. Գ. Տիգրանեանը Վեհափառ Հայրապետը օրհնեց բոլոր ներկայ եղողներին և գոհունակութիւն լայտնեց, որ հիւսիսային մայրաքաղաքի հայերը, հեռու լինելով հայկական հոգեհոր կենդրոնից և իրանց թիւրքահպատակ ազգակիցներից, պահպանել են չերմ հաւատ, որին ապացոյց է իրան արուած ոգեսրուած ընդունելութիւնը։

Ապա նոյն կարգով հանդէսը կեցցէների ուղեկցութեամբ շարժուեց գէպի ելքը։ Դռան մօտ կանգնած էր քառաձի կառքը ֆորեյաերով։ Շաթիրները նստեցին մի ուրիշ կառք և գնացին առաջից։ Նոցայետից մի առանձին կառք նստեցին երկու վարդապետներ՝ կաթողիկոսական րէգալիաներով։ Վեհի կառքի յետից գնում էին առանձին կառքերով շքախմբի անդամները և գիմաւորողները։

Հանդիսաւոր գնացքը ուղղուեց Կզմայլովակի պրօսպեկտով, Մեծ Մօրսկայու փողոցով դէպի Նեսկի պրօսպեկտը — հայոց եկեղեցին:

Վեհ. Կոմթուղիկոսի գալու վայրկեանին եկեղեցու մօտ և բակում հաւաքուած էր ահագին բազմութիւն: Դէպի եկեղեցին տանող ճանապարհի վրայ փռուած էր կարմիր մահուտ Ճանապարհի մէջ տեղում Վեհին սպասում էր մոյժ մանուշակագոյն թաւշից ամպհովանի, գլխին խաչով, որի արծաթէ ձողերից բռնած ունէին՝ Պետական Խորհրդի անդամ Ղուկասեանը, իսկական Պետական Խորհրդական Գ. Տիգրանեանը, հայ վաճառականութեան ներկայացուցիչ Ի. Տէր Մատթէոսեանը և եկեղեցու երեսփոխան Շատուորեանը.

Երբ Նորին Սրբութիւնը դուրս եկաւ կառքից, լսուեցին ողջոյնի բացականչութիւնները, Աւագ քահանան ամպհովանու տակ ողջունեց Վեհին, Հանդէսը դիմեց դէպի եկեղեցի եկեղեցական պատշաճ երգեցողութեամբ, Վեհը օրհնում էր խաչով ներկայ եղած բազմութեանը, իսկ մահուտի երկու կողմերին ամբողջ երկարութեամբ շարուած փոքրիկ հայ օրիորդները թարմ ծաղիկներ էին սփռում նրա ճանապարհի վրայ:

Կարճառօտ աղօթքից յետոյ, Մկրտիչ քահանայ Ղազարեանը ողջունեց Վեհափառ Հայրապետին և իւր ճառի մէջ շեշտեց այն ուրախութիւնը, որը առաջացրեց տեղական հայ գաղութի մէջ Նորին Սրբութեան գալուստը և այն համոզունը յայտնեց, որ ներկայումս նկատուող ոգեսրութիւնը կամրացնէ հայերի մէջ հաւատ և հաւատարմութիւն դէպի հայ եկեղեցին և հայ ժողովուրդը: Ղաղարեան քահանան աւարտեց իւր ճառը բարեմազթելով Հայրապետին աջողութիւննրա ջանքերին հայ ժողովրդի հոգեոր լուսաւորութեան և առաջադիմութեան գործում: Վեհափառ Հայրապետը բարեհաճեց պատասխանել հետեւալլ:

«Թիտակցում եմ, որ ծանր է իմ գործը: Երկար եմ աշխատել եկեղեցու և իմ ժողովրդի օգտին: Զեմ վատա-

հանում պնդել, որ պարտքս լրիւ կատարել եմ, սակայն կարող եմ ասել, որ միշտ տոգորուած սիրով և հաւատով ձգտել եմ այդ պարտքի կատարմանը։ Չեղ բոլորիդ, ի հարկէ, ցանկալի է էջմիածնի Մայր Աթոռը տեսնել բարգաւաճած վիճակի մէջ և ուզում եմ հաւատալ, որ ձեր նուիրական ցանկութիւններն ի կատար կածուին իմ կողմից՝ ձեր միահամուռ աջակցութեամբ։ Այդ կողմից ըլլինինք յոռետես։ Հայ եկեղեցին գարերի ընթացքում ենթարկուել է բազմաթիւ ամենածանր հալածանքների, սակայն նոյն այդ եկեղեցին իր միջից Արիստակէսներ, Ներսէսներ, Սահակներ և Մեսրոպներ է գուրս ըերեր, որոնք փոթորկոտ ժամանակի գրոհին քաջութեամբ դիմադրելով՝ կարողացան հաւատի և կամքի ոյժով պահպանել հայ եկեղեցու ամբողջութիւնը մինչև ներկայ օրերս։ Ուրախ եմ, որ վերջի վերջոյ ընկնելով արդարակորով Ռուս կայսրութեան հովանու տակ, հայ ժողովուրդը հնարաւուրութիւն ստացաւ խաղաղ ապրելու, պահպանելու իւր սուրբ եկեղեցին և կուլտուրապէս զարգանալու։ Այսպէս են բաղադրուել հայ եկեղեցու և ժողովրդի արտաքին կեանքի պայմանները։ Ինչ վերաբերում է մեր ներքին կեանքին, այնտեղ անկասկած կան շատ պակասաւորութիւններ, ուրոնք կարող են վերացուել ձեր ջանքերով։

Այստեղ անհրաժեշտ է, որ հայ ժողովուրդը և հայ հոգևորականութիւնը իմ հաստատուն յենարաններու լինին։ Օրինական ճանապարհին հետեւելով, դուք կը կարողանաք թեթեացնել այն ծանր բեռը, որ ընկնում է ինձ՝ ամենայն Հայոց կաթուղիկոսիս վրայ։ Եթէ այս այսպէս լինի, չեմ կասկածում, որ Ամենաբարձրեալի օգնութեամբ և Ռուսական կայսրի հզօր հովանաւորութեան տակ՝ իմ համեստ գործունէութիւնս կը լինի օգտակար եկեղեցուն և ժողովրդին, և կարդարացնէ ձեր բարի յոյսերը. թողԱստուած օրհնէ ձեզ»։

Եկեղեցուց Վեհափառ Հայրապետը կեցցէների ուղեկցութեամբ շրջապատուած շքախմբի անդամներով և հայ դաղութի պատուաւոր ներկայացուցիչներով գիւղում

Է դէպի իր համար պատրաստած օթևանը՝ իշխան Աքա-  
մելիք Լաղարկի բնակարանը, որտեղ փոքր ինչ հանգստա-  
նալուց յետոյ, խօսակցում է եկեղեցական խորհրդի ան-  
դամների և գաղութի ներկայացուցիչների հետ:

12.

Գեհափառ Հայրապետի Այցելութիւն Նախարարների խորհրդի նախագանձիւն. — Ե. Կ. Մ. Օգոստ. Կայսրին նեկայանալը. Այցելութիւն Մետրոպոլիտ Բ. Ա. Անտոնին. Ներկայանալը Ե. Կ. Մ. Մայր Թագուհուն.

Հետեւալ օրը Մայիսի 28-ին ցերեկուայ ժամը 12-ին  
ամենայն Հայոց Կաթողիկոսը իր շքախմբով այցելութեան  
գնաց Ելագինի պալատը, մինիստրների խորհրդի նախա-  
լսադահ Պ. Ա. Ստոլիպինի մօտ։ Խօսակցութիւնը տեսց  
մի ժամից աւելի։

Խօսակցութեան միջոցին վեհափառ Հայրապետը շօնափեց հայ ժողովրդի արդի գրութիւնը Ուսւաստանում, հայ հոգեօրականութեան վրայ ծանրացող պարտականութիւնները Կովկասում տիրող ազգայնական թշնամութիւնները վերացնելու գործում, կաթուղիկոսական ընտրութիւնների կարգը փոփոխութեան ենթարկելը և լին:

Խոսակցութիւնից յետոյ, երբ վեհը մեկնում է, մի-  
նխարների խորհրդի նախագահը ամենայն պատշաճաւո-  
րութեամբ և սիրալիրութեամբ ճանապարհ է ձգում Հա-  
յոց եկեղեցու պետին գոհ սրտով և ակնածութեամբ բա-  
ժանուելով նրանից:

Նոյն օրը երեկոյեան ժամը 6-ին Ա. Հայրապետի իջևանած բնակարանում տեղի ունեցաւ ճաշկերոյթ, որին մասնակցելու հրաւիրուած էին տեղական հայ հասարակութեան ներկայացուցիչները։ Ճաշկերոյթի ժամանակ Վեհափառը պատմեց ներկայ եղողներին Ստոլիպինի հետ ունեցած խօսակցութեան ժամանակ իր ստացած տպաւորութիւնները։ Նորին Սրբութիւնը իր գոհունակութիւնն է յայտնել մինխոտքների խօրհրդի նախագահի կողմից իրան ցոյց տրուած ընդունելութեան առթիւ և յայտնել է,

որ նա Ստօլիպինին համարում է դեպի այլազգիները առաջառութեամբ վերաբերւող մի մարդ։

Հետևեալ օրը Մայիսի 29-ին, նախապէս որոշուած ցերեմոնիալի համեմատ, Վեհափառ Հայրապետը  $2\frac{1}{2}$  ժամին պէտք է ներկայանար Թագաւոր Կայսրին, Ցերեկուայ 1 ժամ՝ 37 ր. Նորին Սրբութիւնը հանգիստաւորութեամբ իր շքախմբի ուղեկցութեամբ դիմեց դեպի Բալթիկեան երկաթուղու կայարանը, որտեղ սպասում էին արգէն կայսերական պալատի երկու արարողապետները պաշտօնական համազգեստներով, որոնք դիմաւորեցին Վեհափառ Հայրապետին և մի քանի րոպէ կայսերական սենեակների մէջ հանգստանալուց յետոյ, Վեհը, արարողապետների առաջնորդութեամբ, դիմեց դեպի կայսերական սալօն-վագօնը։

50 րոպէից յետոյ կայսերական գնացքը հասաւ Պետէրհովի կայարանը, կայսերական դահլիճները թէ ներսից և թէ դրսից զարդարուած էին թարմ ծաղիկներով ու ճիւղերով և բազմաթիւ դրոշակներով, իսկ կայարանի առջել սպասում էին վեց սպալատական կառքեր և ուկենամուկ զգեստներով կայսերական մանկլաւիկներ։

Երբ Նորին Սրբութիւնը դուրս եկաւ սալօն վագօնից, նորան դիմաւորեցին պալատական բարձրաստիճան պաշտօնեաները և մի փոքր հանգիստ առնելուց յետոյ առաջնորդեցին Վեհին դեպի Թագաւոր կայսեր կողմից ուղարկուած արքայական վեց ձի կառքը։

Հանգիստաւոր գնացքը առաջ էր ընթանում դեպի պալատ հետևեալ կարգով։

Ա. Լանգո.—Տ. Դրիգորիս ծ. վարդապետ Պալաքեան և Տ. Մեսրոպ վարդապետ Նշանեան, որոնք տանում էին հայրապետական խաչը և գաւազանը։

Բ. Արքայական վեց ձի կառքը, որի մէջ բազմած էր Նորին Սրբութիւնը, որի դէմը նստած էր պլոֆէսոր Մարրը գլաւաբաց, կառքի յետել կանգնած էին պալատական երկու մանկլաւիկներ ուկենամուկ համազգեստներով։

Նորին Սրբութեան կառքին հետեւմ էին չորս հեծեալ պալատականներ, իսկ վեհի կառքի մօտով ընթաշնում էր արարողապետներից մէկը:

գ. Տ. Ներսէս արքեպիսկոպոս Խուդավերդեան և Տ. Գարեգին արքեպիսկոպոս Սաթօւնեան.

դ. Լանդօ.—Տ. Աշոտ եպիսկոպոս Շախեան, Տ. Մեսրոպ վարդապետ Տէր Մովսիսեան և Տ. Բաբկէն վարդապետ Աղաւէլեան.

Ե. և զ. Լանդօների մէջ նստած էին պալատական հետեւորդները:

Կէս ժամից յետոյ հանդիսաւոր գնացքը անցնելով դրոշակներով զարդարուած փողոցներով հասաւ պալատ:

Պալատի գլխաւոր գոան առաջ քսանի չափ պալատական դիմաւորող պաշտօնեաները յարդանքով ճանապարհ տուին աւագ արարողապետին, որը համբուրելով Նորին Սրբութեան Ա. Աջը, առաջնորդեց թափորը Առաջից գնում էին չորս սենեկապետներ, յետոյ չորս մանկաւիկներ իրանց գլխաւորի հետ միասին: Սուրա յետելից գնում էին կաթուղիկոսական շաթիրները արծաթագլուխ գտապաններով, յետոյ հայրապետական խաչը ու գաւազանը կրող երկու վարդապետները, ապա Նորին Սրբութիւնը, որին հետեւում են արարողապետը պրոֆէսօր Մարրը և արքեպիսկոպոսներն ու վարդապետները: Նորին Սրբութիւնը պալատի գանձներից անցնելով, պատկերների գահին միջով առաջնորդուեց գէպի Զինական հիւրասենեակը:

Յերեկուայ ժամը 2 և 30 րոպէին աւագ արարողապետ կոմս Գենդրիկովը առաջնորդեց Նորին Վեհափառութեանը թարգման պրոֆէսօր Մարրի ուղեկցութեամբ ընդունարանը, ուր գտնւում էր Կայսրը: ՆՈՐԻՆ ԿՈՅՑԵՐԻԱՆ ՄԵԾՈՒԹԻԻՆԸ բարեհաճեց գիմել կաթուղիկոսին հետեւալ խօսքերով:

Ուրախ եմ, որ Զերդ Վեհափառութեանը տեսնում էմ Ռուսաց պետութեան սահմանները ոտք գնելուց անհիջապէս յետոյ, նախ քան Զեր նոր պարտականութիւնները ստանձնելլը:

Դնացքը տեղ հասնելուց 10 րօպէ առաջ, կայարանի ընդարձակ հանգրուանը գրեթէ ամբողջովին բռնուած էր երկուեռ հասարակութեան ահագին բազմութեամբ, որոնք առաւտեան ժամի 8-ից շտապել էին Նիկոլաևսկի կայարանը գիմասորելու Նորին Վեհափառութեանը: Բացուած էին կայսերական սենեակները, որտեղ սպասում էին Վեհի գալստեանը մամուլի ներկայացուցիչները, կարգադրիչ յանձնաժողովի անդամները և տեղական հայ գաղութի ներկայացուցիչները: Ժողովուրդը սրտատրով սպասում էր Վեհին և երբ երեաց նա, հասարակութիւնը խանդալց բերկրանքով գոչեց «Կեցցէ Վեհափառը, կեցցէ իզմիրլեանը»:

Նորին Սրբութիւնը օրհնելով հաւաքուած ժողովրդին, ներս մտաւ կայսերական սենեակներն իր շքախմբի և մեծ բազմութեան ուղեկցութեամբ: Պրօֆէսօր Գ. Խալաթեանը ողջունեց Վեհափառին Մոսկուայի հայ գաղութի կողմից, որի ճառը փակեց ժողովուրդը կեցցէներով: Բանաստեղծ Ա. Ծատուրեանը ողջունեց Վեհին Եկեղեցական խորհրդի անունից և ասաց հետեւելը:

«Ողջոյն Քեզ ազգընտիր Հովուտպետ:

«Ողջոյն որդիական բուռն սիրոյ, ժողովրդի ցաւակից Հայր:

«Աշտի երկրից եռ գալիս, հովուելու համափեռ զաւակներիդ:

«Սրհաւիրքի և հեծեծանքի վայրից եռ գալիս բաղմելու Լուսաւորչի Գահը, որին այսօր յառած է զաւակներիդ յուսալից հայեացքը.

«Դառն է և անմիսիթար ազգիդ վիճակը:

«Ծանր է և փշոտ Հովուտպետիդ ուղին:

«Բաղձում ենք Քեզ ոյժ ու կորով, իրազործելու այն գումար առաքելութիւնը, որ տառապեալ ազգը յուսափափագ և սիրավստահ յանձնել է Քեզ,—առաքելութիւն՝ միացնելու ցիրուցան հայութիւնը առողջ ազգային գաղափարի լոյսի և քաղաքակրթութեան դրոշակի տակ . . .

«Դեռ թանձր է, ով ազգիս Հայր, մեր շուրջը տիրած խաւարը:

«Եւ դեռ տակաւին հնչում է ներկայ վոլֆորկալի օրերում տիսրաշունչ ձայնը բանաստեղծի, որը մի ժամանակ դիմելով Խաչ և Աւետարանի զինուորին բացականչում էր.

»Մի նայիր անբաղդ քո աղդի վրայ

«Տես ինչ ալէկոծ հոգի մէջ է նա.

«Բաղձում ենք, աղդիս Հայրապետ, որ Քո Հովուապետութիւնը լինի մեր խոավայոյզ օրերի խաղաղ հանգրուան, մեր գիշերը կեանքի. — ոսկէ արշալոյս:

«Ողջոյն Քեզ, սիրոյ բուռն ողջոյն, վշտալից աղդիս վշտակիր Հայր»:

Ծատուրեանի ճառից յետոյ կրկին լսուեցին «Կեցցէ Վեհափառը» խօսքերը:

Այնուհետև խօսեց Նորին Սրբութիւնը: Նա իր համառօտ ճառի մէջ ասաց, որ ինքը կոչուած լինելով Լուսաւորչի Գահի համար, գտնում է, որ ազատութիւնը պէտքէ պարփակուած լինի որինականութեան սահմանների մէջ միայն, դրանից գուրս չլայ աղատութիւն, այլ անարխիա. վերջում յայտնեց, որ ինքը մենակ անզօր է կառավարելու Հայոց եկեղեցին, որ իր հօտը նոյնպէս պէտք է աշակցէ իր գործունեութեան ամբողջ ժամանակամիջոցում:

Աղմկալից և բուռն կեցցէների տակ վերջացրեց իր խօսքերը Վեհափառ Հայրապետը:

Կայարանից Նորին Սրբութիւնը գիմեց Հայոց եկեղեցին, Առաջից գնում էին խաչակիր և գաւազանակիր վարդապետները. յետոյ ինքը Վեհափառը շքակառքով, որին լծուած էր վեց ձի, երկու շաթիրները գտնուամ էին շքակառքի յետեւում կանգնած: Վեհափառի կառքին հետեւում էին շքախմբի անդամների և պատուաւոր ծխականների լանդօնները և մի քանի հարիւր կառք լցուած: Բոլոր փողոցները, որոնցով անցնում էր Նորին Սրբութիւնը, արտասպար բնաւորութիւն էին ստացել: Հայոց փողոցը ամբողջովին լցուած էր բազմաթիւ վարչական պաշտօնեաներով, իսկ Հայոց եկեղեցու բակը ծայրէ ի ծայր լցուած էր երկսեռ բազմութեամբ:

Եկեղեցու գարպասներից մինչև Եկեղեցու ներսը փռուած էր կարմիր մահուտ, իսկ Եկեղեցու բակը զարդարուած էր տրօպիքական բուսականութեամբ և գրոշականերով։ Վեհափառը դուրս գալով շքակառքից մտաւ ամպհովանու տակ, որի ձողերը բանած էին Յովհանա, Ժամարեան, Ա. Ասրիբէգեան և Շորշորեան և Եկեղեցու երեսփոխանը։

Ժողովրդի բուռն կեցցէներով Ա. Հայրապետը առաջնորդուեց Եկեղեցին, Այդտեղ կմմանուէլ քահանայ Նազարեանը ողջունեց Ա. Հայրապետին աւելացնելով, որ այսօր Հայոց Եկեղեցին ուրախ է, քանի որ նա տեսնում է սկրեցեալ ընտրեալին։ Այնուհետեւ խօսեց ինըը Վեհափառը Յոյց տալով, որ ինըը վշտի և թախիծի հայրենիքից գնում է բաղմատանջ Լուսաւորչական Գահի աթոռանիստ Էջմիածինը. աւելացրեց, որ նա շատ գործեր ունի կտարելու ապագայում, բայց որ մենակ անզօր է այդ բոլորը անելու նա հաւատացած է, որ ժողովրդի համերաշխութեամբ և գործակցութեամբ միայն կարող է հանել իր նպատակին։

Ապա նոյն հանդիսաւորութեամբ Վեհափառ Հայրապետը դուրս գալով Եկեղեցուց, գնաց Յովհաննէս Ժամհարեանի տունը, ուր օթեան էր պատրաստած։

Ժամը 4-ին Վեհափառ կաթուղիկոսը շքախմբի անդամների ու տեղական գաղութի ներկայացուցիչների հետ միասին գնում է Հայոց գերեզմանատուն, որտեղ ընդհանուր հոգեհանդիտ է կատարում այնտեղ թաղուած նշանաւոր գործիչների յիշատակին։

Այդտեղ բացօդեայ Նորին Արքութիւնը հիւրասիրուում է թէյով որից յետոյ վերագառնումէ իր օթեանը։

Հետեւեալ օրը Ժամը 10-ին Վեհափառ կաթուղիկոսը իր շքախմբով այցելեց Լազարեան ձեմարանը, որի մուտքի մոտ Նորան դիմաւորեց տեսուչ ի. Թանդեանը պրոֆեսորների, ուսուցիչների և լսարանցիների հետ միասին։ Ական դահլիճում տեսուչը ողջունեց Վեհին ճեմարանի կողմից և յանձնեց պարտուաւոր անդամի գիտլումը, յու-

բելեանական մետալի հետ միասին, վեհափառը ստանաւ լով դիպլոմը, մեղալը ասաց, «Ճանօթ եմ Լազարեան-ձեւմարանի պատմութեան հետ և համակրելով այդ կրթական հիմնարկութեանը կատարեալ յաջողութիւն եմ ցանկանում ճեմարանի վարիչներին կրթական-կուլտուրական գործում։»

Այսուհետեւ Թանգեանը պրոֆէսօրներին և ուսուցիչներին ներկայացրեց վեհափառին, որից յետոյ Նորին Սրբութիւնը դիտեց ձեւմարանի դրադարանը և առհասարակ բոլոր սենեակները, շնորհակալութիւն յայտնելով ձեւմարանի վարչութեանը սիրալիր ընդունելութեան համար, մեկնեց Հայոց եկեղեցին, ուր այդ օրը հանդիսաւոր պատարադ էր մատուցանւում։ Պատարագիչն էր Թիֆլիսի առաջնորդ Դարեգին արքեպիսկոպոսը։

Պատարագի կիսին Վեհափառը դառնալով գէպի ժողովուրդը քարոզ խօսեց, բնաբան ընտրելով «օձի նման իմաստուն» և աղաւու պէս միամիտ եղէք»։ և ցոյց տուեց որ Գ. դարում Մեծն Ներսէս կաթողիկոսի օրօք, երբ հայերը հալածւում էին յոյներից և պարսիկներից, այն ժամանակուայ հայոց թագաւորը լինելով անտակտ մարդ, Ներսէսի ցուցմունքներով միայն կարողացաւ հայ ժողովրդին ազատել կորստից։ Ապա Վեհափառը մատնանշեց հայ ժողովրդի ներկայ կացութիւնը, որը նոյնպէս վատթար դրութեան մէջ է գտնւում և խորհուրդ տուեց հեռու մնալ ծայրայեղ պահանջներից և ընտրել միջին ուղին՝ երկու չարեաց փոքրագոյնը։ Նա առաջարկեց գործել չափաւոր, օրինականութեան շրջաններում միայն...»

Պատարագից յետոյ իր օթեանում Վեհափառ Հայրապետը ընդունեց եկեղեցական խորհրդի անդամներին, Գառապարեան անկերանոցի ներկայացուցիչներին, Մոսկվայի հայ կանանց ընկերութեան ներկայացուցին, ապա Վեհափառին մատուցուեցին մի քանի ընծաներ։

Ժամի 4-ին Վեհափառ Հայրապետը իր շքախմբի հետ միասին գնաց Կրեմլը, որտեղից Փրկչի տաճարը, Խվերսկու Առտուածածնի մատուցը, Արխանգելսկի տաճարը, ապա

զերադարձաւ իր օթևանը, Երեկոյեան տեղի ունեցաւ  
հանդիսաւոր ճաշ ի պատիւ Հայրապետիւ.

Հետեւալ օրը Նորին Վեհափառութիւնը 12 ժամ  
55 ր. մեկնեց գէպի Նոր Նախիջևան, գնացքը շարժուեց  
կեցցէ իզմիրլեան» աղաղակներով։ Մասկայի հայ գաղութի  
կողմից Գ. Խալաֆեան և պ. Խրմաջեան ուղեկցում են  
Վեհին մինչև Վարօնէժ։

Յունիսի 8-ին, Երեկոյեան ժամը 10-ին արագ գնաց-  
քի հետ արքայական վագոնով Նորին Սրբութիւնը ժա-  
մանեց Ռոստով։ Կայարանի արքայական դահլիճում աեղի  
ունեցաւ հանդիսաւոր ընդունելութիւն, Վեհափառին  
ներկայացան քաղաքապետը, պաշտօնական այլ անձինք,  
քաղաքագլուխները և հայ գիւղացիութեան ներկայացու-  
ցիչները, որոնք մատուցին ազ ու հաց։

Ապա Նոր Նախիջևանի պատգամաւորների առաջնոր-  
դութեամբ հանդիսաւոր թափորը գիմեց գէպի Նոր Նա-  
խիջևան։ Վեհին ուղեկցում էին անթիւ կառքեր լցուած  
հայերով։ Կեցցէներին և ուրաներին վերջ չկար։ Եքախմբի  
մէջ էին Ներսէս արքեպիսկոպոս, Գարեգին արքեպիսկո-  
պոս, Աշոտ եպիսկոպոս, Մեսրոպ վարդապետ Տէր Մով-  
սիսեան, Մխիթար վարդապետ, Բաբգէն վարդապետ,  
Դրիգորիս վարդապետ, Մեսրոպ վարդապետ Նշանեան,  
Արտակ վարդապետ և Մինաս Զերապ,

Նախիջևանը զարդարուած էր և տօնական ընաւորու-  
թիւն էր կրում։ Եքեղ լուսաւորութիւն, գոյնզգոյն լապ-  
տերներ, կանաչ գիրլեանդաներ։ Եկեղեցու զանգերը զու-  
ղանջում էին, հոգեւորականութիւնը զգեստաւորուած սպա-  
սում էր. Վեհի անցնելու ճանապարհը ծածկուած էր կար-  
միր մահուտով, որի մի ծայրին սպասում էր շքեղ ամպ-  
հովանին։

Հեռւում Երեւացին ձիերի վրայ ջահակիր զինուոր-  
ները և կառքերի շարքերը, Օդը թնդաց ուրաների և  
կեցցէների ձայնից։

Ժամանեց Վեհափառը:

Հետեւալ օրը Ա. Լուսաւորիչ Եկեղեցում հանդիսաւոր պատարագ մատուցւեց: Պատարագին էր Աշոտ եպիսկոպոսը: Պատարագի ընթացքում Վեհափառ Հայրապետը մի զգացուած քարոզ խօսեց: Բարի յոյսերն էին, որ նա տալիս էր իւր ժողովութին, մաքուր գաղափարներ էին, որ նա առաջարկում էր իր հօտին: Նետեւեալ օրը Վեհափառ Հայրապետը բարեհաճեց այցելել Նախիջևանի հասարակական հիմնարկութիւնները: այդ օրը պաշտօնական ճաշկերպյթ էր ձմերային ակմբանոցի շինութեան մէջ:

Ճաշի ժամանակ Նորին Վեհափառութիւնը առաջարկեց Թագաւոր Կայսրի կենացը, որին հետեւցին անվերջ ուռաները երգեցիկ խումբը երգեց: «Եօյ Շար քրանու, Քաղաքապետը առաջարկեց Վեհափառ Հայրապետի կենացը, որը ընդունուեց ոգեսորված ու անկեղծ զգացմունքներով և կեցցէներով, երգեցիկ խումբը երգեց: «Ճէր կեցն: Գ. Զալխաշեան առաջարկեց Պ, Մինաս Զերազի կենացը: Ե. Շահազիդ ճառ արտասանեց, ցանկութիւն յայտնելով, որ Էջմիածինն իր լուսոյ խորանը վառ պահէ և այն լոյսից սփռէ կայծեր ամեն կողմի հայութեան: Վեհափառ Հայրեապետը ասաց. «Էջմիածնի լամպարը մարած չէ, այլ կը պլուայ. պէտք է համայն հայութիւնը մի մի կաթիլ իւղ բերէ, որ անոր ջահը նորէն վառէ»:

Յունիսի 11-ին Վեհափառ Հայրապետը ճանապարհ ընկաւ գէպի Թիֆլիզ: Նոր Նախիջևանի հայ հասարակութիւնն ամենայն շուրջով ու հանդիսաւորութեամբ բարի ճանապարհ մաղթեց Վեհ. Հայրապետին:

## Ե.

Անընդհատ ուղեւորութիւն մինչեւ Թիֆլիզ.—Հանդիպումն Միներալնիա Վոգիում, Բալաջարում, Գանձակի կայարանում եւ Աղստավայրում:

Նոր Նախիջևանից, համաձայն Վեհափառ Հայրապետի հրամանի, հեռագրական կարգադրութիւններով յայտնուած էր: որ մինչև Թիֆլիզ Նորին Սրբութիւնը ոչ մի քաղա-

քու.՝ Հանգստանալու չէ։ Այդ կարգագրութիւնը մեծ ցաւ պատճառեց նամանաւանդ Արժաւըի, Վաղիկաւկազին Դերբենտի, Բագուի և Գանձակի հայերին, որոնք առանձին եռանդով և բերկրանքով պատրաստութիւններ էի, տեսնում ազգընտիր Հայրապետին տեսնելու իրանց մէջ, պատռելու և իրանց խորին յարգանքները յայտնել նոսրան։ Այդ իսկ պատճառով թէ վերը յիշուած քաղաք ները և թէ այլ հայաբնակ վայրեր։ ինչպէս Դերբենտ, հանքային ջրեր, Գէորգիեսկ, Մողոկ, Պետրովսկ, ամենքն շտապել էին իրանց պատգամաւորներն ուղարկել մօտիկ կայարանները ողջունելու վեհափառ Հայրապետին իրանց քաղաքների հայ ազգաբնակութեան կողմից։

---

Առանձին հանգիստաւորութեամբ դիմաւորեցին նորին Սրբութեանը բազուցիները Բալաջարի կայարանում Բագուի կարգադրիչ յանձնաժողովը երկաթուղային վարչութիւնից խնդրել և պատրաստել էր Վեհի համար առանձին արտակարգ գնացք Բալաջարից մինչեւ Թիֆլիս Բացի դրանից կառավարութեան թոյլտութեամբ Բալաջարի կայարանը զարգարել էին ծաղիկներով, կանաչով և ռուսական ազգային դրոշակներով։ Շամախութեմի առաջնորդ Անանիա արքեպիսկոպոսը, Բագուի գործակալ Զաւէն վարգապետը և Բագուի հաստրակութեան ներկայացուցիչներ Ա. Կրասինիկեան, Կ. Խատիսեան, Բ. Դոլուխանիան և թիշկի Թ. Զաքարեան ընդ առաջ էին գնացել նորին Սրբութեանը։

Բալաջարի կայարանը Յունիսի 13-ին տօնական կերպարանք էր ստացել։ Զարգարուած կայարանը հետզհետէ լցում էր երկսեռ բազմութեամբ, որոնց անընդհատ բերել էին Բագուից արտակարգ գնացքները։ Այդտեղ էին նաև զանազան պատգամաւորութիւններ, որոնց թւում Ղարաբաղի թեմի պատգամաւոր Հ. Առաքելեանը և Շամախութեմի պատգամաւոր Ա. Թաղիանոսեանը. կայարանի պլատիումի վրայ պատրաստուած էր մի աթոռ ամպհովանիով։

որը շրջապատել էին քահանաները, Բացի ազգային դանական հիմնարկութիւնների ներկայացուցիչներից, Բալաջար էին եկել նաև Բագուի քաղաքագլուխը մի քանի ձայնաւորների հետ, ուուս հոգեռորականութեան ներկայացուցիչ գործակալ Իւնիցիկի աւագ քահանան, հայ բողոքականների ներկայացուցիչները, վրաց հասարակութեան ներկայացուցիչները, հրէանների պատգամաւորութիւնը, բողոքականների պատորը ևայլն:

Ժամը 4<sup>1/2</sup>-ին գնացը հասաւ կայարան բուռն կեցցէնների ողջոյնով, Երեաց Վեհափառը սալօն վագօնում... կեցցէններին վերջ չկար:

Նորին Սրբութիւնը սովորական ցերեմոնիայով դուրս եկաւ վագօնից շրջապատուած շքախմբի անդամներով: Ամենից առաջ դիմաւորում է Իւնիցիկի քահանան, ապա քաղաքագլուխը մատուցանում է ազ ու հաց, յետոյ ողջունում է Վեհին վրաց հասարակութեան ներկայացուցիչը ընդդեմ երկու հարեան հայ և վրացի ազգերի դարաւոր բարեկամութիւնը և ազգակցութիւնը: Այնուհետեւ Բագուի ծխական հայ գպրացների հոգաբարձութեան և հայ ժողովրդի կողմից Միք. Պապաջաննեանը ասում է հետեւեալ ճառը:

### «Վեհափառ Տէր».

«Երեւ. ծխական-եկեղեցական հոգաբարձութեան նախագահ՝ ինձ վիճակուեց այս բարձր պատիւը՝ շնորհաւորել Զերդ Վեհափառութեան բարի գալուստը և ջերմ սրտագին կերպով բարեմաղթել Զերդ առողջութիւն և երկար կեանք: Բագուի հայ հասարակութիւնը անհամբերութեամբ սպասում էր այն օրուան, երբ Զերդ Սրբութիւնը կը բաղդաւորացնէ իրան գոնէ կարճժամանակեայ այցելութեամբ: Սպասում էր և որդիական բերկութեամբ պատրաստուում ընդունել Զերդ Վեհափառութեանը:

Անակնկալ հանդամանքներ արգելք եղան մեզ վայելել Զեր հայրապետական օրհնութիւնը: Այլ սակայն եթէ առայժմ հնար չունեցանք միսիթարուել Զեր տեսութեամբ՝ մենք քաջայոյս ենք ըստ կարելւոյն մօտիկ ապագայում՝

տեսնել Զեղ մեզ մօտ, անձամբ լսել Զերդ Արքութեան իմաստալից ցուցմունքները և պարզել մեր անհրաժեշտ կորիքները։

«Առ այժմ՝ Զեր ճանապարհը դէպի եջմիածին է, ուր Լուսաւորչի թափուր Աթոռը վաղուց ի վեր սպասում է իր արժանաւոր Գահակալին՝ իմաստուն և կամքով հաստատուն։ Բայց ու եջմիածնի ներկայ վիճակը միայն մի թոյլ անդրագարձումն է ազգի մեծամեծ կարիքների, ազգի, որ ոյժասպառ է լինում Ճախորդութեանց ծանրութեան ներքոյ։

«Զեր ստուար սուսահայ հօտի կարիքները պահանջում են հսկայական աշխատանք՝ ազգի հոգեոր զարգացման և ուղղութեան ասպարիզում, եկեղեցու բարեշինութեան և ժողովրդական լուսաւորութեան գործում։ Մեր՝ Կովկասի հայերիս կեանքի այս սուր վարկեանին՝ կարեոր է մի գերագոյն հովիւ զեկավար, որ հզօր, հաստատուն և խոհուն կերպով ուղղել ժողովրդի կեանքը բարոյական վերանորոգման և խաղաղ բարգաւաճման շաւզով. զեկավար, որ օգնէր մեզ լոյս ցերեկի պարզութեամբ բացայայտել ամենքին իսկական յօտերն ու ակնկալութիւնները հայերի, ու սոնք երկար տարիների ընթացքում կարողացել են հանդիսացնել իրանց հաւատարմութեան զգացմունքները մեծ քրիստոնեայ Ռուսիոյ պետութեան և նրա գահականերին։

«Յանձին Զերդ Վեհափառութեան՝ ժողովուրդը տեսնում է յատկապէս այդպիսի մի զեկավար։

«Եւ եթէ այս գործի մեջ մենք՝ Բագուի հայերս կարող լինենք օգտակար լինել՝ ուրախ կը լինենք ծառայել Զերդ Վեհափառութեանը, թոյլ տուէք դարձեալ մի անգամ՝ ևս արտայայտել Զեղ մեր լաւագոյն ցանկութիւնները և ասել՝ բարի ճանապարհ Զեղ, Հայր, և ցնօր տեսութիւնը կարելոյն փութով։

Նորին Արքութիւնը պատասխանում է հետեւեալը. «Հայ ժողովուրդը ունեցել է և պէտք է ունենայ միայն մի նպատակ՝ զարգանալ խաղաղութեան, կրթութեան և ուսման մէջ, պահպանելով անդրդուելի իր հանրաժանոթ

հաւատարիմ հպատակութիւնը դէպի Ոռուսական հզօր Կայսրութիւնը և գահը և պաշտպանելով իր եկեղեցին և լեզուն՝ իրրե անհրաժեշտ պայմաններ իր ազգութեան։ Ապա Նորին Վեհափառութիւնը յորդորեց ամենքին օրինական ճանապարհներով և խիստ օրինականութեան սահմաններում պաշտպանել ազգային իրաւունքները։

Նորին Սրբութիւնը լոելով և միւս պատգամաւորների ողջոյնները, մտաւ Բագուի հայ հասարակութեան կողմից պատրաստած արտակարգ գնացքը, որը ճիշտ ժամի 5 և կէսին շարժուեց դէպի Թիֆլիզ։ Հաղարաւոր ամբոխը կեցցէների թնդիւնով ճանապարհ ձգեց Վեհին։

---

Դնացքի մէջ Վեհափառին ողջունեց Հ. Առաքելեանը Ղարաբաղի և Ատրպատականի թեմերի հայ ազգաբնակութեան կողմից։

Քիւրտամիր և մի քանի այլ կայարաններում Նորին Սրբութեանը ողջունեցին բազմաթիւ Հայեր, Ոռուսներ և Թուրքեր։ Գանձակի կայարանում չը տեսնուած բազմութիւն էր խմբուել։ այդտեղ էր նաև Թիֆլիզի Կոնսիստորիայի նախանդամ Եփրեմ վարդապետ Սուքիասեանը, որ Կոնսիստորեայի անդամ քահանայի հետ միասին ընդառաջ էր եկել Վեհին։

Քահանայական դասը. պատգամաւորների խմբերը, հոգաբարձութեան կազմը, ազգային հիմնարկութիւնների վարչութիւնները, կանանց և օրիորդների ներկայացուցիչները, կանգնած էին իրանց համար որոշուած տեղերում։

Վեհի գնացքը երբ մօտեցաւ կայարանին խուռն բազմութիւնը բռնկուեց և կեցցէները աւետեցին Վեհափառ Հայրապետի գալուստը։

Նորին Սրբութիւնը իջաւ վագօնից և մտաւ արքայական դահլիճը, ուր ներկայացան պատգամաւորութիւնները և արտասանեցին ճառներ, որոնց պատասխանեց Ա. Հայրապետը յորդորելով ամենքին անձնուէր հաւատարիմ հպատակութիւն ռուսական կայսրութեան և գահին, դէպի

խաղաղ, քաղաքակրթական գործունեութիւն և մաքուր աշխատանք, գեղի ջերմեռանդ սէր առ հայ լեզուն, եկեղեցին և պատմութիւնը։

Ամբողջ մի ժամ՝ «կեցցէները» թնդումէին կայարանի կամարների ներքոյ։

Առաջ օտեսան ժամի 5. ին գնացքը մեկնեց. 7 և կէսին կանգ առաւ. Ազնտափա կայարանում, Այդտեղ հաւաքուել էր հայերի և թուրքերի մեծ բազմութիւն, որ եկել էր Դազախի գաւառից, եկել էին նոյնալէս յատուկ պատգամաւորութիւններ Քարվահսարայից, Աշաջրից և Սեքարից։

Ազնտափա էին եկել նաև Թիֆլիզի հայ հասարակութեան պատգամաւորները բժ. Բ., Նաւասարդեան, Ալ. Քալանթար, գնտապետ Ա., Սուրէնեան, Ռ., Յովհաննիսեան, Ա. Կաֆեան, Ե. Լալայեան և Տ., Նազարեան։

Վեհափառ Հայրապետը մօտեցաւ սալոն վագոնի լուսամօւտին և օրհնեց ժողովրդին։

Ղազախի քահանայ Զաքարիա Ապրէսեանը մի ճառով ողջունեց Վեհին, ապա Ղազախի գաւառի թուրք հասարակութեան ներկայացուցիչ Մահմադ Էֆէնտի եազուբովը, կարդաց մի ճառ թուրք լեզուով, արձարծելով այն միտքը թէ հայ ու թուրք գարերով իրար հետ ապրող ժողովուրդները պարտաւոր են միմեանց հետ ապրել համերաշխորէն, միմիանց ցաւերին ու ուրախութիւններին մասնակցել, միմեանց օգնել և որ Մատթէոս Ա կաթուղիկոսի գալուասը, որի օգտակար և ուղղամիտ գործունէութիւնը յայտնի է իրանց՝ թուրքերին լրագիրներից, մի գրաւակն է բարի գրացիական համերաշխութեան հաստատման։

Նորին Սրբութիւնը գեղեցիկ օսմաննեան թուրքերէնով պատասխանելով այդ ճառին՝ ցոյց տուեց, որ երկու տարբերը՝ հայ ու թուրք, լինելով միենոյն մեծազօր կայսրութեան հաւատարիմ հպատակներ, պարտաւոր են ապրել եղբայրաբար և միասին աշխատել ի փառս իրանց ընդհանուր հայրենիքի՝ մեծ Խուսաստանի, պահելով իրանց ազգային գոյութիւնը, բարգաւաճելով տնտեսալէս. վերջացնելով իր խօսքը նորին Վեհափառութիւնը շնորհակաչ

լութիւն յայտնեց Թուրք ժողովրդին, նրանց արտայայտած զգացմունքների համար, որից յետոյ նման յորդորով դիմեց և հայ ժողովրդին:

Երբ գնացը մեկնեց Աղոթափայից, Թիֆլիսի պատգամաւորները և մամուլի ներկայացուցիչները շարուեցին սալօն-վագոնի ընդունաբանում, ուր դուրս եկաւ Վեհափառը և Գարեգին արքեպիսկոպոսը ներկայացրեց նրան պատգամաւորութեան անգամներին Բժ. Բ. Նաւասարդեան յանուն Թիֆլիսի հասարակութեան և Ալ. Քալանթար յանուն հայ մամուլի արտասանեցին ճառեր, որ Վեհափառը լսեց մեծ ուշադրութեամբ, ոտքի կանգնած:

Բժ. Նաւասարդեան ընդդեց Թիֆլիսի, իրեւ հայ մտաւորական կենտրոնի նշանակութիւնը և յայտնեց հայ հասարակութեան բերկրանքը Վեհափառը գալստեան առիթով:

Ա. Քալանթարի ասածի ամփոփումը հետեւալն էր.

«Մենք եկել ենք ողջունելու Զերդ Վեհափառութեան դալուստը հայ մամուլի կողմից։ Հայ մամուլը, իրեւ հասարակական կեանքի հոսանքների և հասարակական կարծիքի արտայայտող, արձանագրել է իր էջերում այն ցաւու հոգսերը և այն բիւրաւոր կարիքները, որ ունի մեր ժողովուրդը. նա միենայն ժամանակ ցոլացրել է իր մէջ և այն մտածողութիւնները և խորհրդածութիւնները, որոնք նպատակ են ունեցել գտնելու ուղիներ այդ ցաւերը բուժելու և մեր առաջադիմութիւնը ապահովելու համար։ Որքան էլ համեստ և անկատար լինի հայ մամուլի գործունեութիւնը, նա մեր հասարակական գործողների մէջ էտկան տեղ է բռնել, և այսօր մենք, նրա ներկայացուցիչներս, եկել ենք Զեզ մօտ տոգորուած պատրաստակամութեան զգացմունքով գործակից լինելու Զեզ այն ծանրակշիռ խորհրդիւնների քննութեան և մշակութեան մէջ, որոնք դրուած են Զեր Վեհափառութեան և մեր հասարակութեան առաջ Աղջոյն Զեզ ջերմագին զգացմունքներով»:

Ի պատասխանի այդ ճառերին Մատթէոս Ա. մի երկար ճառ խօսեց, որի մէջ որոշեց իր ուղղութիւնն ու կա-

քողիկոսական ապագայ զործունեւթեան ընդնանուր ծրագիրը: Յոյց տալով, թէ ինչ է ներկայացնում իրանից հայ ազգը, ինչ պայմանների մէջ է տալրում նա, բացատրելով թէ հայ ազգը իր մտաւոր—հոգեոր—բարոյական էստեամբ 1600 տարիներից իւլիս շաղկապուած է անքակտելի կերպով իր ազգային—ժողովրդական եկեղեցու հետ, նա յայտնեց, թէ այդպիսի մի փոքր և աշխարհիս երեսին ցիրուցան եղած ժողովուրդ պարտաւոր է լրջութեամբ, խռոհեմութեամբ, կշռադատութեամբ գործել և ապրել ձգտել խաղաղ, աշխատաւոր բարգաւաճմամբ, հեռու մնալ յախուռն և վտանգաւոր քայլերից, որոնք կարող են վտանգի ենթարկել նրա գոյութիւնը, և մանաւանդ գործել ուղղամտութեամբ, ամուր պահպանելով այն բոլոր պայմանները, որոնց շնորհիւ նա կարող է պահպանել իր ազգային ինքնուրոյնութիւնը և իր իրաւունքների պաշտպանութիւնը առաջ տանել միայն օրինական միջոցներով, օրէնքների սահմաններում: «Տեալք,—ասաց Վեհը,—մեր ամենալաւ գործելակերպը անկեղծութիւնն է. հեռու մեզմէ կեղծիքը. մենք պէտք է անկեծութեամբ խօսինք. հասկցնենք ուրիշներուն թէ ինչ են մեր իղձերը և փափագները, ինչ է մեր նպատակը: Եւ այդ համոզմամբ ես ամենայն անկեղծութեամբ և համարձակութեամբ բացատրեցի թէ Նորին Կայսերական Մեծութիւն Ռուսաց Կայսրի և թէ Անոր մինիստր նախագահ պ. Ստոլոպինի առաջ իմ ծրագիրը, իմ ուղղութիւնը: Ես յայտնեցի Նորին Մեծութեանը, թէ ես՝ Զեր Մեծութեան հաւատարիմ հպատակս, ցարդ ամեն կուսակցութենէ բարձր մնացած եմ, թէ իմ հայեացքն է, որ հայ հոգեորականութիւնը ընդհանրապէս և Ռուսաստանի մէջ մասնաւորապէս բոլոր կուսակցութիւններէ իսպառ հեռի մնայ, և այդ նպատակին պէտք է հրաւիրեմ և Զեր Մեծութեան անկեղծ հպատակ հայ ժողովուրդը և ջերմեռանդօրէն պիտի աշխատիմ, որ քրիստոնէական վսեմագոյն բարոյականին մէջ կրթուին հայ հոգեորականութիւնը և հայ ժողովուրդը: Մինիստր-նախագահ Ստոլիպինին անկեղծօրէն յայտնեցի իմ հայեացքներս մի քանի էական

ինդիրներու մասին, օրինակ՝ երդման խնդրոյ մասին եւ յայտնեցի, որ այնտեղ, ուր երդումը կապուած է հայոց եկեղեցւոյ և հայ քահանայի հետ, այսինքն երբ երդումն կատարում է հայոց եկեղեցում կամ մի որևէ տեղ հայ քահանայի ձեռքով, այդ գեղաքում նա անպայման պէտք է հայոց եկեղեցական (գրաբառ) լեզուով կատարուի, ինչպէս կըպահանջէ հայոց եկեղեցւոյ ծէսը, նուիրագործուած 1836 թ. Պօլօֆենիայով։ Իմ գործունէութեան էութիւնը լինելու է. գործենք խոհեմարար, չդիմենք յախուռն և մանկըշուադաս գործողութիւններու, պաշտպանենք, այս մեր իրաւունքները, բայց օրէնքի սահմաններուն մէջ, օրինական ճանապարհով։ մտցնենք կարգ, կանոն և կարգապահութիւն մեր բոլոր գործերուն մէջ։ Այս ուղիով պիտի ընթանայ ձեր ընտրեալ Հայրապետը։ Եթէ Ռուսաստանի հայ ժողովուրդը համաձայն չէ իմ այդ ուղղութեան, ես պատրաստ եմ հրաժարուել։ Ես ընաւ չեմ ձգտել ոչ պատրիարքական, ոչ կաթուղիկոսական իշխանութեան, որովհետեւ խորապէս համոզուած եմ, որ հայ եկեղեցականը, նոյնիսկ սոսկ վարդապետի պաշտօնում, կարող է մեծապէս օդտակար լինել հայ ժողովրդին և եկեղեցւոյն, եթէ կամենայ անկեղծօրէն և անձնանուիրութեամբ գործել։  
Այսուհետեւ տեղի ունեցաւ մասնաւոր խօսակցութիւն, մօտ մի ժամ, երբ կաթուղիկոսը առանձնացաւ իր սենեակը։

Ը.

Վեհափառ Հայրապետը Թիֆլիզի կայարանում։ — Մուսքը բաղաբ։

Արտակարգ գնացքը մտաւ Թիֆլիսի կայարանը կիրակի, յունիսի 14-ին, առաւօտեան ժ. 11 $\frac{1}{2}$ -ին։ Երբ գնացքը կանգ առաւ, սալօն-վագոնը մտան գնդապետ Լազարեվ, պալատի կամերհէր իշխան Ն. Վ. Արդուտինսկի-Դոլգորուկով, Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնակատար Ալ Խատիսեան, վարչութեան անդամներ՝ իշխան Ա. Մ. Արդուտինսկի-Դոլգորուկով Ն. Կեօկչանիլի հետ, և կարգադիլը

յանձնաժողովի հետ՝ նախագահ Ալ. Քիշմիշեան։ Գնդաւպես Լազարեվ յայտնեց, որ եկած է ողջունելու Ամենայն Հայոց կաթողիկոս Մատթեոս Խզմիրեանի գալուստը նորին կայսերական Մեծութեան կովկասի Փոխարքայի կողմից։ Վեհափառը խնդրեց իր Հնարհակալութիւնը յայտնել նորին Պայծառափայլութեանը, Ապա կարգադիր յանձնաժողովի նախագահ Ալեքսանդր Քիշմիշեան բարի գալուստ մաղթեց նորին Վեհափառութեանը Թիֆլիսի հայ հասարակութեան կողմից։

Սալօն-վագօնի աստիճաններից մինչև արքայական դահլիճը տարածութիւնը ծածկուած էր կարմիր մահուգով։ Դահլիճում և նրա առաջ, մուտքի երկու կողմերին, շարսուած էին ազգային, հասարակական հիմնարկութիւնների բատգամաւորներ, պատւառը տնձինք հայ հասարակութեան ղանազան խուերից, բազմաթիւ տիկինայք, մամուլի, գրականութեան ներկայացուցիչներ, քժիշկներ, որոնց թւում և բժիշկեալ Յ. Գասպարեան և բոլոր նրանք, որոնք ստացել էին մուտքի տօմսակ,

Սալօն-վագօնից Վեհափառը իջաւ և առաջնորդուեց դահլիճ այս կարգով—առաջ դնում էին արծաթագունդ գաւաղաններ բռնած կարմրազգեստ երկու շաթիրներ, երկու քահանայ տաճում էին խաչը և գաւաղանը։ Կաթուղիկոսի ետևից դալիս էին հրաւիրակ եպիսկոպոսները, Մինաս Զերազ և կարգադիր յանձնաժողովի մի քանի անդամները երբ Վեհափառը կանգ առաւ դահլիճում, Թիֆլիզի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոսը ողջունեց Ամենայն Հայոց Հայրապետի գալուստը թեմի հայ հոգեստականութեան կողմից։ Ապա մի կարճ ճառ ասաց Թիֆլիսի թեմի կաթողիկոսական պատգամաւոր Սամսոն Յարութիւնեան։ Դրանից յետոյ Անդրկովկասի հայ-կաթողիկոների համայնքի կողմից իրեն ներկայացուցիչ, Առաքել Սարուխանեան հետեւեալ, ճառն արտասանեց։

«Վեհափառ Տէր,

Թիֆլիսի հայ-կաթողիկոսի հասարակութիւնը պարստակա-

նութիւն է գրել իմ ընկերների և իմ վրա շնորհաւորել Զեր Վեհափառութեան բարի գալուստը Կովկաս Նոյնպիսի պարտականութիւն է գրուած իմ վրա նաև Անդրկովկասի Հայ-կաթօլիկ Հոգեոր Կառավարութեան կօզմից, որի կենտրոնը գեռես Ախալցխայումն է: Ես առանձնապէս բաղդաւոր են համարում ինձ, որ ինձ վիճակուեց թարգման հանդիսանալ այն ամենախորին մեծարանքի դգացմանց, որով համակված է մեր հայ-կաթօլիկ Հոգեոր Կառավարութիւնը և հառարակութիւնը Զեր Վեհափառութեան նկատմամբ:

Վեհափառ Տէր, ես անձամբ ներկայ և ականատես եի, թէ ինչպէս կ, Պօլսում, ամբողջ հայ ժողովուրդը, առանց գաւանութեան խորութեան, հաւասար կերպով հրճում էր և տօնում Զեր յաղթական վերադարձը երկարամեայ աբսորից: Այժմ էլ նոյնպիսի միահամուռ հըսնանքին մասնակցում է նաև մեր հայ-կաթօլիկ համայնքը, տեսնելով ո. Գրիգոր Լուսաւորչի Աթոռի վրա բազմած այնպիսի արժանընտիր տնձն, որ վայելում է ամբողջ հայ ազգի ընդհանուր սէրն և յարդանքը և որի մուտքն, այսօր, Թիֆլիս, ողջունում ենք ի բոլոր սրան:

Հայրապետը իր շնորհակալութիւնը յայտնելով, մի համառօտ պատասխանից յետոյ, օրհնեց ամենքին և գուրս եկաւ գահինդից:

---

Հանդիսաւոր երթը կայարանից մինչև Ալէքսանդրեան պատին այսպէս կազմուեց: Վեհափառը բազմած էր 6 ձիւրով լծուած մի շքակառքի մէջ, որի ետևում կանգնած էին շախիրները, կառքի առջեից մի քահանայ ձիու վրա նստած տանում էր Կաթուղիկոսի փոքր գաւաղանը, իսկ երկու քահանաներ, նոյնպէս ձիու վրա նստած, տանում էիր կաթողիկոսական մեծ խաչը և գաւաղանը. կառքի առջեից տանում էին և երկու պարսկական եղակներ, զարդարուած մետաքսադործ ծածկոցներով: Կառքին, առջեից, ուղեկցում էին Փոխքարայի ուղարկած պատւառը

պահակախմբի կօղակները կարմիր զգեստով, մօտ 50 հոգիւ  
կաթուզիկոսի շքակառքին հետևում էին լանդօյի մէջ Գա-  
րեգին և Աշոտ սրբազնները և կտորերի մէջ նստած  
հրաւիրակ Մեսրոպ և Բարգէն վարդապետները, ինչպէս  
և Վեհափառի հետ եկած Մեսրոպ և Գրիգորիս վարդա-  
պետները, Մինաս Զերազ և պատղամաւորներն ու մաս-  
նաւոր անձինք բազմաթիւ կտորերով, Երթը, որ բաւական  
դանդաղ էր, կատարուեց Սակովայա և Միքայէլեան փողոց-  
ներով. ճանապարհին խոընուած էր ժողովրդի ահագին  
բազմութիւն, հայ տների պատշգամբներն ու լուսամռւտ-  
ները զարդարուած էին դորդերով, ծաղիկներով։ Հասնե,  
լով Ալեքսանդրեան այգու առաջ, ուր աւելի մեծ և հոծ  
էր բազմութիւնը, Վեհափառն իջաւ կառքից. այդտեղից  
սկսուեց եկեղեցական թափօրը, շքեղ ամպհովանու տակ  
մտաւ կաթողիկոսը՝ շուրջառ և գաւազան առած. ամպհո-  
վանու չորս ձողերը բանել էին իշխանն. Վ. Վ., Արքուտինովի,  
գեներալ Կօրդանով, Մարկոս Դօլուխանեան, Դաւիթ Եւզ-  
բաշեան, Ալ. Քալանթար, իշխան Արսէն Բէհրութեան՝ հեր-  
թով, Ամպհովանու առաջ 4 քահանաներ բռնեցին կաթուզի-  
կոսական քօղը, և հոգեօրականութեան «Հրաշափառ Աստ-  
ուած» շարականի երգեցողութեամբ թափօրը մեծ հանդէսով  
դիմեց դէպի Վահքի աւագ եկեղեցին։ Այդ բօպէին քաղաքի  
բոլոր հայ եկեղեցիների զանդակները սկսեցին զօղանչել։  
Թափօրի ճանապարհի վրա կանգնուած էին հայ գըպոց-  
ների սաները և սանուհիները, որոնք ծաղիկներ էին ձգում  
ամպհովանին մօտենալիս։ Վանքի մօտ մի տանիքի վրա  
կանգնած էր, մի քանի ոռւստիկինների հետ միասին, կու-  
սուհի Վօրօնցօվա-Դաշկօվան, Փօխալքայի ամուսինը, որին  
Վեհափառը, Երբ նկատեց, խաչով օրհնեց (կոմուհին ա-  
պա, իջնելով, մտաւ եկեղեցի), Վանքի գրան մօտ կարգը,  
որ մինչ այդ հիանալի էր, մի քիչ խանգարուեց, ժողո-  
վովրդի խառնման և մուտքի նեղութեան պատճառով.  
բայց և շուտով վերականգնուեց չնորհիւ ընդհանուր  
կարգադրիչ բժշկապետ Տ. Նաւասարդեանի և միւս կար-  
գադրիչների աջակցութեան։ Վանքի բակում, ինչպէս ա-

սում են, ասեղ ձգելու տեղ չը կար: Վերջապէս թափօրը  
մտաւ եկեղեցի, և հոգեորականութեան կատարած մի  
համառօտ մաղթանքից յետոյ, Վեհափառը խօսեց մի  
ազգու: և զգացուած քարոզ, որ մեծ տպաւորութիւն թռա-  
ղեց ժաղովրդի վրա.

Ժամը 1-ին Վեհափառը նոյն թափօրով եկեղեցուց  
բարձրացաւ վեհարան, ուր պատրաստուած էր հոյրաւ-  
պետական աթոռ և ուր կանգնած էին բազմաթիւ ան-  
ձինք: Մի փոքր հանգստանալով առանձնասենեալում,  
Վեհափառը նախ ընդունեց Թիֆլիսի նահանգապետ Լո-  
զինա-Լոզինսկուն, որ ողջունեց բարի գալուստ մաղթելով,  
առաջ՝ էջմիածնի Սինօդի պրօկուրօր Փարսադան Մելիք-  
Օհանջանեանին: Դրանից յետոյ Վեհը, դառնալով դահլիճի  
մէջ հաւաքուած հանգիստականներին, մի համառօտ ճառով  
կրկնեց եկեղեցում քարոզածը:

Թէ կայարանի դահլիճում, թէ եկեղեցում և թէ  
վեհարանում արտասանած քարոզ-ճառերի ընդհանուր  
իմաստը կարելի է ամփոփել հետեւեալ մոքերի մէջ: —  
ամեն բանից առաջ օրինապահութիւն, կարգապահութիւն,  
խոհեմ և զգուշաւոր դործողութիւն, խուսափումն յա-  
խուսուն և չը մտածուած ու հետեւանքները չը կշռուած դոր-  
ծողութիւններից, պաշտպանութիւն, նոյն իսկ եռանգուն  
պաշտպանութիւն աղգային-եկեղեցական իրաւունքների,  
բողոք այդ իրաւունքների դէմ եղած ոտնձգութիւնների  
առիթով, բայց այդ ամենը օրէնքների թոյլատրած առհա-  
մաններում, ամրապնդումն այն հաւատարմական զգա-  
ցումների, որ հայ ժողովուրդը միշտ արտայայտել է գէպի  
ուռսական հզօր կայսրութիւնը, խուսափումն աւելորդ ցոյշ-  
ցերից և ոգեսրութիւնից: «Այս ծափերը, կեցցէները կանց-  
նին կերթան: — ասաց Խղմիրլեան, — կանհետանան: Անոնք  
անցողական են: ձեր ոգեսրութիւնը ձեր Հոյրապետի  
նկատմամբ պէտք է ցոյց տաք դործով աշակցելով անորու-

թ.

Քաղաքազիսի եւ քաղաքական վարչութեան անդամների ներկայանալը Վեհին, Վահափառ Կարուղիկոսը Սիօնի տաճարում, Կարողիկոսի այցելութիւնը Փոխարքային,

Աէս ժամից յետոյ Մատթէոս Հ հանդիսով և ուղեկցութեամբ հոգեորականների ու մի քանի աշխարհականների մեկնեց վեհարանից և գնաց Վրաստանի մայր տաճար Սիօնը, իր յարդանքն և երկրագութիւնը մատուցանելու Վրաստանի Լուսաւորիչ ո. Նունէին և վրաց օրթոդոքս եկեղեցուն, ինչպէս արել էր և Պետերբուրգում ուռու—օրթոդոքս եկեղեցուն,

Կաթողիկոսը, համբուրելով ո. սեղանը, խաղողի ողկոյզներից խաչը, որ փաթաթուած է Վրաստանի լուսաւորիչ ո. Նունէի մազերով, և Աստուածամօր պատկերը կանգնեց ամբիոնի վրա և գիւեց տաճարում ներկայ եղաղ ժողովրդին մի կարճ ճառով, որ թարգմանում էր ուռու սերէն Ա. Խատիսեան Վեհափառ Կաթողիկոսը յայտնեց, որ այդ հին տաճարի այցելութիւնը նրա վրա խորը տպաւորութիւն գործեց: Բերելով Պօղոս առաքեալի խօսքերը, Կաթողիկոսն տսաց, որ քրիստոնէական կրօնը պարունակում է իր մէջ ամենալայն քաղաքակրթական գաղափար և որ բոլոր ժողովուրդները, որոնք խաչի դրօշակի հովանու տակ էին, աշխատում էին Քրիստոսի վարդապետութեան սկզբունքների բազմակողմանի տարածմանը. Ա. Նունէն, առաջին անգամ խաչը ձեռքին յայտնուելով հայերին հարևան երկրում, սկսեց իւր գործունէութիւնը, բացեց ճանապարհ միացնելու այդ երկրի ժողովուրդը Քրիստոսի վարդապետութեան հետ, և այդ ժամանակից շարունակվում է հայ-լուսաւորչական և իվերեան եկեղեցիների միութիւնը: Գտնուելով այս հին տաճարում և յիշելով իվերեան եղբայրական եկեղեցու պատմութիւնը, Կաթողիկոսը ազօմում է այդ եկեղեցու ժողովրդի համար, ցանկանալով նրան այսուհեան ևս բարեկեցութիւն,

թ.

Քաղաքազիսի եւ քաղաքական վարչութեան անդամների ներկայանալը Վեհին, Վահափառ Կաթուղիկոսը Սիօնի տաճարում, Կարողիկոսի այցելութիւնը Փոխարքային:

Կէս ժամից յետոյ Մատթէոս Ո Հանդիսով և ուղեկցութեամբ հոգեւորականների ու մի քանի աշխարհականների մեկնեց վեհարանից և գնաց Վրաստանի մայր տաճար Սիօնը, իր յարգանքն և երկրագութիւնը մատուցանելու Վրաստանի Լուսաւորիչ ո. Նունէին և վրաց օրթոդոքս եկեղեցուն, ինչպէս արել էր և Պետերբուրգում ուսու—օրթոդոքս եկեղեցուն,

Կաթողիկոսը, համբուրելով ո. սեղանը, խաղողի ողկոյզներից խաչը, որ փաթաթուած է Վրաստանի լուսաւորիչ ո. Նունէի մազերով, և Աստուածամօր պատկերը կանգնեց ամբիօնի վրա և դիմեց տաճարում ներկայ եղաղժողովրդին մի կարճ ճառով, որ թարգմանում էր ռուսերէն Ա. Խատիսեան, Վեհափառ Կաթողիկոսը յայտնեց, որ այդ հին տաճարի այցելութիւնը նրա վրա խորը տպաւորութիւն գործեց: Եերելով Պօղոս առաքեալի խօսքերը, Կաթողիկոսն ասաց, որ քրիստոնէական կրօնը պարունակում է իր մէջ ամենալայն քաղաքակրթական գաղափար և որ բոլոր ժողովուրդները, որոնք խաչի գրօշակի հովանու տակ էին, աշխատում էին Քրիստոսի վարդապետութեան սկզբունքների բազմակողմանի տարածման: Ա. Նունէն, առաջին անգամ խաչը ձեռքին յայտնուելով հայերին հարեւան երկրում, սկսեց իւր գործունէութիւնը, բացեց ճանապարհ միացնելու այդ երկրի ժողովուրդը Քրիստոսի վարդապետութեան հետ, և այդ ժամանակից շարունակվում է հայ-լուսաւորչական և իվերեան եկեղեցիների միութիւնը: Գտնուելով այս հին տաճարում՝ և յիշելով իվերեան եղբայրական եկեղեցու պատմութիւնը, Կաթողիկոսը ազօթում է այդ եկեղեցու ժողովրդի համար, ցանկանալով նրան այսուհեաև ևս բարեկեցութիւն,

թ.

Քաղաքազիսի եւ քաղաքական վարչութեան անդամների ներկայանալը Վեհին, Վահափառ Կաթուղիկոսը Սիօնի տաճարում, Կարողիկոսի այցելութիւնը Փոխարքային:

Կէս ժամից յետոյ Մատթէոս Ո Հանդիսով և ուղեկցութեամբ հոգեւորականների ու մի քանի աշխարհականների մեկնեց վեհարանից և գնաց Վրաստանի մայր տաճար Սիօնը, իր յարգանքն և երկրագութիւնը մատուցանելու Վրաստանի Լուսաւորիչ ո. Նունէին և վրաց օրթոդոքս եկեղեցուն, ինչպէս արել էր և Պետերբուրգում ուսու—օրթոդոքս եկեղեցուն,

Կաթողիկոսը, համբուրելով ո. սեղանը, խաղողի ողկոյզներից խաչը, որ փաթաթուած է Վրաստանի լուսաւորիչ ո. Նունէի մազերով, և Աստուածամօր պատկերը կանգնեց ամբիօնի վրա և դիմեց տաճարում ներկայ եղաղժողովրդին մի կարճ ճառով, որ թարգմանում էր ռուսերէն Ա. Խատիսեան, Վեհափառ Կաթողիկոսը յայտնեց, որ այդ հին տաճարի այցելութիւնը նրա վրա խորը տպաւորութիւն գործեց: Եերելով Պօղոս առաքեալի խօսքերը, Կաթողիկոսն ասաց, որ քրիստոնէական կրօնը պարունակում է իր մէջ ամենալայն քաղաքակրթական գաղափար և որ բոլոր ժողովուրդները, որոնք խաչի գրօշակի հովանու տակ էին, աշխատում էին Քրիստոսի վարդապետութեան սկզբունքների բազմակողմանի տարածման: Ա. Նունէն, առաջին անգամ խաչը ձեռքին յայտնուելով հայերին հարեւան երկրում, սկսեց իւր գործունէութիւնը, բացեց ճանապարհ միացնելու այդ երկրի ժողովուրդը Քրիստոսի վարդապետութեան հետ, և այդ ժամանակից շարունակվում է հայ-լուսաւորչական և իվերեան եկեղեցիների միութիւնը: Գտնուելով այս հին տաճարում՝ և յիշելով իվերեան եղբայրական եկեղեցու պատմութիւնը, Կաթողիկոսը ազօթում է այդ եկեղեցու ժողովրդի համար, ցանկանալով նրան այսուհեաև ևս բարեկեցութիւն,

երկար տարիներ Տեսնելով Սիօնի տաճարը, Կաթողիկոսը վերադարձաւ տուն։

Ժամը 4-ին Մատթէոս Ա նոյն հանգէսով գիմեց Կովկասի Փոխարքայի պալատը, ուղեկցութեամբ հրատիրակեալիսկոպոսների և վարդապետների (որոնցից մէկը՝ Մեռլոսկ վարդապետ թարգմանի պաշտօնով): Ընդունելութիւնը կայացաւ պալատի Սպիտակ դահլիճում։ Փոխարքան ըրջապատռած իր օգնականներով,—ըստ զինւորական մասին՝ գեներալ Շատիլօվի և ըստ քաղաքացիականին՝ սենատոր Միցկեվիչի, գիւանատան կառավարիչ Հօփմէյստը Պետերսոնի և իւր ու իր շքախմբի անձանց կողմից գիմեց Կաթողիկոսին հետեւեալ խօսքերով։

«Ողջունում եմ Զեր Սրբութեան բարեյաջող գալըստեան համար Թիֆլիս, ուր Զեզ անհամբեր ոպասում էր Զեր հօտը և ցնծութեամբ ընդունեց Զեզ։ Միանալով Զեր հօտի ուրախութեան, ես իմ կողմից կաւելացնեմ—բարի եկաք»։

Այս խօսքերին Մատթէոս Ա հայերէն պատասխանեց։ «Խորապէս չորհակալ եմ Զեր Պայծառափայլութեանը՝ ինձ արտայայտուած զգացմանց համար։ Ես ուրախ եմ անձամբ ողջունելու Զեր Պայծառափայլութեանը այն հաւաստիքով, որ Զեր աջակցութեամբ ինձ հնարաւորութիւն կը տրուի աշխատել յօդուտ եկեղեցու և իմ հօտիւ։

Ապա Փոխարքան իր օգնականներին, գիւանատան կառավարչին և շքախմբի անդամներին ներկայացրեց Կաթողիկոսին և, մօտ մի քառորդ ժամ առանձին խօսակցելով կարինետում, առաջնորդեց Կաթուղիկոսին կոմսուհու սենետակը, ուր առաջարկուեց ամենքին թէյ։ Ժամը 4 և 40 րօպէին Կաթուղիկոսը հրաժեշտ առաւ և վերադարձաւ վեհարան։ Ժամը 5-ին Նորին Կայսերական Մեծութեան Փոխարքան փոխայցելութիւն տուեց Կաթողիկոսին, իսկ 10 րօպէից յետոյ եկաւ այցելութեան նաև կոմսուհին՝ նրա ամուսինը։

Կամսի և կոմունաւ գնալուց յետոյ կաթողիկոսը փոքր ինչ հանգստացաւ։ Ժամը 6-ին նորին Վեհափառութեանը ներկայացան քաղաքադլիսի պաշտօնակատար Ալ. Խատիս սեանը և քաղաքային վարչութեան անդամները. Խատիս սեան ողջունեց կաթուղիկոսին հետևեալ ճառով.

«Զերդ Վեհափառութիւն».

«Թոյլ տուէք ինձ արտայայաել սրտագին ուրախութեան զգացումս Զեր Սըրութեան բարեյաջող ժամանման առիթով մեր հին քաղաքը։ Դուք ականատես եղաք այն անկեղծ ոգեսրութեան և բուռն ոքանչացման, որով աղդաբնակութիւնը ողջունեց Զեզ։ Դուք լսեցիք այն բացադանշութիւնները, որոնք լսում էին Զեր՝ քաղաք մուտք գործելու օրը։ Այդ բոլորից երեսում է այն մեծ յարգանքը. որ գեղի Զեր Վեհափառութիւնը տածում է թէ Զեր հօտը և թէ մեր քաղաքի տարբեր ցեղերին պատկանող ազգաբնակութիւնը. որին ես մեծ պատիւ ունեմ ներկայացնելու իմ անձի մէջ։

«Մակայն ուրախութիւնից և նրա արտայայտութիւններից յետոյ հայ ազգաբնակութիւնը ունի նոյնպէս կարիքներ, վշտեր և ցաւոտ հարցեր, որոնք պահանջում են Զեր Վեհափառութեան բարձր հոգածութիւնը։ Թոյլ տուէք յայտնել այն համոզումը, որ ձեր հաստատակամ և զօրեղ հոգին. Զեր փորձուած խելքը և ջերմ անձնուիրութիւնը ժողովրդի շահներին կօգնեն Զեզ բուժելու մայրենի ժողովրդի ցաւոտ կարիքները և երջանկութիւն ու բարօրութիւն կը մտցնեն մեր երկրի հայ ազգաբնակութեան և առհասարակ բոլոր հայերի մէջ. որոնց շահների հոգածութիւնը գնում է Զեր Վեհափառութեան վրա Զեր բարձր աստիճանը։ Տայ Աստուած, որպէսզի ժողովրդի ոգեսրութեան և յոյսերի մէջ քաղէք անսպառ ոյժ Զեր ծանր պաշտօնավարութեան համար։

«Յանձնելով ինձ Զեր Վեհափառութեան սուրբ աղօթքներին, խօնարհաբար խնդրում եմ թոյլ տալ բարեմաղթելու ոյժ, առողջութիւն և թարմութիւն երկար տարիներ։

«Բարի դալուստ Զեր Վեհափառութեան»։

Ժ.

Վեհանափառ Կարուղիկասը Թիֆլիզում. ընդունելութիւնը պատգամաւորիւնների, ներկայացուցիչների եւայլն.

Երեկոյեան Վանքի գլխաւոր ժուտքը, բակը, առաջնորդարանի ամբողջ ֆասադը լուսաւորուած էր Էլեքտրական լոյսով և այդ լոյսի մէջ շատ գեղեցիկ տպաւորութիւն էին թողնուած շողազարդ խաչերը և կաթողիկոսական տատիճանի էմբլեմաները. Ժողովրդի ահագին բազմութիւն էր խռնուած բակում. Ժողովրդի ցանկութեան համաձայն, ժամը 9-ին Կաթողիկոսը գուրս եկաւ պաշտուամբը և օրհնեց ժողովրդին, որը, ոգեսորուած, ցնծութեան աղաղակներով և կեցցէներով ընդունեց Հովուապետին. Սակայն երբ Ժողովուրդը երկրորդ անգամ խնդրեց, Մատթէոս Ա պատուիրեց յայտնել, թէ ամեն բանի մէջ շափառութիւն պէտք է և ծափերն ու կեցցէները աւելորդ տեղ չը պէտք է շոայլել:

Երեքշաբթի օրը, յունիսի 16-ին, առաւօտեան ժամը 10-ից սկսած մինչև երեկոյեան ժամը 8-ը. ընդմիջումներով, տեղի ունեցաւ ազգային-եկեղեցական-կրթական և կուլտուրական հաստատութիւնների ու զանազան դասակարգերի պատգամաւորութիւնների ընդունելութիւնը. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից:

Առաւօտեան ժամը 10-ին Վեհափառին ներկայացան Թիֆլիսի քահանայական դասը, թուով մօտ 60, և թեմի մի քանի տեղերից եկած քահանաները, ներկայացրեց թեմակալ առաջնորդը, արտասանելով հետեւեալ խօսքերը և մատուցանելով պատրաստի տեղեկագիր իր թեմի դրութեան մասին.

»Վեհափառ ս. Հայրապետ.

«Թիֆլիսի հայ հոգեորականութիւնը, ներկայանալով Զերդ Սրբութեան, իր խօնարհ մաղթանըներն է անում վասն աջողութեան Զեր Վեհափառութեան և խնդրում Հովուապետիդ ս. օրհնութիւնը. Ընդարձակ լինելով մեր վիճակը, ազգային եկեղեցական և կրթական գործերը այն

վիճակի մէջ չեն, որ գոհացուցիչ լինեն, մենք մեր վիճա, կում ունենք բազմաթիւ ուսումնարաններ, որոնց տարեկան համագումարը 200,000 բռրի ծախս է լինում, ուստիյն դժբաղգաբար արդիւնաւոր լինելուց հեռու են.

Այս տեղեկագրի համաձայն ամբողջ թեմում կան գովրօցներ՝ 82, ուսուցիչներ՝ 122, ուսուցչուհիներ՝ 107, աշակերտաներ՝ 4356, աշակերտուհիներ՝ 4216, ելեմուտք՝ 150,602 բռրի 41 կոպ., թիւ քաղաքների՝ 14, գիւղօրեից՝ 377, տների՝ 44,885, բնակիչների՝ 274,176 (որից արտական 147,099, իգական՝ 127,909), եկեղեցիների՝ 369, քահանաների՝ 336, թիւ վանօրէից՝ 7, թիւ ուխտատեղեաց՝ 8, վանահայր-վարդապետաց՝ 6, Հոգեոր կառավարութիւնների՝ 3, գործակալութիւնների՝ 16, Վիճ. Ատեան՝ 1:

Զեր Վեհափառութիւն, Քահանաները այժմ պիտի կարգան այն ճառը, որով յայտնում են իրանց փափագները ու ցանկութիւնները։

Քահանաների ճառը,

«Վեհափառ Տէր.

«Հայոց համայն ազգի ցանկութեամբ կոչուեցիք վերացնելու Լուսաւորչի Հայրապետական Գահի տրամութեան թափիծը և սգոյ քօղը, և այսօր ամբողջ հայութեան ասպնջական զաւակները մի բօնէ հեռու վանելով իրանց մոքի ու սրտի վրա ծանրացած համազգային վիշտը՝ ամենուրեք ուրախաձայն աղաղակներով ողջունում են իրանց բազմաշխատ Հովուապետի սղջամբ գալուստը և նրա ոգեսրութիւնը գէպի Մայր Աթոռ։

«Թոյլ տուէք, Վեհափառ Տէր, Թիֆլիսի հայ քահանայական գասին ևս որդիական խոնարհութեամբ իր սրտի բերիլրաները խառնել համայն ազգի ուրախական ձայների հետ։

«Մանր է այն խաչը, որ ազգը գնում է Զերգ Վեհափառութեան ուսին, այն բօնէին մանաւանդ, երբ շուրջը Եղեկիէլ մարգարէի նման մեռեալների ոսկորներ է տեսնում միայն, բայց ինչպէս նա չը յուսահատուեց Տիրոջից նրանց համար կենդանութիւն շնորհելու հաւատքով, չենք յուսահատուում և մենք, «քանողի յուսացեալ եմք, եթէ

տակաւին փրկեսցէ օգնականութեամբ աղօթից ձերոց...  
«Թիֆլիսի հայ քահանայական դասը մեծ յոյս ո՞նի,  
թէ Զերդ Վեհափառութիւնը խորը ուսումնասիրելով իր  
ի սիմիւոս աշխարհի յրուած հօտի վիճակը և բազմազան  
ցաւերը, դեղ ու դարսան կը գտնի. Յիրաւի բազմաթիւ  
և բազմազան են հայ ազգի և նրա եկեղեցու ցաւերը և  
նրանցից բղխող պահանջները, սակայն մեր ընդհանրու-  
թիւնը տանջող ցաւերից կարեռագոյնը և ամենը իր մէջ  
բովանդակողը՝ եկեղեցական-համայնական օրէնքի բացա-  
կայութիւնն է, մի աւերող վիճակ, որի ծանրութիւնն ու  
դառնութիւնը իր վրա կրել և կրում է դարերի ընթաց-  
քում հայ քայանայութիւնը մանաւանդ: Եւ արդարե-  
երկու-հազարամետակին մօտեցած արեւելեան հնագոյն եկե-  
ղեցիներից մինը, հայ եկեղեցին, դեռ ցայսօր չունի իր  
մշակած վաշական օրէնքը, դեռ այսօր էլ նա կառավար-  
ւում է աւանդութեամբ և անհատական հասկացողու-  
թեամբ: Ուրեմն և ամենից առաջ մեզ անհրաժեշտ է օրէնք,  
բէնք, որ կարողանար ընդգրկել մեր ազգային-կուլտու-  
րական և կրօնական բոլոր երևոյթները. օրէնք, որ առ-  
գորուած լինէր միշտ առաջ գնացող ժամանակի կենդա-  
նարար ոգով:

«Վեհափառ Տէր, Զեր անբասիր անցեալը և դէպի  
հայ եկեղեցին ու նրա նուիրապետութեան պատմական  
դերը ունեցած հաւատքը մեծ գրաւական են, որ հայ  
ազգի իզձերը Զեղանով կը գտնեն իրանց գրական լու-  
ծումը: Նոյն հաւատով և Թիֆլիսի հայ քահանայական  
դասը որդիական ակնածութեամբ Զերդ Վեհառութեան  
հայրախնամ ուշադրութեան մատուցանելով սրա հետ իր  
խոհերն ու իզձերը՝ միացնում է ազգի բոլոր խաւերի բա-  
րեմաղթութիւններին և իր մաղթանքօները սազմոսերգուի  
խօսքերով.

«Տէր պահեսցէ զքեղ յամենայն չարէ... ի թիկնա-  
մէջս իւր ընկալցի զքեղ և ի հովանի թեսոց նորա յու-  
սասցիս»:

Ստորագրութիւններ Թիֆլիզի աւագ  
և նիւարան քահանաների:

Նորին Արքութիւնը բարեհաճեց հետեւալ յորդորը  
ուղղել քահանայական գասին:

«Այն օրը, որ մենք Հայաստանեայց եկեղեցւոյ պաշտօնեայ եղանք, ուխաեցինք առաջի Առուծոյ և ժողովրդեան հաւատարիմ լինել մեր նուիրական սուրբ կոչման: Այս բազմաշարչար եկեղեցին այժմ շատ ցաւեր ունի և շատ դարձաններու կը կարուի: մենք գիտակցաբար պէտք է մտնենք այս ասպարեզը. մեզմէ ոչ ոք բռնի կը կոչուի այս նուիրական հոգեւոր պաշտօնին, այլ կատարեալ յօժարութեամբ: Արդ՝ մենք պէտք է կատարեալ հաւատքով կատարենք մեր ո, պաշտօնը և պատուաւոր կենցաղով մեր դիրքը բարձրացնենք ժողովրդեան առջեւ և անթերի կատարել փութանք այն խոստումը, որ առաջի ո, Սեղանին կընենք սիրով: Իրր գիտակց եկեղեցւոյ անցեալ դարաւոր դործունէութեան մենք պէտք է քաջ յիշենք թէ մեր սուրբ նախնի հայերը առլցուն հաւատով անվիթար պահած են Հայաստանեայց եկեղեցին, մեր գժբաղդ օրերու ու հալածանքներու մէջ միախմարած և սփոփած են հայ ժողովուրդը և քաջալերած ու խրախուսած իր գժուարին և տագնապալի օրերուն մէջ: Արդ, դուք ևս, հայ քահանայ եղբայրք, նոյն ուխտն ունիք ըրած, նոյն նուիրական կոչման մէջ կը գտնուիք և նոյն գժուարին պայմաններով ժամանակի մէջ:

«Ստոյգ է թէ հոգեւոր բարձր իշխանութեան պատասխանաւութիւնը ծանր է և մեծ, սակայն պէտք է գիտնաքթէ միայն իմ վրայ չի ծանրանար, այլ և ձեզ վրայ և ժողովրդեան վրայ: այն, դուք ամենքդ ալ պատասխանաւութեան բաժին ունիք ու ձեր մեծ պարտաւորութիւնն է քրիստոնէական հաւատքը տարածել ժողովրդեան բոլոր խաւերու մէջ:

«Դուք, քրիստոնէական կրօնի բարձր սկզբունքներով տոգորուած, պէտք է կարգապահութեան օրինակ լինիք ոչ թէ բարձր հոգեւոր իշխանութեան սաստէն ու պատժէն վախնալով, այլ ձեր սուրբ ուխտի ներքին գիտակցութեամբ:

«Հայ քահանայ եղբայրներ, ձեզմէ կը պահանջուի

հնազանդութիւն և կարգապահութիւն. եթէ դուք չհնազանդիք ձեր առաջնորդներու հրամաններուն, այն ատեն դուք հակասած կը լինիք ձեր գրաւորապէս արտայայտած բաղձանքներուն և հերքած կը լինիք ձեր փափագին. և եթէ ձեր քահանայական պարտաւորութեանց մէջ թերաւնաք և կարգապահ լինիք, ակներև է թէ խոտութիւն պիտի տեսնէք:

«Դուք մեծ մասամբ կրօնի ուսուցիչներ էք. պէտք է կատարեք ձեր այս փափուկ պաշտօնը մեծ աշալլջութեամբ, ոչ թէ գասագրքի մէջ համարներ ցոյց տալով ձեր պարտքը կատարած համարել, այլ կրօնի ոգին, քրիստոնէական անկեղծ հաւատով ներշնչեք հայ զաւակներուն. Հեռատեսութեամբ ի նկատի առնելով, որ աշխարհի հոսանքներու դէմ պատրաստուելու հարկադրուած են նոր սերունդները, պէտք է ըստ այնու կրթել մանուկներու միտքն և առաւելապէս հոգին:

«Դուք այս գործին մէջ գեր ունիք կատարելիք, իսկ թէ դուք ձեր այս յոյժ փափուկ պաշտօնը և գերը ինչ աստիճան խնամքով կը կատարեք, այդ ձեր խիզճը կրնայ վկայել:

«Դուք տանը դատաւոր էք. հայրն, սփոփիչն ու միսիթարիչն էք. և դուք պէտք է ձեր ժողովրդին ու բախութեան ուրախակից և տրտմաւթեան տրտմակից լինիք. դուք քրիստոնէական ոգին իբր առտնին քարոզիչներ ծաւալեցէք հոն. եկեղեցւոյ մէջ, Աստուծոյ Տանը, կը քարոզէք, իսկ դուրս ձեր գործքով և խօսքով հակառակ օրինակը ցոյց կուտաք: Ձեր կեանքը և ձեր նիստ ու կացը ձեր քարոզած ճշմարտութեան համաձայն պէտք է լինի:

«Դուք պէտք է զգոյշ լինիք և չթերանաք ձեր պաշտօնին մէջ. հակառակ պարագային դառնապէս կը ցաւիմ ըսել թէ արդարութիւնը պիտի գործագրուի. ինչպէս որ արժանաւորները կը վարձատրենք, այնպէս ալ յանցաւորները պիտի պատժուին:

«Դուք իբր խաղաղութեան և քրիստոնէական սիրոյ

պաշտօնեայ պէտք է ձեր սիրոյ յորդորներով գիւրացնէք հոգեոր բարձր իշխանութեան գործը, որպէսզի հետզհետէ ծաւալ գտած և յաճախակի ամուսնալուծման դժբաղդ դէպքերը նուազին և քրիստոնէական ոէրը տիրէ հայ ընտանիքներու մէջ, որպէսզի կարենայ մնալ իր հին բարի համբաւին մէջ։

«Եթէ դուք կըսէք, թէ օրէնքը խառնակ է, և կըսէք, որ ձեր վիճակը բարելաւի. դուք եղէք առաջին օրինակ օրինապահութեան։ Այս, հայ ժողովուրդը կրօնասէք է, բայց երբ տեսնէ, որ իր քահանան եկեղեցւոյ մէջ սուրբ կեանք կը քարոզէ և ինքն անսուրբ կենցաղ ունի, կը գայթակղի, ու հետեանքը ծանր կը լինի հովուին և հօտին համար։

«Կը կրկնեմ. դուք, հայ քահանաներ, իբր խաղաղութեան պաշտօնեաներ պէտք է երկպառակութիւններ չգէք և կուսակցութիւններէ բարձր գտնուիք. Դուք ձեր պատասխանատութեան և պատույ բաժինը գիտցէք, ձեր ուժերը միացած հոգեսոր բարձր իշխանութեան ուժերուն, եկեղեցին բարեկարգ կինի և պայծառ ու կառաջադիմէ յօդուտ քրիստոնէական ոգւոյ զարգացման և հայ ժողովը կանչական մաքուր կենցաղին։ Օրհնեալ լինիք և Տէրը զօրացնէ ձեզ բոլորիդ ձեր նուիրական սուրբ պաշտօնին մէջ։»

### Ապա ներկայացան Վեհին

1. Սրհեստաւորների համբարների ներկայացուցիչները,
2. Մեշանների ընկերութեան ներկայացուցիչները,
3. Արդութեան իշխանների տոհմը,
4. Գեղարսեստի խմբագրութիւնը,
5. Ազգագրական ընկերութիւնը,
6. Բանուորութեան ներկայացուցիչները,
7. Թիֆլիզի մանր վաճառականների ընկերութեան ներկայացուցիչները,
8. Այլ քաղաքներից եկած պատգամաւորութիւններ։ Նոյն օրը ցերեկուայ ժամը 3-ին նորին Վեհափառութեանը այցելեց Թիֆլիզի Պալսից հիւպատոս Սարդար Հիւ-

մայունը պարսկահայ Խոսրով Արքումանեանի ուղեկցութեամբ:

Ընդհանուր հիւպատոսը ողջայնի հետևեալ խօսքերն ասաց.

«Խորին յարգանքով ողջունում եմ ժամանումը Մեծիդ Խալիֆային, մեծապէս գոհ եմ, որ իմ գալուստը ևս տեղի ունեցաւ մի քանի օր առաջ և դրանով ես հնարաւորութիւն ունեցայ անձամբ Զեղ ողջունելու բազգին արժանանալ ու հաւաստիացնել Զեղ, Մեծ Խալիֆայիդ, թէ իրանի մեծաշուք տէրութիւնը բարեացակամ է դէպի Հայոց յարգելի ժողովուրդը Հաւատացած եմ, որ ինչպէս մինչեւ այսօր միշտ սէր և համակրութիւն է տիրել իրանի հզօր պետութեան և Հայ ազգի միջեւ, այժմ Զեր Վեհափառութեան յորդորանքով աւելի ևս կամրապնդուեն այդ սէրը և համակրութիւնը Յատկապէս այդ կէտը Զեր բարձր ուշադրութեան եմ յանձնում»:

Վեհափառ Հայրապետը սիրալիր ընդունելութիւն ցոյց տուեց հիւպատոսին, որին և Ճնորհակալութիւն յայտնեց այցելութեան համար:

Նոյն օրը ներկայացան Վեհափառին Տիկին Հ. Աւթանդիլեան և պ. Ա. Վարուխանեան և ներկայացրին յուգուտ ադանացիների կազմակերպած զբօսանքից գոյացած 3500 ր.

Յունիսի 17-ին Նորին Սրբութիւնը հետն ունենալով Գարեգին Առքեպիսկոպոսին և Մեծօրոպ վարդապետին այցելեց Փոխարքայի ժամանակաւոր պաշտօնակատար գեներալ Շահիլովին:

Դեներալը շատ սիրով ընդունեց Վեհին այս խօսքերով. Ճնորհաւորում եմ Զերդ Վեհափառութեան գալուստը Ռւրախ եմ և ես Զեր հօտի հետ միասին: Համոզուած եմ, որ Զեր Վեհափառութիւնը կը նթանայ այն օրինակելի և անբասիր ճանապարհով և ցոյց կը տայ այն գործունէութիւնը որ ունեցել էք անցեալում: Եւ յատկապէս Զեր ողով և ուղղութեամբ կը կրթէք հայ մատաղ սերունդը, կը զարգացնէք քրիստոնէական վարդապետութեամբ,

ուսով նրանք կը սնուեն իբրև քրիստոնէութեան հաւատալիմ\*  
գաւակներ և հնազանդ քաղաքացիներ պետութեան համար»:

Նորին Վեհափառութիւնը գեներալի խօսքերին պատասխանեց այսպէս. «Եատ շնորհակալ եմ ձեզանից, որ օրինակ բերիք իմ անցեալ գործունէութիւնը՝ Հաւատացած եղէք, որ դուրծելու եմ այնպէս, ինչպէս եղել եմ անցեալում, և պիտի վստահացնեմ ձեզ, որ ինձ յանձընուած հօտի մատազ սերունդը իմ օրով կը թուելու է օրինական ընթացքով և իմ ոգով, ըստ որում ապագայում ունենալու ենք իսկական քրիստոնեաներ և հաւատարիմ հպատակներ»:

Ապա մատուցուեց սուրբ. Տեսակցութիւնը տեսեց  
25 ըսպէս:

Նոյն օրը Վեհափառին այցելել են Անդրակովկասի Շէլսուլ—Իսլամը. Թիւրքաց հիւպատոսը, պետական բանակի թիֆլիզի բաժանմունքի կառավարիչ Բեղորբազովը և Էջմիածնի Սինոդի Պրօկուրօր Մելիք. Օհանջանեանը, Նոյն օրը Վեհափառին ներկայացան

1. Կովկասնեան Հայոց բարեգործական ընկերութեան խորհուրդը,

2. Գայեանեան դպրոցի հոգաբարձութիւնը,

3. Յովիանեան դպրոցի հոգաբարձութիւնը,

4. Ուսուցչական միութեան վարչութիւնը,

5. Հայ գիւղատնտեսական և Ցնայնագործական ընկերութիւնը,

6. Կուսանաց վանքի միանձնուհիները,

7. Կենտրոնական նպաստամատոց յանձնաժողովը,

8. Մշակի խմբագրութիւնը.

### ԺԱ.

Հանգ. Արիստակէս Արքեպիսկոպոս Սեղբակեանի տապանակարի նույրագործումն. Ընդունելութիւններ. Վեհ. Հայրապետը այցելում է Մետեխի քանոր եւ Կուսանաց վանքը. Ներսիսեան հոգ. դպրոցի հիմնարկութիւն. Վեհափառի մեկնումն Թիֆլիզից.

Յունիսի 18-ին համաձայն Վեհափառ Հայրապետի

կարգադրութեան տեղի ունեցաւ հանգուցեալ Արիստաւկէս արքեպիսկոպոս Սեփրակեանի մահարձանի բացումը, որին բարեհաճեց Վեհը ներկայ գտնուելը

Պատարագի Վանքի աւագ եկեղեցում սկսուեց ժամը 10 և կէսին: Հայրապետը վեհարանից եկեղեցի իջաւ հոգեսրականութեան ուղեկցութեամբ ժամը 11-ին: Թէ վանքի բակում և թէ տաճարի մէջ խռնուել էր ժողովրդի ահագին բազմութիւն, բազմաթիւ էին և թիֆլիսի հայ ինտելիդենտ հասարակութեան, դրողների, մամուլի և զանազան գասակարգերի ներկայացուցիչները: Ամենքը եկել էին լսելու Հայոց Հայրապետի քարոզը եկեղեցում ազգային-եկեղեցական այնպիսի նուիրական գործիչների մասին, ինչպէս են Սահակ, Մեսրոպ Ժարդմանիչները, այնպիսի արժանաւոր և բազմերախտ եկեղեցականի մասին, ինչպէս էր հանգուցեալ Սեփրակեանը, և մատուցանելու նրա յիշատակին արժանավայել յարգանք, մասնակից լինելով նրա մահարձանի բացման:

Պատարագին էր Ղարաբաղի թեմի առաջնորդ Աշոտ եպիսկոպոս Շախնան:

Գրքի ընթերցումից յետոյ Վեհափառ Հայրապետը դաւագան ի ձեռին հետեւեալ քարոզը խօսեց:

«Հայոց եկեղեցին այսօր կը կատարէ անմահներու յիշատակը: Այսօր, շնորհիւ Ժարդմանչաց, Հայոց եկեղեցւոյ մէջ Աստուծոյ խօսքը, Աստուծոյ խաղաղութիւնը կը հնչէ հայ լեզուով:»

«Այն ժամանակ, երբ Հայոց եկեղեցւոյ մէջ «Ճէր Աղորմեան» կը հնչէր ասորական և յունական լեզուներով, և Մեսրոպ այս ամենը տեսնելով կը ցաւէր և կը տքնէր հայ այբուբենը գտնել, որպէսզի աստուածային օրհներգութիւնը հնչէ հայ լեզուով: Ա. Սահակ և Մեսրոպ միմեանց գործակցութեամբ ոչ միայն Աստուածաշունչը այլև մի շարք արժեքաւոր աշխատութիւններ նուիրեցին հայ եկեղեցին: Հետևապէս պէտք է ամեն ժամանակ յիշենք զանոնք և թէև անոնք մեռած են, բայց անոնց հողիները կիշխեն հայ եկեղեցւոյ մէջ: Յիշեցէք

անոնց աշակերտները՝ Եղնիկ, Կորիւն և այլ մի շարք թարգմանիչներ, որոնք հայ գրականութեան համար չարաշար աշխատեցան և մեզի հասցուցին իրենց բեղմնաւոր փաստակները, Մի գուցէ դուք հայ կեանքի մասին խօսելու ժամանակ անուշադրութեամբ անցնիք և չը յիշեք զանոնք։ Ո՛չ, մենք պէտք է առանձին երախտագիտութեամբ յիշենք զանոնք և ընդմիշտ տածենք մեր յարգանքը գէպի այդ յարգելի անձնաւորութիւնները, Անոնց չնորհիւ էին, որ հետզհետէ Հայաստանի խուլ անկիւնները բացուեցան գպրոցներ և, իբրև լուսոյ միւմի խորան, տարածեցին իրենց ճառագայթները լուսաւորելու Հայաստանի խաւար անկիւնները։ Ուրեմն մեր յարգանքը տածենք, և յաւէտ օրհնեալ լինի անոնց յիշատակը, որոնք իմացան գործել և առաջ տանել հայ կեանքը և գրականութիւնը։

«Թէ հայ ժողովրդի, թէ եկեղեցւոյ կեանքը փոթորկալից էր. սակայն անոնք իրենց քարոզներով կարողացան խաղաղութիւն տարածել և այդ խաղաղութիւնն է, որ ամեն յաջող գործունէութիւն առաջ կը ըերէ։

«Հին գործիչներուն յաջորդեցին նորերը, Եւ այսօր, պահ մը ետքը, մենք ամենքս պէտք է կանգնինք մի նոր գործչի գերեզմանի առաջ, զոր նոյնպէս պէտք է ցողենք մեր արտասուրով։ Այդ գերեզմանը հանգուցեալ Արիստակէս արքեպիսկոպոսի գերեզմանն է, մի եկեղեցականի, որ եւկար տարիներ գործած է իրու Թիֆլիսի, Աստրախանի թեմի առաջնորդ, իբրև սինոդական. գործած է ողջամտութեամբ, հաստատակամութեամբ, անսասան և խորին համոզունքով, անդրդուելի ոկրունքներու վրայ հիմնուած, մի եկեղեցական, որ մեծ թափով և եռանգով աշխատեցաւ բարձրացնել հայ եկեղեցւոյ և հոգեսորականութեան պատիւը իր հմուտ եկեղեցական-վարչական գործունէութեամբ։ Եւ այն բոլեին, երբ հայ եկեղեցին և ժողովուրդը մեծապէս պէտք ունէին այդպիսի մի արժանաւոր հսկուի, մահը գժրազդաբար, խլեց զայն մեզմէ, թողլով քաղցր յիշատակ ժողովրդի որտում, Հարկաւ աշ-

Խարհիռ վրայ ոչ ոք անսխալ կտմ անսրբագրելի չէ. անսրբագրելին կարող է լինել միայն յաւիտենականը. Մաղթենք, որ Տէրը ընդունի զայն յաւիտենականութեան մէջ, Անոր յիշատակը թող անմահ մնայ ամենուս սրտում. Աւընմն ամենըս երթանք այդ մեծ եկեղեցականի և մտրդու գերեզմանի մահարձանի բացմանը ներկայ լինելու և մեր յարգանքը ժատուցանելու անոր»:

Խորին տպաւորիչ և վեհ ազգեցութիւն գործեց ժաղովովի վրա այս քարոզը:

Պատաշագի աւարտումից յետոյ ամբողջ հոգեսրականութիւնը, առաջնորդութեամբ Հայրապետի, որ զգեստաւորւած էր և բռնած ունէր Հայրապետական գաւառզան ու խոչ եկեղեցական մեծաշուք թափօրով դիմեց դէպի Սեղրակեանի գերեզմանը. Այնտեղ դրսւած էր Հայրապետի համար ամոռ. Մահարձանը ծածկուած էր սպիտակ շղարշով, կապուած ու ժապաւէնով. Նրա շուրջը խռնուած էր հանդիսականների ահագին բազմութիւններկու սեռի:

Սկսուեց հանդիսաւոր հոգեհանգիստը, որի վերջում Հ. Առաքելեան և Ա. Քալանթար ճառեր խօսեցին, որից յետոյ Վեհափառ Հայրապետը փակեց հանդէսը աղօթքով և մեկնեց վեհարան:

Նոյն օրը Վեհափառին ներկայացան

1. Հայուհեաց բարեգործական ընկերութեան վարչութիւնը,

2. Ռիբախնամ ընկերութեան վարչութիւնը,

3. Ներսիսեան գպրոցի ուսուցչական խումբը,

4. Նոյն գպրոցի հոգարածութիւնը,

5. Թիֆլիսի ծխական գպրոցների հոգարածութիւնները,

6. Թիֆլիսի եկեղեցիների ստորին պաշտօնեաները,

7. Կոնսիստորիայի պաշտօնեաները,

8. Թեմական խորհրդի անդամները,

9. Հայ գրականագէտները,

10. «Գիւղատնտիսիք խմբագլութիւնը»

11. «Մեղու» ընկերութեան վարչութիւնը և այլն:

Յունիսի 19-ին Վեհափառ Հայրապետը ուղեկցուաթեամբ իր շքախմբի անդամների այցելեց Մետեխի բանտը, որի մուտքին Վեհափառին ընդունեցին բանտի կառավարիչը, Թիֆլիսի փոխնահանդապետ Զերնեաւոկին, բանտի վերտառեսուներ Ալ. Խատիսեան, գեներալ Գր. Դօրզանեան և Թիֆլիսի ոստիկանապետը:

Վեհափառը առաջնորդուեց բանտի գլխաւոր եկեղեցին, ուր ընդունեց եկեղեցու ոռւս քահանան և ուր գանւում է և Վարդան սպարապետի դստեր՝ Շուշանիկի դամբարաննը:

Բարձրանալով եկեղեցու սեղանը, Կաթողիկոսը համբուրեց, համառօտ աղօթք արտասանեց և ապա մոտ Շուշանիկի գամբարանը և երկրպագեց։ Այդտեղից Վեհափառը առաջնորդուեց հայոց մատուռը յանուն Վարդան Զօրավարի։ Հայ բանտարկեալներից բազկացած երգեցիկ խումբը մատուռի քահ։ Մատինեանցի հետ շարականավ ընդունեց Կաթողիկոսին, Ընդարձակ մատուռի մէջ հաւաքուել էին հայ բանտարկեալները։ Աղօթքից յետոյ Գր. քահ, Մատինեան մի համառօտ ճառով բացարեց հայ մատուռի հիմնադրութեան պատմութիւնը։ Ապա Վեհափառը մի քարոզ խօսեց, ուզդեալ հայ բանտարկեալներին, որ բառ առ բառ թարգմանեց յետոյ Ալ. Խատիսեան ոռւսերէն։

Իր քարոզում Վեհը այն միտքը յայտնեց, թէ բանտարկութիւնը ծանը փորձութիւն է, բայց այդ փորձութիւնը որւում է մարդուն ի հատուցումն անդոյշ քայլերի։ Բանտարկութեան մէջ մարդիկ աւելի ժամանակ և միջոց ունեն ինքնամփոփման, մտածողութեան և հնարաւորութիւն ուղղուելու։ Բայց նրանք չը պէտք է յուսահատուեն։ Նրանք, ընդունելով այդ փորձութիւնը, պէտք է հոգատակուեն երկրի տիրող օրէնքներին և յօյս ունենան

արդարադատութեան վրա։ «Ես ինքս, — ասաց Վեհափառ-  
ուը, կրած եմ բանտարկութեան ծանր հոգեկան տան-  
ջանքը, կը մխիթարեմ ձեզ, կը յորդորեմ չը յուսահա-  
տիլ և յօյս կապել նորին Կայսերական Մեծութիւն Կայսր  
Նիկոլայ Ալէքսանդրօվիչի ողորմութեան և գթութեան  
վրա։ Խակ իմ պարտքն է մտածել ձեր ամենքի վիճակը  
թեթեացնելու մասին։ Օրհնեալ լինիք, օրհնեալ լինի  
Ռուսաց Մեծազօր Կայսրը, որուն հովանաւորութիւնը  
մենք կը վայելենք»։

Բանտից Վեհափառը գնաց Կուսանաց վանքը, ուր  
մեծ շուքով ընդունուեց և հիւրասիրուեց միաբան կոյսե-  
րի կողմից։

Նոյն օրը երեկոյեան ներկայացան Վեհին երկրորդ  
անգամ ներսիսեան դպրանոցի հոգաբարձուները, որոնց  
հետ Վեհը երկար խօսակցութիւն ունեցաւ։

---

Յունիսի 20-ին, մեծ հանդէսով և շուքով կայացաւ  
ներսիսեան դպրոցի նոր շինութեան հիմնարկութիւնը,  
որին ներկայ էին Ամենայն Հայոց կաթողիկոս Մատթէոս  
Ա. ամբողջ հայ հոգեորականութիւնը, Թիֆլիսի նահան-  
գապետ Լոզինա-Լոզինսկին, փոխնահանգամետ Զերնեա-  
վորկին, ոստիկանապետը, քաղաքագլխի պաշտօնակատար  
Ալեքաստիսեան, հայ ինտելիգենցիայի և ազգային կուլ-  
տուրական, հասարակական բոլոր հաստատութիւնների  
ներկայացուցիչները և ժողովրդի խուռն բազմութիւն։

Կաթողիկոսը ամպհովանու ներքոյ, զգեստաւորուած,  
ներկայ եղաւ հիմնարկութեան օրհնութեանը, ինքն իր ձեռ-  
քով դրեց հիմնարկութեան առաջին քարը, իսկ երկրորդ  
քարը տուեց դնելու Թիֆլիսի նահանգապետին։ Երրորդ  
քարը դրեց Թիֆլիսի թեմի առաջնորդ և ներսիսեան  
դպրոցի հոգաբարձութեան նախագահ Գարեգին առքե-  
պիսկոսոս Սաթունեան։ Իրեւ պատիւ տուեցին դնելու  
քարեր հասարակութիւններից զանազան անձերի՝ Մինաս  
Զերազին, Ալեքաստիսեանին, հոգաբարձութեան անդամ-

ներին, Ա. Քալանթարին, Հ. Առաքելեանին, Ա. Սարու-  
խանեանին և այլոց։ Հոգաբարձութեան կողմից մի հա-  
մառօտ՝ բայց գեղեցիկ ճառ խօսեց հոգաբարձու Ա. Պո-  
պօվեան։ Մի ճառ ևս խօսեց Յ. Տէր-Միրաքեան։ Ապա  
Մատթէոս Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը մի իմաստա-  
լից քարոզ խօսեց, ցոյց տալով Ներսէս Աշտարակեցու-  
փեմ նշանակութիւնը, նրա հիմնած գործի մեծութիւնը,  
օրհնեց բարերար Ա. Մանթաշեանին՝ արծադելով այն  
միտքը, թէ Ռուսաստանում մտաւորական բարդաւաճումն  
և քաղաքակրթական զարգացումն հայ ժողովուրդը պար-  
տաւոր է Ռուսաց Մեծազօր Պետութեան հովանաւորու-  
թեան, օրհնեց Կայսր Նիկոլայ Ա. Ալեքսանդրովիչին։

Օրհնութեան հանդէսը վերջանալուց յետոյ, Կաթո-  
ղիկոսը և հանդէսին բոլոր մասնակցողներն ու հիւրերը  
հրաւիրուեցին շքեզօրէն զարդարուած վրանի ներքոյ, ուր  
պատրաստուած էր ճոխ սեղան հիւրերի համար և առան-  
ձին սեղան, բարձրավանդակի վրա, Կաթողիկոսի համար։

Առաջին բաժակը Մատթէոս Ա. Վեհափառ Կաթողի-  
կոսը առաջարկեց Կայսր Նիկոլայ Ալեքսանդրովիչի կենա-  
ցը, ասելով որ Նորին Մեծութեան սրտին միշտ մօտ է  
եղել ժողովրդի լուսաւորութեան գործը և Նա հաւատա-  
ցած է, որ Ներսիսեան դպրոցը կը դաստիարակէ պե-  
տութեան հաւատարիմ հպատակներ, արժանաւոր քաղա-  
քացիներ և հայ ազգի պիտանի անդամներ։

Կենացը Ընդունուեց մեծ ոգեւորութեամբ և «կեցցէ-  
ներով»։

Երկրորդ՝ բաժակը Թիֆլիսի նահանգապետ Լողինա-  
լօղինսկին առաջարկեց Վեհափառ Կաթողիկոսի կենացը  
և իր ճառի մէջ յայտնեց այն միտքը, թէ երբ Ամենայն  
Հայոց Կաթողիկոս Մատթէոս Ա. հայոց եկեղեցու Պետը,  
իրան արեց մեծ պատիւ՝ հրաւիրելով դնել հիմնարկութեան  
երկրորդ քարը, նա մեծ հպատակութեամբ Ընդունեց այդ  
պատիւը, որովհետև Վեհափառի այդ հրաւերի մէջ տես-  
աւ մի մեծ դրաւական պետութեան և եկեղեցու լծակ-  
ցութեան, և համերաշխ, միաբան գործակցութեան լու-

սաւորութեան ասպարէզում, Մատթէոս Ա իբրև հայոց եկեղեցու Պետ, և ինըն, իբրև ներկայացուցիչ ռուսական կառավարութեան, գնում են առաջին և երկրորդ վէմերը այն շինութեան, որ կոչուած է ուսման և կրթութեան ջահ հանդիսանալ: Ի հարկէ, — ասաց նահանգապետը, — այդ քարերը նման չեն այն քարերին, որ մի գիտ գցում է մի հորի մէջ և 10 խելօր չեն կարողանում հանել, բայց որանը հիմնաքարեր են այն մեծ կոճողի, որ եկեղեցու և պետութեան ներկայացուցիչների ձեռքով ձգւում է իբրև հիմք կրթարանի, ուստի նա առաջարկում է նորին վեհափառութեան Ամենայն Հայոց Կաթողիկոսի կենացը, Կաթողիկոսի, որի հայեացքները եկեղեցու և պետութեան յարաբերութիւնների մասին նրան շատ լաւ յայտնի են:

Այս բաժակը նոյնպէս ընդունուեց մեծ ոգեորութեամբ և կեցցէներով:

Երրորդ բաժակը առաջարկեց Թիֆլիսի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոսը նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայ կոմս Վորօնցով՝ Դաշկովի կենացը, որ եղել է հաւատարիմ թարգման և արտայայտիչ նորին Կայսերական Մեծութեան ցանկութիւնների և հայեացքների:

Նոյն ոգեսրութեամբ և կեցցէներով ընդունուեց այս բաժակը:

Հետզհետէ առաջարկուեցին Փոխարքայի օգնական գեներալ Շատիլովի, Թիֆլիսի նահանգապետի, Փոխ-նահանգապետի կենացները:

Աղա Գարեգին արքեպիսկոպոսը համառօտակի զեկուցանելով պատմութիւնը՝ թէ ինչ հանգամանքների և պայմանների մէջ Ալ Մանթաշեան ընդունեց դպրոցի նոր շինութեան ծախսերն իր վրա առնելու առաջարկը, յայտնելով որ իր համար մեծ բաղդաւորութիւն և պատիւ է համարում կցելու իր անունը ներսէս Աշտարակեցու անուան հետ, առաջարկեց Մանթաշեանի կենացը, որ մեծ որոշներով ընդունուեց և որին պատասխանեց Առա-

քել Ամրութանեան, իբրև ներկայացուցիչ Մանթաշեանի,  
մի քանի շնորհակալական խօսքերով։

Աշոտ Եղիսկոպոս Նախեան առաջարկեց խմել Էջմի-  
ածնի Աթոռի քարգաւաճման և ծաղկման համար, որ  
ընդունուեց ուրախութեամբ։

Ապա առաջարկուեցին բաժակներ հոգաբարձութեան,  
նրա նախագահի և Թիֆլիսի քաղաքադլուխ Զէրքէզովի  
ու նրա պաշտօնակատար Խատիսեանի կենացը։ Վերջինն  
արտասանեց մի սրամիտ ու գեղեցիկ ճառ, ցոյց  
տալով որ Եկեղեցու և պետութեան ներկայացուցիչների  
միաբան հիմնարկութիւնը կրթութեան մի մեծ տաճարի՝  
պէտք է ունենայ մեծ նշանակութիւն համապետական և  
ժողովրդական տեսակէտից։

Հոգաբարձութեան կողմից կարգացուեց ընագիրը  
այն հեռագրի, որ նոյն օրը պէտք է ուղղուէր հիմնագիր  
Ալ. Մանթաշեանին, որով յայտնուում է նրան գպրոցի  
հիմնարկութիւնը Մատթէոս Ա-ի օրհնութեամբ և աջակ-  
ցութեամբ պետութեան ներկայացուցչին։

Վեհափառը, նօրից օրհնելավ ժողովրդին, մեկնեց  
նոյն հանդէսով։

Վեհափառ Կաթողիկոսը իր կողմից ուղարկեց Ալ.  
Մանթաշեանին հետեւեալ հեռագրիրը։

«Այսօր ներկայութեամբ կառավարութեան, հայ հո-  
գեուականութեան ու հասարակական հաստատութիւն-  
ների ներկայացուցիչների և մասնակցութեամբ ժողովրդի  
ահագին քաղմութեան՝ ես առանձին հաճութեամբ դրեցի  
առաջին քարը Ներսիսեան գպրոցի շինութեան, որի  
ծախըքերը ինքնայօժար խոստացել էք հոգալու ձեր միջոց-  
ներով։ Օրհնում եմ ձեր մարդասիրական այս մեծ գործը  
և մաղթում եմ ձեզ և ձեր ազնիւ գերդաստանին երկար  
կեանք ու ամեն առողջութիւն։»

«ՄԱՍԹԵՈՍ ԿՈԹՈՂԻԿՈՍ»

Վեհափառ Հայրապետի Թիֆլիս եղած ժամանակ ա-

մենայն օր Վանքի մայր Եկեղեցու բակը առաւօտից մինչև գիշերուայ ժամը 11-ը լի էր լինում ժողովրդի ահապին բազմութեամբ, որը կամենում էր տեսնել սիրեցեալ Հայրապետին և գոհացումն տալ իւր զգացմունքներին։ Ա. Հայրապետը օրական մի անգամ երեւում էր պատշգամից իր ժողովրդին, որի բուռն կեցցէները և յախուռն ովացեաները զզրդեցնում էին օդը երկար ժամանակ։

Կիւրակի և երկուշաբթի օրերը, որոշ ժամեր վանքի բակում հաւաքուած բազմութիւնը հերթով ընդունուում էր առաջնորդարան ս. Հայրապետի ս. աջը համբաւելու երեկոյեան ժամը 8½-ին, Կաթողիկոսին ներկայանալու և իր վերջին հրաժեշտը տալու պատիւն ունեցաւ կարգադիր յանձնաժողովը, որի կողմից բժշկապետ Բ. Նաւասարդեան ինդրեց ներողամիտ լինել, եթէ յանձնաժողովը չը կարողացաւ ընդունելութեան վերաբերեալ կատարել այն ամենը, ինչ որ ցանկանում էր և ինչ որ վայել էր Ամենայն Հայոց Կաթողիկոսին։

Մատթէոս Ա պատասխանեց, թէ, ընդհակառակը, նամեծապէս գոհ է իրան ցոյց տրուած ընդունելութեան համար, որ պատիւ է բերում Թիֆլիսի հասարակութեանը, բայց իրան ցոյց տրուած փառաւոր ընդունելութիւնը նա վերագրում է ոչ իր անձին, այլ Հայրապետական իշխանութեանը, որի բարձրացման համար այնքան նախանձախնդիր ցոյց տուեց իրան կարգադիր յանձնաժողովը, ուստի և շնորհակալութիւն է յայտնում և օրհնում ամենքին։

Յունիսի 23-ին, առաւօտեան ժամը 9 և կեսից սկսեցին առաջնորդարան հաւաքուել Թիֆլիսի հայ հասարակութեան, մամուլի ու զանազան կրթական-կուլտուրական հաստատութիւնների ներկայացուցիչները, ընտրուած կարգադրիչ յանձնաժողովի անդամները և հոգեուրական գասը՝ Նորին Վեհափառութեանը երկաթուղու կայարան ուղեկցելու համար։ Ժամը 10-ին եկաւ նաև Թիֆլիսի նահանգապետի ներկայացուցիչը և քարի ճանա-

պարհ մաղթեց Նորին Վեհափառութեան, Վանքի գաւ-  
թում ժողովրդի ահագին բազմութիւն էր հաւաքուել:

Ժամը 10 և կէսին Նորին Վեհափառութիւնը իր  
շքախմբի և հոգեորականութեան հետ միասին իջաւ մայր  
տաճարը, ուր կարճատե ազօթքից յետոյ, օրհնեց ժողո-  
վրդին, ապա դուրս դալով ժանդարմերիական պահակա-  
խմբով ու բազմաթիւ ուղեկիցներով ուղեսորուեց կայա-  
րան: Որտեղ ժողովրդի երկուու խուռն բազմութիւնը,  
տեղական յայտնի հասարակական գործիչները, պաշտօ-  
նատար անձանց հետ միասին, վաղուց արդէն սպասում  
էին Վեհի գալստեանը:

Վեհափառը 11 ժամին և 10 րոպէին հասաւ երկա-  
թուղու կայարան և իջաւ արքայական օթևանի սենեակ-  
ներում:

Այդաեղ ներկայացաւ Վեհին կովկասեան Փոխարքայի  
օգնական գեներալ Շատիլօվի կողմից ուղարկուած գնդա-  
պետ Պալով ողջերթ մաղթելու Վեհափառին:

Վեհափառը յանձնարարեց յայտնել իր շնորհակա-  
լութիւնը Փոխարքայի օգնականին իր օրհնութեամբ,  
նոյնպէս ներկայացաւ կայարանի գլխաւորը և համ-  
բուրեց Վեհափառի աջը:

Այնուհետև մօտեցան հասարակութեան անդամնե-  
րից շատերը աջն առնելու, որոնց թւում և Թիֆլիսի  
քաղաքագլխի պաշտօնակատար Ա. Խատիսեան և քաղ.  
վարչութեան անդամ իշխան և, Արդութեան:

Երբ մօտեցաւ գնալու ժամը՝ Թիֆլիսի հասարակու-  
թեան կողմից ողջերթ մաղթեցին Վեհափառին՝ Ա. Քիշ-  
միշեան մի քանի համակրական խօսքերով և Ա. Քալան-  
թար մի ճառով:

Վեհափառը հակիրճ խօսքով շնորհակալութիւն յայտ-  
նեց Թիֆլիսի հասարակութեանը, որը այնքան սիրալիք  
կերպով ընդունեց իրան և իր Թիֆլիսում անցկացրած  
օրերը դարձրեց անմուանալի և յիշատակելի: Այնուհետև  
օրհնելով ժողովրդին մտաւ վագոն:

Երբ գնացքը շարժուեց՝ օդը թնդաց կեցցէներով:

Թիֆլիսից Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին շքախումբը բազիացած Թիֆլիսի թեմի առաջնորդ Գարեգին, արքեպիսկոպոս Սաթունեանից, Շուշու թեմի առաջնորդ Աշոտ եպիսկոպոսից, Մինօգի անդամներ Մեսրոպ և Բարգէն վարդապետներից, Թիֆլիսի Կոնսիստորիայի նախանդամ Եփրեմ վարդապետ Ռուքիասեանից, Խորէն վարդապետ Մուրադբէդեանից, թիւրքահայ Գրիգորիս և Մեսրոպ վարդապետներից և ազգային ժողովի նախագահ Մինաս Զերազից։

Կարգադրիչ յանձնուժովի կողմից ուղեկցում էին Ա. Քիշմիշեան, Տիկ. Հեղինէ Աւթանդիեւան, Տիկ. Ե. Յարութիւնեան, Ա. Յարութիւնեան, Ես. Յարութիւնեան, ինժ. Կիրակոսեան, Գիւտ ա. քահանայ Աղանեան, Հ. Առաքելեան, Ե. Լալայեան և Ա. Եսայեան։

Թիֆլիսից արտակարգ գնացքը դուրս եկաւ Ժամի 11 և կէսին։

Ժամը 1-ին գնացքը կանգ առաւ Շուլավերի մօտ Աշխա-Սալար կայարանում, ուր հաւաքուել էին ահագին բազմութեամբ Շուլավերցիները, քահանայի ու տանուտէրի գլուաւորութեամբ։ Այդտեղ էր նաև գաւառապետի պաշտօնակատարը։ Հայերը ներկայացրին ազ ու հաց, տեղայիններից մէկը կարդաց ուղերձ։ Նորին Սրբութիւնը յորդորներ կարդաց և օրհնեց ժողովրդին։ Ապա հայ երիասասրգները երգեցին ազգային երգեր և այդ միջոցին գնացքը շարժուեց ժողովրդի ցնծութեան ազաղակների ուղեկցութեամբ։ Ախտալա կայարանում Վեհափառ Հայրապետին գիմաւորեց կալուածատէր Միքայէլ Արամեանը իր դստեր և փեսայի հետ միասին։ Պ. Արամեանը Վեհին ուղեկցեց մինչև Սանահնի վանքը և դրեց նրա տրամադրութեան տակ իր կառքը։ Ժամը 6-ին նորին Սրբութիւնը իր հետեւրդներով հասաւ Սանահնի վանքը, ուր ժողովրդի ահագին բազմութիւնը զուռնայով գիմաւորեց նորան։

Հետեւեալ օրը Յունիսի 24-ին առաւօտեան Ժամը 10-ին նորին Սրբութիւնը վանքից իջաւ կայարան, ուր արգէն պատրաստ էր արտակարգ գնացքը։

ԺԲ.

Վեհափառ Կարուղիկոսը Մեծ Պարաքիլիսայում, ճանապարհը մինչեւ Ալեքսանդրովոյ Վեհափառ Ալեքսանդրապօլսմ, եւ Աթում. Վեհափառի վերադարձը Ալեքսանդրապօլ եւ ընդունելուրիները Ալեքսանդրովոլից Ս. Էջմիածին մեկնելը:

Ժամը 3-ին գնացքը հասաւ Մեծ Ղարաքիլիսա, երևի Ղարաքիլիսայում ոչ ոք չէր մնացել, բոլորն էլ շտապել եկել էին կայարան։

Կայարանի առաջ թարմ ծաղիկներից և կանաչներից շինուած էր մի շքեղ կամար. կամարի մէջտեղը կախուած էր Վեհափառի պատկերը։ Նոյնպէս թարմ ծաղիկներից և կանաչներից շինուած էր մի ամպհովանի, որտեղ փըռուած էին խալիչաներ և դրուած մի բազկաթոռ։

Երիտասարդների մի խումբ, զարդարուած ծաղիկների փնջերով, շրջապատել էր ամպհովանին։

Այստեղ հաւաքուած էին նաև շրջակայ գիւղերից պատգամաւորութիւններ։

Այստեղ ցերեկուայ ժամը 1-ին ճեպընթաց գնացքով ժամանեց Վեհը իր շքախմբով։ Հազարաւոր ամբոխի անվերջ «կեցցէները» թնդացրին օդը։

Գնացքը կանգ առաւ, Վեհափառը վագօնի լուսամուտից խաչակնքեց ժողովրդին։ Ապա Սաթունեան արքեպիսկոպոսի հետ իջաւ ցած, մտաւ ամպհովանիի տակ ու նստեց բազկաթոռի վրա։

Ներկայացաւ տանուտէր նալբանդեանը, աղ ու հաց մատուցանելով Վեհին։

Ժողովրդի կողմից ուղերձ կարդաց Գ. Մ. Գէորգեանը։ Տեղական ուսուցչական խմբի կողմից խօսեց ուսուցիչ Տէրունեանը։ Յետոյ ինստրուկտօր Սողոմոնեանը խօսեց տեղիս գիւղանտեսական ճիւղի մասին և ներկայացրեց կաթնատնտեսական կուրսերում պատրաստուած իւղից, ծաղիկներով և տփուէի մէջ, որը Վեհափառը ուրախութեամբ ընդունեց։

Այդ բոլորից յետոյ Հայրապետը պատասխանեց հետեւալը,

«Նատ ուրախ և բազգաւոր կը զգամ զիս՝ ձեր այս  
ընդունելութեան համար։ Դուք գիտէք, թէ իմ ուսերու  
վրայ ինչպիսի ծանր պարտականութիւններ են դրուած,  
զորս թեթևցնելու համար՝ ժողովուրդը պէտք է գիտակ-  
ցի իմ այդ պարտականութիւնները ու մասնակից ըլլայ  
անոնց։»

«Նատ ահաւոր սարսափներ են անցեր հայ ժողովրդի  
գլխէն։ շատ տանջանքներ է կրեր ան և ապրեր։ շատ  
շատ ծանր, խոր և բազմազան են անոր վէրքերը։ Մենք  
պէտք է կրթութեամբ բժշկենք այդ ցաւոտ վէրքերը։  
Մենք արդէն ճաշակած ենք եւրօպական կրթութիւնը,  
այնտեղի լուսաւոր ջահի շողերը թափանցեր են մինչև  
այստեղ՝ կովկասի խոլ անկիւնները, և մենք միշտ պիտի  
ձգտինք դէպի կրթութիւն, և անոր մէջ փնտռենք մեր  
լուսաւոր ապագան։ Բաւական չէ ըսելը, խօսելը, այլ  
պէտք է գործել ալ գիտնալ։»

«Ուրեմն յառաջ երթանք լուսաւոր գարու գաղա-  
փարներով։ Յառաջ ճշտութեամբ, յառաջ պաշտպանելով  
կարգապահութիւնը, յառաջ յառաջ դէպի ազնիւ գոր-  
ծեր . . .»

«Թող ըլլանք օրինաց հնազանդ և ապրինք խաղաղ։  
Վեհափառը, վերջացնելով իր ճառը, բարձրացաւ վա-  
գոն։ «Կեցցէները դարձեալ թնդացրին օդը։ Առաջ եկան  
շրջակայ գիւղերի պատգամաւորները և ներկայացան։»

Պատգամաւորներին ընդունելուց յետոյ, Վեհափառը  
մի փոքր ճաշեց։ Ճաշից յետոյ Մինաս Չերազը ժողովրդի  
խնդրանօք նկարուեց։ Նկարուեց նաև Վեհափառ Հայ-  
րապետը։

Ճաշից առաջ ներկայացան մի քանի պաշտօնեաներ՝  
տեղական պրիստաւուը, հաշտարար գատաւորը և հաշտա-  
րար միջնորդը։

Ժամը 2-ից անց՝ գնացքը շարժուեց, խակ մուղիկան  
նուագում էր ողջերթի եղանակ։

«Կեցցէ իզմիրեան, կեցցէ նորընտիր կաթողիկոսը,  
— ձայնում էր ժողովուրդը։»

Հազարաւոր բերաններից թռչող կեցցէներին վերջ  
ալ կար:

Կաթողիկոսական արտակարդ գնացքը Ղարաքիլիսաւ-  
յից մեկնեց չորեքշաբթի, յունիսի 24-ին, ցերեկուայ ժամը  
3-ին։ Ճանապարհին, բոլոր այն կայարաններում, ուր  
գնացքը մի երկու բօպէով կանգ էր առնում, շրջակայ  
տեղերից հայ գիւղացիներ և բանւորներ, հաւաքուած,  
դիմաւորում էին Կաթողիկոսին և նրա օրհնութիւնը խնդ-  
րում։ Մի կիսա-կայարանում գնացքը կանգ չառաւ. բայց  
այդտեղ հաւաքուել էին շատ հայ գիւղացիներ, և ահա  
նրանք սկսեցին վազել գնացքի ետևից և առջեից և կա-  
մենում էին կանգնեցնել գնացքը. անմիջապէս գնացքի  
ընդհանուր կառավարիչ ինժենէր Գ. Կիրակոսեանը կար-  
գադրեց կանգնեցնել գնացքը. Կաթողիկոսը շատ յու-  
զուեց այդ գէպքից։

Համամլուի կայարանում հաւաքուել էր հայ ժողո-  
վորի ահագին բազմութիւն. այդտեղ ևս Կաթողիկոսին  
ներկայացուեց աղ ու հաց, իսկ տեղական հայ ջուլհա-  
կանոցի կողմից մի երեխայրիք—մի մեծ քառակուսի  
սփոսց, Կաթողիկոսը, գառնալով իր շրջապատողներին,  
ասաց. «Օրհնեալ լինին անոնք, որք ստեղծեր են գիւղա-  
ցին համար այսպիսի արհեստներ և աշխատութիւն. ար-  
հեստը ծաղկեցնելու է հայ գիւղերու մէջ»։

Թէ Ղարաքիլիսայից, թէ Համամլիից մեր գնացքն  
էին մտնում պատգամաւորներ՝ ուղեկցելու Կաթողիկոսին  
մինչև Ալէքսանդրօպոլ։

Վերջապէս երեկոյեան ժամը  $5\frac{1}{2}$ -ին, արտակարդ  
գնացքը մօտեցաւ Ալէքսանդրօպոլ կայարանին։ Դեռ հեռ-  
ուուից նկատում էր ժողովրդի ահագին բազմութիւն,  
խոնուած պլատֆորմի վրա և կայարանի առջեի փողոց-  
ներում։ Ժողովրդի մի լայնատարած ծովս երբ գնացքը  
կանգ առաւ և ժողովուրդը նկատեց Վեհափառին, կանգ-

նամ սալօն-վագօնի լուսամուտի առաջ, հազարաւոր կրծքերից թնդաց՝ «կեցցէ», կեցցէ Մատթէսս Ա. Անժիշտէս վագօնը մատն քաղաքագլուխ Յովսէփ Տիգրանեան, գաւառապետ Մակարսկ, տեղական դորքերի հրամանատարը և Ալեքսանդրօպոլի կարգադիր մասնաժողովի անդամները, Կաթողիկոսը հանդիսով իջաւ և ուղղուեց դէպի գահլիճը, իսկ այդտեղից՝ դէպի կառքը: Այլեւ անկարելի եղաւ պահպանել կարգը. հազարաւոր մարդիկ շրջապատեցին կառքը, դէն հրեցին կարգապահներին, և ոստիկանութիւնը, չնորհիւ գաւառապետ Մակարօվի խոհեմութեան, չը ցրեց ժողովրդին, այլ թոյլ տուեց, որ նա իր ցնծութեան և յարգանքի զեղումներն արտայայտէ լիովին: Այդտեղ էր Ալեքսանդրօպոլի ամբողջ հայ ժողովուրդը՝ այր, կին, ծեր, երիտասարդ, երեխայ, այդտեղ էին համբարներն իրանց գրոշակներով և նշաններով, որոնց թիւը հաշուեցի մօտ 30 և որոնց մէջ կային նաև թուրքեր: Յաջորդարանը պատրաստուած և զարդարուած էր շատ շքեղ և ճաշակով, կաթողիկոսի կառքը ժողովրդի անհուն բազմութեան մէջ դանդաղօրէն առաջանալով՝ բանական ուշ հասաւ մինչև փողոցի ծայրը, ուր Վեհչը պէտք է իջնէր և մտնէր ամպհովանու ներքոյ ու եկեղեցական թափօրով առաջնորդուէր մայր Եկեղեցին, որ յաջորդարանի մօտ է:

Թափօրը կազմուեց այսպէս. առաջից գնում էին համբարները իրանց գրոշակներով, ապա գալիս էին երեցիկ խումբը և քահանաները, կաթողիկոսական խաչը և գաւազանը բռնող վարդապետները, ամպհովանու առաջնից բռնել էին հայրապետական քօղը, յետոյ խնկարկելով գալիս էին սարկաւագները: Ամպհովանու ձողերը բռնել էին քաղաքագլուխ Յովսէփ Տիգրանեան, Կ. Կոստանեան, Բաղդասարեան և Խոահակեան իբրև պատուաւոր քաղաքացիներ: Աւագ Եկեղեցում, կարճ ազօթքից յետոյ, կաթողիկոսը քարոզ խօսեց, օրհնելով ժողովրդին, և ապա նոյն թափօրով առաջնորդուեց յաջորդարանը, ուր ներկայացան պատգամաւորութիւններ ազգային, Եկեղե-

ցական և հասարակական զանազան հաստատութիւնների և կարդացուեցին ուղերձներ:

Երեկոյեան ժամը 8-ին յաջորդարանում տրուեց ճաշկերոյթ Կաթողիկոսի շքախմբին և հիւրերին, Կաթողիկոսը ճաշեց առանձին Առաջին բաժակը առաջարկեց Թիֆլիսի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոսը Ամենայն Հայոց Կաթողիկոս Մատթէսս Ա-ի կենացը, նկարագրելով այս հոգեսոր և բարոյական մեծ միսիթարութիւնը, որ թէ Կաթողիկոսը, թէ ամբողջ Հայ հոգեսորականութիւնը զգում են տեսնելով Հայ ժողովրդի անկեղծ ցնծութիւնն և ջերմուրախութիւնը, որով նա ընդունում է Հովուապետին: Քաղաքագլուխ Յ. Տիգրաննեան առաջարկեց Գարեգին արքեպիսկոպոսի և Աշոտ եպիսկոպոսի կենացները: Ապա առաջարկուեցին Մինաս Զերազի, հրաւիրակ վարդապետների, քաղաքագլուխ Տիգրաննեանի, Ալէքսանդրօպոլի Հայ հասարակութեան, Էջմիածնի միաբանութեան, Թուրքիայի և Ռուսաստանի Հայ ժողովուրդների, Հայ մամուլի և գլուրականութեան բարգաւաճման, սեղանակից գտւառապետ Մակարօվի, Թիֆլիսի և Ալէքսանդրօպոլի կարգադիր մասնաժողովների կենացը: Արտասանեցին ճառեր՝ Պաթունեան արքեպիսկոպոս, Աշոտ եպիսկոպոս, Մեսրոպ, Յարգէն և Խորէն վարդապետները, Մինաս Զերազ, Համբարձում Առաքելեան, Սամսոն Յարութիւննեան, Իսահակ Յարսութիւննեան, Տարտաչեան (ներկայաց, «Ախուրեանի») և Ալէքսանդրօպոլի կարգադիր մասնաժողովի անդամներից մինը ու Ալէքսանդրօպոլի քահանաներից մինը, վերջինս այն խելացի միտքն յայտնեց, թէ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անմիջական աջակիցը լինելու է Էջմիածնի միաբանութիւնը, ուստի և մաղթեց, որ այդ միաբանութիւնն այսօրուանից սկսած, երբ սկսում է ազգի համակրութիւնը վայելող Կաթողիկոսի գործունեութիւնը, կարողանայ կանգնել իր կոչման բարձրութեան վրա, հեռու վանելով երկարառակութիւն, գժտութիւն, սիրով, համերաշխ գործակցութեամբ վարելով Հայրապետի աթոռի շուրջը: Աեղանը, որ սկսուեց Կաթողիկոսի կենացով, վերջա-

ցաւ դարձեալ այդ կենացով, որ առաջարկեց գաւառապետ Մակարօվը:

Հինգշաբթի յունիսի 25-ին, առաւօտեան ժամը 7-ին, Վեհափառը իր շքախմբով կառքերով դուրս եկաւ Ալէքսանդրօպոլից Անի գնալու համար։

Շքախմբի անդամներն էին Գարեգին արքեպիսկոպոս Սաթունեան, Աշոտ եպիսկոպոս Շախեան, Եփրեմ վրդ. Սուքիասեան, Մեսրոպ վրդ. Տէր-Մովսէսեան, Բարգէն վրդ. Աղաւելեան, Խորէն վրդ. Մուրադբէգեան, Գրիգորիս վրդ. Պալաքեան, Մեսրոպ վրդ. Նշանեան, Մինաս-Զերազ, Թիֆլիսի կարգադիր մասնաժողովի անդամներ Սամ. Յարութիւնեան, Իս. Յարութիւնեան, Ա, Եսայեան, տիկնայք Երանուհի Յարութիւնեան, Հ, Աւթանդիլեան։ Միացել էին և «Ախուրեան» թերթի աշխատակիցն ու տիկ. Արտէմեան։

Վեհափառի քառաձի կառքը, շրջապատուած հեծեալ պահակներով, պրիստաւի առաջնորդութեամբ գնում էր հանդիսաւոր դնացքի առջեկից։

Ալէքսանդրօպոլի կարգադիր յանձնաժողովի անդամները, գլուխ ունենալով քաղաքագլուխ Յ. Տիգրանեանին, Եկան մինչև Արդինայի կամուրջը, որտեղից և վերադարձան քաղաք։

Յիշենք որ յաջորդարանի մօտից մինչև քաղաքից դուրս ելնելը երկարք կանգնած էր ժողովրդի մեծ բազմութիւն, որ «կեցցէներով» և «ուրաներով» ճանապարհ դրեց Վեհին։

Ճանապարհի մշտական փոշին, չնորհիւ գիշերն եկած անձրեի, մի փոքր պակասել էր։

Եղանակը, որ սկզբում զով էր, սկսեց տաքանալ Վեհափառը դիտում էր շրջակայքը, որ թաղուած էր հարուստ բուսականութեան մէջ։

Մի ժամից յետոյ կառքերի շարքը հասաւ առաջին դիւղը, ուր Վեհափառն իջաւ կառքից և 10 րոպէի շափ հանդուացաւ Մելիք-Յակոբեան ընտանիքի կալուածքում։

Ժամը 8<sup>1</sup> շմբն գնացքն առաջացաւ նոյն կարգով։ Ճանապարհին, մի քանի տեղերում, գիւղացիները հանդիպեցին եկեղեցական թափորով և աղ ու հացով։ Եւ ամեն անգամ Վեհը իջնում էր կառքից, մի կտոր բերանն էր առնում աղ ու հացը և օրհնում էր գիւղացիներին։

Պէտք էր նայել, թէ ինչպէս զանազան կողմերից վազում էին շնչառապառ կերպով թէ այր և թէ կին երեխաներով Վեհին իջնելու տեղը, տեսնելու իրանց հայրապետին և առնելու նրա օրհնութիւնը։ Հայ շինականի այդ տեսակ ոգեսրութիւնը մեծ տպաւորութիւն էր թողնում Վեհափառի վրայ։

Հեռու տարածութեան վրա, հորիզօնում երեաց աշեղարդ Մասիսը իր ձիւնապատ զագաթով։ Փողովրդի Հայրը աշքերը յառած գեպի ոյն կողմը՝ նայում էր երկար, թախծութեամբ և վշտապատ նայուածքով։ Ի՞նչ էր մտածում այդ բարձին նա... Հայի այժմեան տարագիր վիճակի մտածմանընքն էր տիրել նրա հոգուն և սրտին, թէ հայի անցեալ պանծալի փառքի հինաւուրց վկացից նա տեղեկութիւններ էր ուզում իմանալ, Միայն նրա հայեացքը՝ վշտալի ու տիսուր՝ բնեռած էր հեռուն, դէպի Մասիսը...

Մերթ ընդ մերթ հանդիսախմբին միանում էին հեծեալ գիւղացիներ, որոնք, ընկնելով առաջ, եկան մինչև Անի, ուր հասանք ցերեկուայ ժամը 1-ի մօտերը։

Դեռ հեռուից, Անիի պարիսպների մատ երեսում էր ահագին բազմութիւն, եւ, յիրաւի, երբ մօտեցանք, տեսանք մի այնպիսի հոծ ժողովուրդ, որպիսին երբէք չէ եղել Անիում, աւերակների այդ աշխարհում։ Պարսպի առաջ գրուած էր սեղան, որի շուրջը բռլորուել էին յարգելի պրօֆեսոր Ակադիմիկ Մարբի պեղումների վրա աշխատող մշակները իրանց բահերով, պրօֆեսորի ձեռքի տակ աշխատող ուսանողները և եկուոր ահագին բազմութիւն։ Երկու պարիսպները միացուած էին մեծ տախտա-

կով, որի վրա խոշոր, կարմիր տառերով գրուած էր  
«բարի գալուստ»:

Վեհն իջաւ կառքից և մօտեցաւ սեղանին:

Պրօֆեսօր Ակադիմիկ Նիկ, Մարրը Անիք հիւսիսային  
դրան տուած մատուցեց նորին Արբութեանը աղ ու հաց  
և արտասանեց հետեւեալ ճառը.

Վեհափառ Տէր!

«Բարեհաճեաց և ընկալ սիրով զոր մատուցանեմ  
պատկառանօք առաջի Քո զաղ և հաց տեղւոյս այսորիկ,

«Ի վսեմէ և թանկագնոյ, զկնի գրեա թէ ինն դարուց,  
յեղելոյ յառաջնոյ Հայրապետական այցելութենէդ վայ-  
րիս, յակամայս հրաւիրիմ համարձակ խօսիլ ի դիմաց ա-  
ւերեալ և թափուր շինիս:

«Բարեօք եկեսցէ կամօքն Աստուծոյ, ընտրեալ յաղ-  
դէն հայոց, հառտասեալ ի Կայսերէն համայն Ռուսիոյ  
օծանելիդ վաղորդայն, և ի բարիս եղիցի ի մոռացնոն  
եկելոց յիշատակարանացս՝ քաղցր գալուստգ, որ մսի-  
թարէ և յորդորէ և խրատէ, Ահաւասիկ տեղի իմն, յո-  
րում յաւէտ անկ իցէ ի միտս ածել, ի զգաստութիւն  
մեծամեծաց աշխարհիս, զառակն զայն թէ «աւաղ փառաց  
անցաւորի», սակայն նիւթեղէն կենացն անտի, ընդ միշտ  
անցելոց, յար կան և մնան նոցին շինարար հոգւոյ պերճ  
իրեղէն վկայութիւնքն, որք ի ձեռն պեղմանց ի լոյս հա-  
նեալ և իմաստասիրութեամբ կենդանացուցեալ մշտնշե-  
նաւոր ճշմարտութեան ակամքք պատուականօք լցցեն  
զգանձարանն ընդհանուր մարդկային գիտութեան, ուստի  
և զիմացական շտեմարանսն զաւակաց Քոց հոգեւորաց  
որդւոցն Հայկայ:

«Զայսոսիկ ոչ եթէ վարդապետեմ, քաւ լիցի, այլ  
խօստովանիմ և վկայեմ. Աստ հմտալից իմաստութեանդ  
չէ պիտոյ թարգմանիչ կամ մեկնիչ. Գեղեցկագոյն քան  
զայլ ոք ի շնչաւորաց վարդապետից են, զորս վաղվաղակի  
տեսնիք աչօք ձերովքդ զքարինսն անշունչո Անւոյ, բազ-  
մազարդս, բազմագիրս և բազմալեղուս:

«Եւ արգեամք Անւոյ նիւթականի մեռելոյ՝ կեայ վերին Անի, Անի տեսականն, Անի գիտականն»:

«Եւ զի հաճոյ եղի Քեզ փոյթ առնել զկանխեալ ընթանալոյ ընդ գժուարինս ի հանգուցեալ մայրաքաղաքս երբեմն, արդ անապտոս, այդոքիկ զյոյս մեր ամրացուցանեն թէ ոչ միայն կեայ Անի գիտականն այլ և կեցցէ»:

«Եւ իրաւամք արիշատ լիցի և փառաւօրեսցի յուսոյ այսորիկ նորագոյն և վեհ պատճառն զորմէ ի խորոց սրտի գոհանամը զվեհափառութենէդ»:

«Բարի լիցի գալուստդ».

«Կեցցէ Վեհափառն»:

Նորին վեհափառութիւնը պրօֆէսոօրին պատասխանց այսպէս. «Այս, յարգելի պրօֆէսոօր, այս աւերակները որ լուռ կանգնած են այստեղ, կը յիշեցնեն հայուն իր անցեալը, անցեալ փառաւոր, անցեալ երջանիկ... կը յիշեցնեն այն ժամանակները, երբ հայ կեանքը ևս կը պայծառանար յաղթ և հոյակապ»:

«Դուք, յարգարժան պրօֆէսոօր, որ ձեր ամբողջ եռանդը և սէրը նուիրած էք այս աւերակներուն, ձեր պեղումներով հսկայական ծառայութիւն կը մատուցանէք գիտութեանն Գուք ձեր պեղումներով ի լուր աշխարհի կը յայտնէք մի ժողովրդի, տարաբաղդ և տարագիր, անցեալ պանծալի կեանքի պատկերը ամբողջովին։ Յոյց կուտաք հայ աղգին իր նախնիներուն վսեմ անցեալը...»

«Ես իմ ամբողջ կեանքիս մէջ կը բաղւայի տեսնել այս աւերակները և տեսայ, ու այս բոպէիս ես ուրախ եմ։ Նարունակեցէք ձեր բազմարդիւն և բեղմնաւոր աշխատանքը, աղնիւ Մարդ»:

Վեհի այս ճառը նոյնպէս մեծ տպաւորութիւն իւռ զեց թէ պրօֆէսոօրի և թէ միւս լսողների վրա։

Իջնելով Միքայէլ հայրառուրբի պատրաստած սեննեակները, Վեհափառը նախաճաշեց, յետոյ հանգիստ տուեց իր յօդնած մարմնին»:

Հանգստանալուց յետոյ Վեհափառը ցանկութիւն յայտնեց Մըել աւերակները և տեսնել հնութիւնները»:

Ամենից առաջ նա առաջնորդուեց իր զբախմբով հնագարանը, յետոյ թանգարանը: Այստեղ երկար և սիրալիր բացարութիւններ էր տալիս պրօֆ. Մարր:

Այնուհետեւ Վեհափառը այցելեց և դիտեց ս. Գրիգոր Լուսաւորչի եկեղեցին, մայր տաճարը, Դագկաշէն ս. Դրիգորի եկեղեցին, իշխանաց տունը, վրաց եկեղեցին, 4 սիւնաղարդ փոքրիկ շինութիւնը, պալատը, 2 հիւրանոցները, Առաքելոց եկեղեցին և այլն: Այս բոլոր տեղերումն էլ մանրամասն բացարութիւններ տուին պրօֆէսօր Մարր և ճարտարապետ Թ. Թօրամանեան, որի հետ Վեհը ճաշից յետոյ խօսակցեց մի ժամուայ չափ հայկական ճարտարապետութեան վերաբերեալ խնդիրների մասին:

Նորին Սրբութիւնը Դադիկ Ա. արձանի մօտ լուսանկարվեց, որը և յարգելի պրօֆէսօրը պատրաստեց միւս տռաւօտեան:

Աւելացնենք, որ Վեհը այցելեց նաև պրօֆէսօրի աշխատելու սենեակը, ուր ոյդ ժամանակ աշխատում էր նկարիչ Պոլտարացիին Բարսեղ կաթողիկոսի խաչքարի նկարի վրա:

Երեկոյեան ամբողջ շրջակայքը ուրախութեան մէջ էր: Վանքի շուրջը շինել էին տաղաւարներ, կառքերի ձիերի խրինջոցը, զանգերի զօղանջիւնը, նուագածուների ձայնը, զուռնան և երգ ու պարը որին տալիս էին տօնական ու ուխտի կերպարանք և այդ ամենի ազգեցութիւնը այնքան գեղեցիկ, այնքան հաճելի և տպաւորիչ էր այնտեղ, Անիւմ, ուր միայն աւելակներն են ապրում, ուր սոսկ մեռելութիւն է տիրում... Վեհի այցելութիւնը կենդանացրել էր այդ օրը Անիին, և նա էլ ասես գէթ մի օր պայծառացաւ, հիւրընկալելով հայ ժողովրդի յոյսերի ու ակնկալութիւնների մարմնացումն Հայուապետին:

Ամբողջ մի ժամ Վեհը ընդունեց այդ օրը այդտեղ գտնւող մարդկանց: Եւ պէտք էր տեսնել՝ թէ ինչպէս հայ գեղջուկը ակնածութեամբ մօտենում էր իր հոգեսոր պետին և, նախքան համբուրելը նրա աջը, ծունը էր դնում և երկրպագում էր նրան:

— Դարեր են հարկաւոր այս ժողովրդի կրթութեան համար, — յուզմունքով նկատում էր Վեհը և կրկին ընկերում իր խորհրդաւոր մտածմունքների մէջ, որ երեսում էր նրա խոհուն աչքերից և թախծոտ դէմքից:

Հետուեալ օրը, յունիսի 26-ին, Վեհափառը դարձեալ շրջեց մի երկու տեղ և լուսանկարվեց մայր տաճարի առաջ իր շքախմբի հետ միասին:

Թեթև նախաճաշելուց յետոյ, ցերեկուայ ժամը ուղիղ 12-ին ճանապարհ ընկանք դէպի Խօշավանք: Վեհը շնորհակալութիւն յայտնեց պրօֆ. Մարրին, թ. Թօրածանեանին և միւսներին և աջողութիւն ցանկացաւ նրանց:

Ժամը 2-ի մօտերը հասանք Ղօշավանք, ուր Վեհափառը դիտեց այդտեղի ճնութիւնները, մի ժամ հանգստանալուց յետոյ ուղեորդեցինք դէպի Ալէքսանդրօպոլ:

Նոյնպիսի շքեղ կարգով հասանք Արգինա գիւղը, ուր Վեհի ուղեկցողների համար Մելիք-Յակոբեան ընտանիքը պատրաստել էր գեղեցիկ սեղան նախաճաշելու համար: Կէս ժամ՝ յարգելի ընտանիքի հիւրասիրութիւնը վայելելուց և շնորհակալութիւն յայտնելուց յետոյ, Վեհը իր շքախմբով ճանապարհ ընկաւ:

Ինչպէս գնալիս, այնպէս և վերադարձին, հայ և թուրք գիւղացիները դիմաւորում էին աղ ու հացով: Նաև միանում էին զանազան ձիաւորներ:

Քաղաքի կամուրջի մօտ, կառքերով ընդառաջ էին եկել Ալէքսանդրօպոլի կարգադիր յանձնաժողովի անդամները Յ. Տիգրանեանի առաջնորդութեամբ:

Մի հիանալի հանգէս սկսվեց: Վեհափառի կառքը շրջապատել էին պահակները և հեծեալ կամաւորները, ապա հետեւում էին միւս կառքերը, որոնց թիւը հասաւ մօտ 50-ի, և այդպէս շքեղ հանդէսով թափորը մտուքաղաք, ուր փողոցների երկու կողմերով կանգնած սպասում էր տհագին հասարակութիւն: Այդ գնացքը կամուրջից մինչև, յաջորդարան շատ գեղեցիկ էր և ազդեցիլ:

Ժամը 6-ի ժօտերը Վեհափառը իջաւ յաջորդաբան հանգստանալու:

Հետեւեալ օրը առաւտօնեան ժամը 10-ին սկսեցին հաւաքուել վեհարանում այն պատգամաւորութիւնները, որոնք ներկայանալու էին նորին Վեհափառութեան: 10 ժ. 20 ր. Վեհափառը դուրս եկաւ դահլիճը և քաղմեց իր համար յատուկ պատրաստուած քաղկաթուի վերայ, որի երկու կողմից դրւած էին Հայրապետական Խաչն ու զաւագանը: Նախ ներկայացան Վեհափառին ընդունող մասնաժողովի անդամները: Պ. Յ. Ցիգրանեան դիմեց Հայրապետին հետեւեալ խօսքերով:

### Վեհափառ Տէր

Էմախտ ունիմ շնորհաւորելու Զերգ Վեհափառութեան շնորհաբեր գալուստը Աղեքսանդրապոլի հայ հասարակութեան կողմից, շնորհակալ ենք, որ շնորհ արիք և կանգ առաք մեր քաղաքում և պատեցիք մեզ Զեր ներկայութեամբ:

Այսուհետեւ ներկայացան հայ քահանաները գլուխ ունենալով փոխ-թեմակալ Հմայեակ վարդապետին հայ կաթողիկ հասարակութեան ներկայացուցիչները իրանց քահանայի հետ միասին:

Հայ կաթողիկ քահանան դիմեց Վեհափառին մի քանի խօսքերով, որ նորին Վեհափառութիւնը իր օրհնութիւնը տարածում է հայ կաթողիկ համայնքի վրայ, որովհետեւ իրանը իրանց երբէք խօրթ չեն համարել, նրանք նոյն հայ ազգի հարազատ զաւակներն են:

Հայրապետը յայտնեց իր շնորհակալութիւնները այն ջերմ զգացմանց համար, որ յայտնեցին պատգամաւորները, Հայրապետը յայտնեց, որ ինքը երբէք խտրութիւն դրած չէ հայերի մէջ, հայ արմատից ծագած բոլորեքեան եղբայրներ են, Այդ պատճառաւ բոլորեքեան միենոյն նպատակ պէաք է ունենան մէկ տեղ պահպանեն ազգային հնադարեան աւանդները, նրա սովորութիւնները: Վեհափառը յոյս յայտնեց, որ իր ցոյց տւած ուղիով կընթառ այսուհետեւ:

Ապա ներկայացաւ տեղիս բոլոր ծխական գպրոցների հոգաբարձութիւնը։ Հոգաբարձու պ. Ա.Ղ. Ամիրեան հետեւալը ասաց.

Վեհափառ տէր.

Տեղիս ծխական գպրոցների հոգաբարձութիւնը ինձ վրայ քաղցր պարտականութիւն դրեց, ողջունելու Զերդ Վեհափառութեան գալուստը։ Ընդ ոմին ինձ պարտաւորութիւն եմ համարում հակիրճ տեղեկութիւն տալու քաղաքիս կրթական գործի մոսին. քաղաքս ունի երկու միջնակարգ գպրոց. չորս ծխական, և չորս քաղաքային գպրոցներ։ Չնայելով սրան մենք քաղաքում դեռ շատ տղաներ ունինք, որոնք բաղիսելով գպրոցի դռները ձեռնունայն յետ են դառնում և փողոցներում թափառում։ Հոգաբարձութիւնը աշխատում է ամեն կերպ այդ ցաւը մէջտեղից բառնալ, աշխատում է, որ ոչ մի երեխայ դուրսը չմնայ. Սակայն մեզ հարկաւոր է Զերդ Վեհափառութեան հեղինակաւոր ձայնը, որը յուսով ենք մեծ դեր պիտի կատարէ այս գործում։

Վեհափառը պատասխանեց պ. Ամիրեանի խօսքերին շատ գեղեցիկ խօսքերով։ Նա բացատրեց ուսման նշանակութիւնը, նրա ազնուացուցիչ գերը ազգերի կեանքում, յայտնեց ուսուցիչների պարտաւորութիւնը դէպի ժողովուրդը, նա ասաց, որ ես տեսայ շատ գիւղեր, ժողովուրդը ազնիւ, բայց, աւաղ, տգէտ, զուրկ կրթութեան բարիքներից, յորդորեց նուիրւել կրթական գործին, բայց հեռատեսութեամբ և շրջահայեցութեամբ։

Այսուհետեւ ներկայացան տեղիս հայ ուսուցիչ ուսուցչուհիները, որոնց կողմից խօսեց պ. Հայկ Յովհաննիսեանը։

Վեհափառ Տէր.

Ալէքսանդրապոլի հայ ուսուցչուհիները և ուսուցիչներն այսօր երջանիկ են զգում իրենց Զերդ Վեհափառութեան ուրախառիթ և շնորհարեր գալուստն ողջունելու և Զեղ իրենց որդիական անկեղծ սիրոյ բուռն և ջերմ զգացմունքներն արտայայտել կարողանալու համար։

Եատ չէ անցել այն օրից, երբ Դուք, Արքաղնասուրբ

Հայրապետ, բանտի մռայլ կամարների տակ հեծում էիք — այն երկրում, ուր առաջին անգամ սիրոյ և ազատութեան, եղբայրութեան և հաւասարութեան քարոզն է արձագանք տուել և Գողգոթայի կատարն անմեղ արիւնով ներկուել։ Բայց հասաւ ժամը, նոր Գողգոթայի խաչազէն դմբեթից հնչեց Յարութեան ժամը։ Գաղափարի յաղթահակի ժամն էր այդ եւ Դուք դափնիներով պատկուած Պօլիս մուաք Թնդաց ամբողջ հայութեան սիրտն ապագայի նոր յոյսերով, մարմնացած գաղափարի յաղթանակը տեսնելով։

Եւ մինչ դեռ Դուք կամենում էիք փոքր ինչ ազատ շունչ քաշել և կազզուրուել երկարամեայ տառապանքներից, որոտաց մի այլ, աւելի զօրաւոր ձայն։ Ամբողջ հայութեան ձայնն էր այդ, միախառնուած նոր արիւնների, նոր կոտորածների, նոր մարտիրոսների աղեկէզ և սրտակոտոր հեծեծանըների հետ, որ հասնում էր Զեր ականջին արեան և տառապանքի ծովի, լացի և արցունքի հովտից, և որը Զեղ աւելի գժուարին և պատասխանատու պաշտօնի էր կանչում։ Ասուած է «ում շատ է Տրուած, շատ է պահանջում»։

Այդ ահեղ ձայնի, այդ ծանր վշտի տակ մի անգամ ևս կծկեց Զեր հայրական սիրտն և Դուք ստիպւած եղաք մոռանալ Զեր հանդիսան և հետեւել այդ ձայնին, Զեր հարազատների ձայնին, որովհետեւ սիրտ ունէիք, որովհետեւ հոգի ունէիք, որովհետեւ խիզճ ունէիք։ Ամբողջ հայ ժողովրդի ցնծագին բացագանչութիւններն ուղեկցեցին Զեղ Բասփորի գեղածիծաղ ափերից սկսած և՛ Պօնտոսի մե ալիքների վերայ և կապտագոյն նետյի ափերում և շամարի վերայ մինչև այստեղ։

Եւ այսօր, երբ Դուք ողջամբ մեր քաղաքն էք ժամանում, թոյլ տւեք մեր ձայնն էլ միացնել ամբողջ հայութեան ձայնի հետ՝ կրկնելով։ «Բա՛՛ եաւ եկ Քո եւ օհնեալ»։ Այս բոլոր բացագանչութիւններն ապացոյց են, սակայն թէ որպիսի վստահութիւն ունի դէպի Զերդ Վեհափառութիւնը՝ Զեղ ընտրող ազգն և թէ որպիսի ակն-

կալութիւններ ունի նա Զեզնից իւր անհամար ցաւերի համար։ Այս, Վեհափառ Տէր, մեր կեանքը տխուր է, մեր սիրտը խոցոտ, մեր հօգին վիրոտ, մեր ճամբան քարոտ մեր հացն արիւնոտ, մեր ջուրն արցունքոտ, աղի ու լեղի, մեր երկինքը մութ, աստղերը խաւար։ Մեր պատմութիւնը մարտիրոսագրութեան անընդհատ շղթայ է, որ արիւնով սկսում է, արցունքով վերջանում և արցունքով սկսում, արիւնով վերջանում։ Եւ այս բոլոր վէրքերի համար Զեզնից է բալասան սպասում հայ ժողովուրդը։

Այս բոլոր բացագանչութիւնները ոչ այլ ինչ են, եթէ ոչ կատաղի ծովի լեռնացած կոհակների վերայ տարութերով և ընկղմող նաւակի նաւաստիների յուսահատական և միևնույն ժամանակ ուրախական ճիշերը, երբ նոքա հօրիզոնի վերայ փրկարար փարոսի ճառագայթներն են նըշարում։

Հայ ուսուցչութիւնն էլ ընդհանրապէս և քաղաքիս մասնաւորապէս, իբրև այդ ժողովրդի մատաղ սերնդի դաստիարակող դասը, քայլում՝ է բոկուն հայ դպրոցական իրականութեան փշոտ ասպարիզում, ծանր խաչի տակ հեւալով և արեան հետքեր թողնելով իր անցած ճանապարհին։ Բայց միշտ լաւատես, միշտ անդրդւելի դէպի իւր սրբազն գործը։ յուսալիր աջքերը դէպի յառաջադիմութեան ընեւույին աստղը յառած, քայլում՝ է նա անընդհատ հետեւելով միհես դէպի վե՛ր, միհես առաջ՝ նշանաբանին, հաւատալով իր բարձր, նախատիպ դաղափարների իրականացմանը։ Բայց նորա ոյժերն անհատնում չեն և նա կընկնէ անշուշտ մի օր ուժասպառ բազմաթիւ խոչնդուների անհաւասար կռւում, եթէ մի երկաթէ ձեռք օգնութեան չհասնի։ Եւ ահա յանձին Զերդ Վեհափառութեան դալիս է այդ երկաթէ ձեռքը Լուսաւորիչների և Թարգմանիչների գործը շարունակելու։ Հայ ուսուցչութիւնը մեծ յօյս է տածում, որ Զեր հզօր և օրինասիրական կամքի առաջ տեղի կտան և կչքանան մեր դպրոցների վերայից խեղղող, մզաւանջային ու ուրուրներն և ներկայ խառնակ դրութեանը կը յաջորդէ մի խիստ կար-

ձեր աջակցութիւնը, մենք միասին պէտք է սրբենք ժռազովդի արցունքներն ու թարախները, չնորհակալ եմ ձեր բարեմաղթութեանց համար»:

Ապա ներկայացան կ. Հ. Բ. Ընկ. տեղիս ճիւղի վարչութեան անդամները, որոնց կողմից խօսեց փոխ-նախագահ Վ. Գիւլբէնկեան:

Հայրապետը յորդորեց, «Ո ժողովրդին ձրիակերութիւն չը սովորեցնեն, որ աշխատանք տան, աշխատանք, որ միայն կարող է աղնւացնել ժողովրդի բարքերը»:

Այսուհետեւ ներկայացան Ազգագրական Ընկերութեան տեղիս վարչութեան անդամները, թուրքերի ներկայացուցիչները, Յար. Արաբաջեանի յոթելանական մասնաժողովի անդամները, որոնք Նորին Վեհափառութեան ներկայացըն գրաւոր խնդիր, Կարսի պատգամաւորները, Սարիղամիշի պատգամաւոր պ. կ. Խսահակեան, Շիրակի գաւառի ներկայացուցիչները Ղևոնդ Ք. Աթանասեանի գլխաւորութեամբ»:

Ընդունելութիւնը տեսեց 45 րոպէ»:

Երեկոյեան յաջորդարանում տեղի ունեցաւ պաշտօնական ճաշ: Հրաւիրուած էին գաւառապետը և բոլոր պատգամաւորութեանց ներկայացուցիչները»:

Առաջին կենացը առաջարկեց Նորին Արբութիւնը ի պատիւ թագաւոր Կայսեր, որը ընդունուեց ուռաներով:

Ապա քաղաքագլուխ Պ. Տիգրանեանը առաջարկեց Նորին Վեհափառութեան կենացը, որը ընդունուեց բուռն կեցցէներով:

Երրորդ բաժակը առաջարկեց Նորին Արբութիւնը Ալեքսանդրապոլի հայ հասարակութեան կենացը, յայտնելով իւր շնորհակալութիւնը և օրհնութիւնը, որից յետոյ Վեհը սեղանակիցների կեցցէների ուղեկցութեամբ անցաւ իր սենեակը»:

Ճաշկերոյթը վերջացաւ ժամը 10-ին և ամենքը գոհ սրտով հեռացան:

Հետեւեալ օրը, կիւրակի յունիսի 28-ին Վեհափառ Հայրապետը իւր շքախմբի անդամներով և բաղմաթիւ քա-

զաքացիների ուղեկցութեամբ, մեկնեց Ալէքսանդրապօլից գէպի Ս. Էջմիածին, Ալէքսանդրապօլի կայարանում վեհին սպասում էր ժողովրդի հոծ բազմութիւն։ Սալօն վագոն մտան քաղաքագլուխը, գաւառապետը, որոնք բարի երթ մաղթեցին Վեհափառ Հայրապետին, ապա ներկայացան կարգադրիչ մասնաժողովի անդամները համբուրեցին Վեհի Ս. Աջը և բարի ճանապարհ մաղթեցին։

Ժամը 8 և կէսին գնացքը շարժուեց։ Ժաղովրդի բուռն կեցցէները թնդացնում էր օդը։

Ալէքսանդրապօլից ուղեկցում էին Նորին Սրբութեանը Երևանի պատգամաւորները։

#### ԺԳ.

Վեհափառի մուտքը Վաղարշապատ.—ընդուհելութիւնը Վեհարանում։

Գնացքը ուղիղ ժամը 1-ին հասաւ Էջմիածին կայարանը, ուր խմբուած էր բաւական ժողովուրդ Երևանից և շրջակայքից և ուր պլատֆորմի վրայ փիլոնները ծածկած սպասում էին Սինօգի անդամները և որոնք գնացքը կանգնելուն պէս մտան Սալօն-վագոնը և ողջունեցին Վեհափառ Հայրապետին՝ Սալօն վագոնում։ Վազարշապատցիների կողմից ողջոյնի ճառով դիմեց Վեհին Յովհաննէս Մուշեղեանը որից յետոյ ողջունեցին Վեհին Ճեմարանի ժամանակաւոր տեսուչ Ստ. Կանայեանը և Գաւառապետը Վեհափառը իջաւ վագոնից նստաւ յատուկ Հայրապետական կառքը և բազմաթիւ կառքերի ուղեկցութեամբ անվերջ կեցցէներով դիմեց գէպի Ս. Էջմիածին։ Երևանի քահանայական դամն ու բաւական բազմութիւնն սովորական գնացքով հասնում է Էջմիածնի կայարան այն ժամանակ՝ երբ Վեհափառ Հայրապետը արդէն մեկնել էր։

Էջմիածին կայարանից մինչեւ Ս. Էջմիածին՝ ճանապարհին Կարխունում թիւրքերն և Խաթունարխում թիւրքերն ու հայերը կեցցէներով ողջունեցին Վեհին և աղ ու հաց մատուցին։

Վերջապէս ժամը 3 և կէոին Նորին Արբութիւնը  
մուտք գործեց Վաղարշապատ:

Վաղարշապատը տօնական կերպարանք էր ստացել:  
Մուտքի մօտ շինուած էր կանաչներով զարդարուած սիւ-  
ներով կամար, որի վերևում «Բարի գալուստ» խօսքերն  
էին դրոշմուած։ Վեհի անցած փողոցների բոլոր տները  
զարդարուած էին գորդերով, ծաղիկներով, կանաչներով  
և դրօշակներով։ Եատ տեղեր փողոցի լայնութեամբ անց  
էին կացրել կիսադրօշակներից կազմուած շղթաներ «Բարի  
գալուստ» մակագրութեամբ։

Վեհափառ Հայրապետը հասաւ գլխաւոր կամարին,  
որի մօտ խոնուած էր ահագին բազմութիւն և սպասում  
էր հոգեորականութիւնը ամենայն հանդիսաւորութեամբ։  
Փողովրդի ստուար բազմութիւնը բուռն ոգեսորութեամբ  
ընդունեց Վեհին թնդացներով օգը անվերջ կեցցէներով,  
իսկ կամարի երկու սիւներին ամրացրած փոքրիկ օթեակ-  
ների մէջ տեղաւորուած սպիտակազգեստ երկու հրեշ-  
տականման փոքրիկ օրիորդները թարմ ծաղիկներ էին  
ցանում Վեհափառ Հայրապետի շուրջը։ Կամարի տակ  
Վաղարշապատի կողմից աղ ու հաց մատուցեց Վեհին Դ.  
Մուշեղեանը, ապա երեանցիների կողմից Նորին Արբու-  
թեանը ողջունեց Ա. Հասան—Զալալեանը։ Հնչեց «Հրա-  
շափառ» շարականը և թափօրը առաջ անցաւ . . .

Մայր Տաճարում «Ուրախ եղէ ես», Սաղմոսը ասե-  
լուց յետոյ Նորին Արբութիւնը ծնկաչոք և վեղարը վեր-  
ցրած համբուրեց իջման սեղանի խաչը և Աւետարանը։

Ապա Տեղակալ Տ. Գէորգ արքեպիսկոպոսը դիմեց  
Նորին Արբութեանը հետեւեալ խօսքերով.

«Վեհափառ Տէր,

«Այսօր Հայաստանեայց Մայր տաճարիս մէջ կողջու-  
նէ Զեղ ամբողջ Հայ ազգը։ Այսօր սուրբ տաճարիս մէջ  
խորին յարգանօք և ակնածութեամբ կողջունէ Զեր շնոր-  
հաբեր գալուստը Մայր Աթոռոյս միաբանութիւնը։ Վե-  
հափառ Տէր, արիացիր մեծ ասպարէզիդ մէջ, զի չես

միայն, այլ վեհափառութեանդ հետ է ամբողջ ազգը և համայն հոգեորականութիւնը, հաւատացած ենք, որ Դուք լիովին կը պսակէք ազգի յոյսը և ակնկալութիւնը և Ա. Գրիգորի հօտը կը հովուէք և կը սնուցանէք ի վայրի դալարւոյ և առ ջուրս հանգստեան եւ մենք ամենքս միաբերան Միածնաէջ Սուրբ սեղանի առաջ կը մաղթենք առ Բարձրեալն Աստուած, որ պարգևէ Զեզ առաջ և երկար կեանք, ոյժ և կարողութիւն, որ գործէք արդիւնաւոր կերպով ի փառս ազգի և ի պայծառութիւն եկեղեցւոյ,

Նորին Սրբութիւնը պատասխանեց հետեւեալը.

«Ի դիմաց միաբանութեան, Տէր Տեղակալից լսեցի միաբանութեան բարեմաղթութիւնները մեր գալստեան առիթով։ Այդ խօսքերն իրենց մէջ կը պարունակեն Մայր Աթոռի ներկայ տիսուր վիճակը և յիրաւի շատ ցաւեր կան դարմանելու և բուժելու։ Մենք մի սիրտ մի հոգի առած պէտքէ աշխատենք այդ ցաւերը գարմանելու։ Մեր ամենուս սրբազան պարտքն է, որ վառ պահենք Հայաստանեայց սուրբ եկեղեցին։ Մենք սրբազան ուխտ կատարենք, որ սիրենք և գործենք միասին մեր գարաւոր եկեղեցու պայծառութեան համար։ Մենք պէտքէ բարձր մնանք բոլոր կուսակցութիւններից և ծառայենք մի ճշշմարիտ կուսակցութեան՝ այն է Աւետարանին լոյս տարածելու պարտիք յանձն առնելով։

Ես այլ ևս տեղի կունենամ խօսելու ձեզ հետ։ Այժմ կը մաղթեմ ամբողջ միաբանութեանը ոյժ և կարողութիւն, որ միասին ծառայենք Մայր Աթոռին նիւթական և բարոյական շահերի համար։ Աստուածային օրհնութեամբ կօրհնեմ ձեզ և մեր սիրեցեալ հայ հօտին, մաղթելով, որ ամենքս կարողանանք կատարել մեր պարտքը գէպի եկեղեցին և ազգը»։

Նորին Սրբութեանը նոյն շուքով առաջնորդեցին վեհարան։

Երեկոյեան ժամի վեցին ներկայացան վեհափառ Հայրապետին Նոր Բայազիտի պատգամաւորները Խորէն

վարդապետ Մուրատբէգեանի առաջնորդութեամբ, որը  
Նորին Սրբութեանը ողջունեց Նոր Բայազիտի գաւառի  
ազգաբնակութեան կողմից, ապա պատգամաւորներից  
մէկը աւագ ուսուցիչ Պ. Նիկ. Հայրապետեանը մի գեղե-  
ցիկ գրաբառ ճառով ուղջունեց Վեհին Նոր Բայազիտի  
քաջանի ուսուցչութեան և աշակերտութեան կողմից:

Երեկոյեան 7 ժամին Վանքի սեղանատանը ի պատիւ  
Վեհափառի գալստեան ընդհանուր ճաշկերոյթ կար, որին  
մասնակցում էին մոտ 200 հոգի. Նորին Սրբութիւնը  
իրան յօդնած զգալով անկարող եղաւ մասնակցել ճաշ-  
կերոյթին:

Տեղակալ Տ. Գէորգ արքեպիսկոպոսը առաջի բաժակը  
առաջարկեց Նորին Վեհափառութեան կենացը հետեւեալ  
խօսքերով.

«Երկու տարի շաբունակ Մայր Աթոռը զրկուած էր  
իր արժանաւոր Գահակալից Երկու տարի է հայ ժողո-  
վուրդը սրտատրով սպասում էր իր Կաթողիկոսին. Այսօր  
հայ ազգը բաղդ ունի տեմնելու իր արժանաւոր ընտ-  
րեալին, որի վրայ կենդրոնացած է բոլորի յոյսը. Խմենք  
նրա կենացը, օրհնենք նրա կեանքը»

Ամենքը ստքի ելան, բուռն կեցցէները տեղի տուին  
էջմիածինն ի Հօրէ շարականի քաղցրիկ ելեէջներին:

Երկրորդ բաժակը առաջարկեց Տ. Տեղակալը էջ-  
միածնի հաստատութեան և Մայր Աթոռի յարատեռ-  
թեան համար,

Երրորդ բաժակը առաջարկեց աւագագոյն միաբան  
Տ. Մեսրոպ արքեպիսկոպոսը Տ. Տեղակալի կենացը յայտ-  
նելով չնորհակալութիւն, որ Երկու տարի ամենայն բա-  
րեխնձութեամբ կատարեց իր ծանր պարտականութիւն-  
ները. Ապա առաջարկուեցան զանազան կենացներ։

Ճաշկերոյթի վերջում Տ. Աշոտ Եպիսկոպոսը առա-  
ջարկեց կրկին անդամ Վեհի կենացը, Կոմիտաս վարդա-  
պետը երգեց «Տէր կեցո» օրհներգը։

Ճաշկերոյթը վերջացաւ ժամը 9<sup>1</sup>/<sub>2</sub>-ին.

Երեկոյեան մինչև գիշերուայ 1 ժամը վանքի բակում ճրագալոյց կարս Վանքի բակը լցուած էր բազմութեամբ ժողովուրդը ուրախ էր. երգում էին լելէներ և պարում էին ժողովրդական պարեր:

Հետեւալ օրը Յունիսի 29-ին առաւօտեան 9 ժամին Մայր Աթոռի ամբողջ միաբանութիւնը 8. Տեղակալի առաջնորդութեամբ բարձրացան վեհարան և ներկայացան նորին Սրբութեանը:

Վեհափառ Հայրապետը դիմեց նրանց հետեւալ խօսքով.

Պատուական եղբայրներ.

Հայոց ազգին և Հայաստանեայց եկեղեցւոյն արդի կացութիւնը ամենքիդ ծանօթ է. թէ Թուրքիոյ և թէ, մասնաւորապէս Ռուսիոյ, մէջ ազգային եկեղեցական, կըթական կալուածական և այլ խնդիրներ կան ստիպողական կարգադրութեան կարօտ, որոց պաշտօնական զեկը միայն եկեղեցականութեան յանձնուած է.

Գիտէք թէ 1868-էն ի վեր Թուրք Կառավարութիւնը Հայոց Պոլսոյ պատրիարքը ամենայն Հայոց Կաթողիկոսի Փոխանորդ ընդունած է, այն պայմանաւ, որ ի Թուրքիա և ի Ռուսիա հոգեոր գործոց մէջ ամենայն Հայոց Հայրապետական իշխանութեան իրաւունքներն անխախտ պահուին:

Կը յիշէք անշուշտ նաև թէ մեր մէջ վանքերը պատմական մեծ գեր կատարած են. Վանքերը եղած են լուսոյ վառարաններ պատմական և կրօնական թանկագին ձեռագիրներ պատրաստած, պատմութիւններ գրած և տպագրական գործին մղում տուած են, Մենք ևս ամէնուն հանդէս կատարելիք նուիրական պարտականութիւններ ունինք. Մասնաւորապէս պարտաւորութիւն ունինք նկատմամբ արդի կացութեան Մայր Աթոռոյ:

Եթէ խզճի մտօք և համերաշխ ոգով միաբանական սիրով կատարած լինէինք մեր պարտքը, այսօր անտարակոյս Մայր Աթոռոյ վիճակը խիստ տարբեր կացութեան

մը մէջ գըտնուած կըլլար։ իրաց այս ախուր վիճակին և խանգարման վերջերս պատահած կովկասեան գործերու հետեանք կը համարիմ, ճշմարիտ է որ կովկասեան գէպքերը բաւական գործ կատարած են սակայն նոյնպէս ճշմարիտ է, որ նոյն գէպքերէն առաջ ալ Մայր Աթոռոյ կացութիւնը նոյնն ըլլալէ հեռու գտնուած չէ։ Ռւստի մենք պէտք չէ զմեզ խարենք, այս հետեանք է նոյն կացութեան, որ մենք եղած չենք այն վանականներն ինչ որ պէտք էր լինէինք իսկապէս չեմ ուզեր ըսել ի հարկէ ճգնաւորական վանականութիւնը ես հոս կը տեսնեմ, որ միաբանութեան անուան տակ անմիաբանութիւն կայ, բաժան բաժան եղած առանձին կը ճաշէք ու առանձին կը գործէք։ Չեմ գիտեր թէ ասոր ինչ անուն տամ։

կը տեսնենք միաբանութիւնը խումբերու բաժնուած չըսեմ խօսակցութեանց տարբեր ոկզբունքներու կը ծառայէ։ Պէտք է գիտնալ, որ սկզբունքներու տարբերութիւնը աւեր և աւար յառաջ կը բերէ։ Ամենուս նպատակն է օրինապահութեան և կարգապահութեան սահմանին մէջ Հայաստաննեայց եկեղեցւոյ և Հայոց ազգին շահերն և ամենայն Հայոց հայրապետական իշխանութեան իրաւունքները պահել անվթար և պահպանել։ Կարծիքներու ազատութիւն և տարբերութիւն կրնայ լինել, որոնք այն կերպով իրարու հետ շփոթուելու են, որ կեանք ու լոյս սփոռեն։ Որքան ցաւալի է իրաց այս վիճակը այնքան անհրաժեշտ է դարմանը փութացնել։

Հետեապէս մենք, որ յօժար, և աղատ կամքով յանձն առած ենք վանական կեանքը և ուխտած առաջի Աստուծոյ և հաւատացեալ՝ ժողովրդեան, պէտք է վութանք կատարել մեր պարտականութիւնները խղճի մտօք, և գործել միասիստ և միահողի ի բաց թողլով ամէն բաժանում, երկպառակութիւն և նախանձ, այն ատեն միայն օգտակար կրնանք հանգիստանալ Մայր Աթոռոյ, որ ազգին միութեան կենդրունն է։

Ցաւալի է յիշել նոյնպէս, թէ կրօնի ուսումը մեր ծխական, թեմական և պետական վարժարաններու մէջ

ամենեին խնամքով չաւանդուիր և բերանացի ըսելէ անդին չանցնիր։ Որմէ առաջ եկած է այնպիսի տիտուր վիճակ մը, որ հայ ժողովրդեան զաւակները իրր եկեղեցւոյ հարազատ և հաւատարիմ զաւակներ չեն պատրաստուեր, կրօնի և քրիստոնէութեան վսեմ՝ ոգին դառագրքերու մէջ այս ինչ տեղէն այն ինչ տեղը ցոյց տալով և գոց ըրէ ըսելով չկրնար տարածուել մատազ մանուկներու մէջ։ Կրօնի ուսուցիչները պէտքէ Աւետարանի սիրոյ, գթութեան կատարելութեան հոգին ներշնչեն և իրանց անձնական բարի օրինակով երկարու ուսանողներուն վրայ աղդեն և պատրաստեն զանոնք Հայաստանեայց եկեղեցւոյ հարազատ զաւակներ և երկրին համար բարի քաղաքացիներ։

Եկեղեցական բարեկարգութեան խօսքեր և հրատարակութիւններ տեղի ունեցած են և կունենան։ Գիտեմ քրիստոնէութեան թէ պատմական և թէ հաւատոյ էական սկզբունքներու մասին պատմական, գիտութեան և քննութեան առաջ ըերած փաստերը։ Բայց Հայաստանեայց եկեղեցւոյ դաւանաբանական խնդիրներու, որոնք արդէն փակուած են, չենք կրնար դիպչել երբէք. հակառակ ուարագային եկեղեցւոյն մէջ քաւոսային դրութիւն մը յառաջ կուդայ և եկեղեցին կը պառակտի ու Հայաստանեայց եկեղեցւոյ շահերը և իրաւունքները բարոյապէս կը վտանգուին։ Ծխական և այլ խնդրոց բարեփոխութեան մասին հարկ եղածն ալ Հայաստանեայց եկեղեցւոյ և Հայոց աղդին ամբողջութեան հաւանութեամբ և որոշմամբ միայն կարելի է ինկատ առնել և տնօրէնութիւն մը ընել։

Մեր ամբողջ ճանապարհորդութեան միջոցին, ոկուեալ Օդեսայէն, ուր որ գնացինք առանց մանիշակագոյն փիլոնի, առանց լանջախաչի, առանց կամբիլաւկայի քահանայ չը տեսանք. Դուք կրնանք վկայել թէ ասոնք ամենքն ալ արժանաւորներ են. չեմ կարծեր։ Այս ընթացքը պարզապէս քահանայութիւնը սնափառութեան մզել և տնարժանները քաջալերել ըսել է։ Հոգեռոր իշխանութիւնը ինչ տստիճանի մէջ ալ լինի, պատասխանառու է այս վիճա-

կին, Քահանաներէն քաղմաշխատ ծառայութեամբ վաստակաւորները միայն կրնան արժանի ըլլալ նման վարձատրութեանց, Այստեղ ամեն քահանայ աւագերէց է, սակայն աւագ քահանայութիւնը վարձատրութիւն չէ, այլ եկեղեցւոյ մէջ պատասխանատու պաշտօն:

Հարք և եղբարք, ամենայն Հայոց Հայրապետական ծանր պաշտօնին և պարտականութեանց հետ ունինք և Ռուսիոյ սահմանին մէջ կրթական մեծ հարցը, Մէկ կողմէ թեմական և ծխական դպրոցներու կանոնադրական խնդիրները, իսկ միւս կողմանէ նիւթապէս անբաւական դպրոցներու օգնութեան հասնելու պէտքը:

Ունինք մեր առջև Մայր Աթոռոյ և վիճակային կալուածական խնդիրներու կարգադրութեան ծանր հարցը ևս, Դուք գիտէք թէ կալուածներու արդիւնաւորման խնդիրը զարդիս ի՞նչ վիճակի մէջ կը գտնուի ընդհանրապէս, Գիտէք նաև մասնաւորապէս Մայր Աթոռոյ կալուածական մատակարարութեան և հասոյթից գանձման և ծախուց կացութիւնը, Գիտէք արդէն թէ, որոնք թերացած են այդ գործերուն մէջ: Առաջնորդներ կան, որոնք երկար տարիներ աթոռապատկան հասոյթները վճարելու բարեյօժարութիւնը չեն ունեցած, Նիւթական տեսակէտով ազգին վստահութիւնը ապահովելու համար, անհրաժեշտ հարկ է ամեն տարի առաջնորդական բոլոր թեմերի և Մայր Աթոռոյ ելեմտական գործողութեանց հաշիւները ներկայացնել ազգին ի գիտութիւն և ի կը շուդատութիւն:

Այս կամայականութեանց վերջ տալու համար, հարկանհրաժեշտ է, որ իւրաքանչիւր եկեղեցի ունենայ իր մտից և ելից նախահաշիւը, ինչպէս և պէտք է ունենայ և Մայր Աթոռոն իր յատուկ ելեմտական ընդհանուր բիւդչէն, որ պիտի բազկանայ Գէորգեան ծեմարանի, Թանգարանի, Տպարանի, միաբանութեան անունդին, խնամքին ու դարմանի, գրական պիտոյքի և այլ մասնաւոր բիւդչեներէն:

Մայր Աթոռի ելեմուտքը պէտքէ այնպիսի իմաս-

առւթեամբ տնտեսելու որ կարելի լինի թէ Հայրապետական իշխանութիւնը իր բարձրութեան մէջ պահել. թէ Մայր Աթոռոյ վերև յիշուած անհրաժեշտ պէտքերը հոգալ և թէ, եթէ կարելի է, բան մ' ալ աւելանայ աղքատիկ դպրոցներուն օգնելու համար:

Մեր ճամբորդութեան մէջ ուր որ հանդիպեցանք, նոյն հարցը գտանք, դպրոց կուզեն և օգնութիւն կը խնդրեն. Ծաղկեայ փիլոնը ուսին առած և խաչը կրծքին կախած քահանայ մը, պոռոտախօս ուղերձով մը իրենց աղքատիկ դպրոցին օգնութիւն կը խնդրէր, կըսուի իւրովի, եթէ այդ քահանան ծաղկեայ փիլոն և խաչ ստանալու համար տուած աշխատանքը, դպրոցին կարօտութիւնը բառնալու ընծայէր, անտարակոյս քանի մի բուքլի ձեռք կրնար բերել և իր ներկայացուցած օժանդակութեան պէտք չէր մնար այլ ևս.

Հիմա պիտի ըսէք թէ, խոշոր խոշոր կը խօսիք և մեր վրայ ծանր պարտականութիւններ կը դնէք, հապա Զեր պարտականութիւնները ի՞նչ են: Հարկ չկայ պարզելու թէ իրրև ուխտագիր բարձրագոյն պաշտօնեայ Հայաստանեայց եկեղեցւոյ առ Աստուած, իրմւ ամենայն Հայոց Հայրապետ առ ազգն և իբրև Ռուսիոյ հայ եկեղեցական գործոց վարիչ առ Պետութիւնը, ծանր պարտականութիւններ և պատասխանատուութիւններ ունիմ:

Ամենայն Հայոց Հայրապետն ընտրել և վեհարանի մէկ անկիւնը շպրտելով կը կարծէք թէ նա բազմահոգ պարտականութիւնները կրնայ կատարել. ինքզինքնիս չը խաբենք, անկարելի է այդ: Աղքն համօքէն և հայ ամբողջ հոգեորականութիւնն պարտին աջակից գտնուիլ և օգնել Հայոց Հայրապետին ընդհանրապէս իսկ մասնաւրապէս Մայր Աթոռոյ միաբանական ուխտգ, իրրև ամենայն Հայոց Հայրապետին անմիջապէս մերձաւոր, պարտի ամեն անհամաձայնութիւն, հակառակութիւն, նախանձ և այլն ի բաց թողլով միասիրտ ու միահոգի և համերաշխութեամբ աջակցել Հայոց Հայրապետին և կատարել իր պարտականութիւններն օրինապահութեան, պարտաճա-

առւթեամբ տնտեսելու որ կարելի լինի թէ Հայրապետական իշխանութիւնը իր բարձրութեան մէջ պահել. թէ Մայր Աթոռոյ վերև յիշուած անհրաժեշտ պէտքերը հոգալ և թէ, եթէ կարելի է, բան մ' ալ աւելանայ աղքատիկ դպրոցներուն օգնելու համար:

Մեր ճամբորդութեան մէջ ուր որ հանդիպեցանք, նոյն հարցը գտանք, դպրոց կուզեն և օգնութիւն կը խնդրեն. Ծաղկեայ փիլոնը ուսին առած և խաչը կրծքին կախած քահանայ մը, պոռոտախօս ուղերձով մը իրենց աղքատիկ դպրոցին օգնութիւն կը խնդրէր, կըսուի իւրովի, եթէ այդ քահանան ծաղկեայ փիլոն և խաչ ստանալու համար տուած աշխատանքը, դպրոցին կարօտութիւնը բառնալու ընծայէր, անտարակոյս քանի մի բուքլի ձեռք կրնար բերել և իր ներկայացուցած օժանդակութեան պէտք չէր մնար այլ ևս.

Հիմա պիտի ըսէք թէ, խոշոր խոշոր կը խօսիք և մեր վրայ ծանր պարտականութիւններ կը դնէք, հապա Զեր պարտականութիւնները ի՞նչ են: Հարկ չկայ պարզելու թէ իրրև ուխտագիր բարձրագոյն պաշտօնեայ Հայաստանեայց եկեղեցւոյ առ Աստուած, իրրև ամենայն Հայոց Հայրապետ առ ազգն և իբրև Ռուսիոյ հայ եկեղեցական գործոց վարիչ առ Պետութիւնը, ծանր պարտականութիւններ և պատասխանատուութիւններ ունիմ:

Ամենայն Հայոց Հայրապետն ընտրել և վեհարանի մէկ անկիւնը շպրտելով կը կարծէք թէ նա բազմահոգ պարտականութիւնները կրնայ կատարել. ինքզինքնիս չը խաբենք, անկարելի է այդ: Աղքն համօքէն և հայ ամբողջ հոգեորականութիւնն պարտին աջակից գտնուիլ և օգնել Հայոց Հայրապետին ընդհանրապէս իսկ մասնաւրապէս Մայր Աթոռոյ միաբանական ուխտգ, իրրև ամենայն Հայոց Հայրապետին անմիջապէս մերձաւոր, պարտի ամեն անհամաձայնութիւն, հակառակութիւն, նախանձ և այլն ի բաց թողլով միասիրտ ու միահոգի և համերաշխութեամբ աջակցել Հայոց Հայրապետին և կատարել իր պարտականութիւններն օրինապահութեան, պարտաճա-

Հրաւիրուելու առթիւ, մեր հետեած ուղղութեան վրայ օրպէսզի տեղեկութիւն ունենաք կը կարդամ այն գրութիւնը՝ որ Պօլսոյ Ռուսաց պարոն գեսպանին յղեցի։

(Նորին Սրբութիւնը կարդում է հետեւեալ գրութիւնն որը կարդացել էր նաև Պօլսում Երեսփոխանական ժողովի նիստին,)

### Վաեմափայլ Դեսպան։

Զեր վաեմութիւնը կը ծանուցանէ ինձ թէ Ռուսիոյ Վեհափառ Յարը բարեհաճած է զիս արտօնել Մայիսի վերջերը գտնուելու ի Ս. Պետերբուրգ, ուր զիս ընդունելու ամենամեծ պատիւը պիտի ընծայէ ինձ, Էջմիածին մեկնելէս առաջ։ Խորապէս համակուած եմ Կայսերական այս շնորհին համար, որ կը լնու զիս ուրախութեամբ այդ շնորհը պիտի ընծայէ ինձ մանաւանդ առիթը, յՈտս նորին Կայսերական Մեծութեան գահոյից մատուցանելու ամենաջերմ մաղթանքներս՝ իւր արեշատութեան պահապանութեան համար և անձնապէս արտայայտելու իմ երախտագիտական զգացումներս Կաթուղիկոսական ընտրութեանս վաւերացմանն համար։

Զեր վաեմութեան ծանօթ է սակայն, թէ Հայաստանեայց եկեղեցւոյ գարաւոր կանոնաց և աւանդութեանց համաձայն՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի Աթոռոյն Գահակալին ընտրութիւնը այն ատեն միայն իր վերջնական հաստատութիւնն կստանայ երբ վերջ գտնէ իր օծումը Էջմիածնայ Մայր Տաճարին մէջ, ինչ որ տեղի կունենայ միաբանութեան կողմէ զրկուած մասնաւոր պատգամաւորութեան մը Հրաւէրին վրայ։

Հակառակ այս յարմար առիթէն օգտուելու բուռն բաղձանացս, հնարաւոր չպիտի ըլլայ ուրեմն ինձ, վաեմափայլ Դեսպան, ներկայանալու նորին Կայսերական Մեծութեան, Հայաստանեայց եկեղեցւոյ Մայրագոյն Պատրիարքի հանգամանօք։ Հաւաստի եմ արդէն թէ նորին Կայսերական Մեծութիւնը պիտի բարեհաճի գնահատել Հայաստանեայց եկեղեցւոյ կանոնաց և աւանդութեանց մասին ունեցած հաւատարմութիւնս, որուն (Հայաստ-

եկեղեցւոյ) պահպանութիւնը վատահացած է իմ տկար ձեռքերուն:

Այսու հանգերձ, իրապէս բարեբախտ և մեծապէս պատուած պիտի ըլլամ՝ ներկայացնելով Ծուսաց Օգոստափառ Կայսեր իմ ամենախորին յարդանքներս, եթէ ներուի ինձ այն անպաշտօն հանգամանօք կատարել, ընդուում տակաւին չեմ ընդունուած Կաթուղիկոսական օծումը:

Կը համարձակիմ ուրեմն խնդրել, Վաեմափայլ Տէր, որ բարեհաճիք այս խոնարհ տեսութիւններս դնել յ՛նտա Կայսերական գահոյից, բոլորանուէր հաւաստելով Նորին Վեհափառութիւն Յարը կատարեալ հնազանդութեանս և ամենախորին անձնուիրութեանս մասին:

Գալով իմ Ա. Պետերբուրգ մեկնելու որոշ թուականին, թէպէտե շատ մ' անպատեհութիւններ կան առ այն, սակայն կը խոստանամ Զեր վսեմութեան պատրաստ գըտնուել Մայիսի վերջերը:

Հաճեցէք ուրեմն կարեօր հրահանգներն տալ ելմիածնայ Աթոռոյն Տեղակալին ի մասին պատգամաւորութեան մը առաջման, որ Հայաստանեայց եկեղեցւոյ ծիստից համաձայն, պարտի գալ հոս ճանապարհորդութեանս միջոցին ինձ ուղեկցելու համար:

Հայցելով Զեր համար երկնային օրհնութիւններ, պատիւ ունիմ' լինել, Վաեմափայլ դեսպան, ամենախորին յարդանօք՝

Զեր Վաեմութեան  
ամենահնազանդ և անձնուէր ժառայ  
Մաքրէս արքապիսկոպոս Խզմիրլեան

Ապա Նորին Վեհափառութիւնը կարդաց իր պատասխան ճառը Թագաւոր Կայսեր, որը արդէն իր տեղում տպագրուած է:

Ընթերցանութիւնը վերջացնելուց յետոյ Նորին Վեհափառութիւնը շարունակեց.

կը տեսնէք թէ մեր ուղղութիւնն է միշտ բարձր մնալ ամեն կուսակցութենէ։ Մենք ինչպէս երէկ ո. Տաճառ թիւն մէջ յայտարարեցինք մէկ ուղղութիւն և մէկ կուսակցութիւն ունինք, այն միայն Ս. Աւետարանն է։ Ս.յու եղանակով միայն կրնանք մեր նուիրական կոչման բարձրութեան վրայ մնալ Արդ, հարք իմ և եղրարք, այդ նուիրական ժամն հասուծ է։ Մէկդի թողունք ամեն անձնականութիւն, մոռնանք անցեալ ամեն բան և այստեղ իրար սիրոյ համբոյր տալով՝ ըլլանք Մայր Աթոռոյ իսկական միաբաններ ու միացած ուժերով և օրինապահութեամբ ծառայենք Հայաստանեայց եկեղեցւոյ, Ազգին և Պետութեան։

Հաւատացած եմ, որ ի նկատ առնելով երկրին տիրող օրէնքը և ազգին տխուր վիճակը, խղճմտօրէն պիտի աշխատիք, որպէսզի հետզհետէ յաջողենք կարգադրել մեր առջեւ ելած բոլոր խաթարեալ գործերը և լաւ վիճակ մը յառաջ բերել։

Խորապէս զգացուած մեր Օգոստափառ Վեհապետին ընդունելութենէն և բարեացակամ վերաբերմունքն գէպի Մեղ, որ խիստ միիթարական և քաջալերիչ եղաւ, կը փութամ միաբանական պատուական ուստիդ առջեւ յայտարարել իմ խորին շնորհակալութիւնը և խնդրել, որ Բարձրեալն Աստուած պահպանէ անսասան նորին Մեծութիւն մեր Թագաւոր Կայսրն, Օգոստափառ Թագուհի Կայսրուհին, Գահաժառանդ Ալէքսէյ Մեծ իշխանն և Կայսերական ամբողջ Գերդաստանը։

Ըսդունի Աստուած մեր մազթանքները՝ պահէ մեզ շարէն և յաջողէ մեզ ըստ իր կամաց գործելու... ամէնու։

Ապա Տեղակալ Տ. Գէորգ արքապիսկոպոս Սուրէննեանը ներկայացրեց Վեհին Ս. Էջմիածնայ միաբաններին, որոնք ըստ աւագութեան մօտենալով համբուրեցին նորին Սրբութեան Ս. Աջը և քաղցր տպաւորութեամբ և գոհ սրտով գուրս եկան վեհաբանից Տ. Տեղակալի առաջնորդութեամբ։ Այնուհետև Վեհափառ Հայրապետին ներկայացան Սինօդի ծառայողները պրոկուրորի առաջնոր-

դութեամբ, Երևանի քահանաները, ձեմարանի ժամանակաւոր տեսուչը, Վաղարշապատի և Իգդիրի քահանաները, Օշականի, Աբարանի և Աշտարակի ներկայացուցիչները և բազմաթիւ ուխտաւորներ։

---

Տալով Վեհափառ Հայրապետի ուղեորութեան համառօտ նկարագիրը, լի յոյսերով մնում է մեզ սպասել իրագործմանը այն իղձերի և ցանկութիւնների, որ ամենուրեք յայտնւում եին ուղերձների և ճառերի մէջ և որ նորին Սրբութիւնը շեշտում էր իւր պատասխանների մէջ։

